Այս տեղ սխեմատեխնիկական նախագծում ասելով պայմանականորեն հասկացվում են ֆիզիկական նախագծմանը նախորդող բոլոր նախագայիս փուլերը: Ժամանակային սահմանափակումների տեսանկյունից նախաֆիզիկական ստուգումը ենթադրում է ժամանակային պարամետրերի ստուգում՝ հաշվի առնելով միայն սխեմայի մեջ մտնող տարրերի հապաղումները, իսկ հետֆիզիկական ստուգման դեպքում հաշվի են առնվում նաև միջմիացումների հապաղումները: Անհրաժեշտ է նշել, որ ֆիզիկական նախագծման փուլը ներառում է մի քանի համեմատաբար ինքնուրույն ենթափուլերի հաջորդական լուծումներ, որոնց արդյունքում էլ ձևավորվում են միջմիացումների երկրաչափական կառուցվածքները, երկարությունները և դրանցով պայմանավորված՝ ժամանակային պարամետրերը:

Ստորև դիտարկված է ֆիզիկական նախագծման տարբեր փուլերի ազդեցությունը միջմիացումների ժամանակային պարամետրերի ձևավորման վրա [14, 15, 52, 72]:

Ժամանակային գործոնի տեսանկյունից ֆիզիկական նախագծման բոլոր փուլերը միտված են վերջին՝ ծրագծման փուլում ավելի արագագործ (փոքր հապաղումներով) կառուցվածքների ստացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Մասնատման փուլի նպատակը սխեմայի ֆունկցիոնալ, տրամաբանական և ըստ տակտավորման խմբավորումն է այնպես, որ՝ ա) միևնույն մասում հայտնվեն ֆունկցիոնալ տեսակետից իրար հետ կապված տարրեր, բ) տարբեր մասերի միջև կապվածությունը լինի թույլ [13, 14, 47]: Ժամանակային գործոնի տեսանկյունից սա նշանակում է, որ առավել կարևոր շղթաները, որոնք ընկած են որոշիչ ուղիների վրա, մեծ մասամբ կհայտնվեն ֆունկցիոնալ հանգույցների ներսում, և



հետևաբար՝ հնարավորություն կստեղծվի դրանց  
ավելի սեղմ ֆիզիկական իրագործման համար, որը, իր  
հերթին, կնպաստի դրանցում ազդանշանի  
համեմատաբար փոքր հապաղումներին ապահովմանը:

Հատակագծման փուլում կատարվում է Մ/Ե  
բջիջների և սնուցման դողերի կազմակերպում,  
մտավոր սեփականության բլոկների տեղաբաշխում և  
հետագա տեղաբաշխման տարածքների  
նախապատրաստում [13, 14, 15] այնպես, որ ապահովվի  
կիսահաղորդչային բյուրեղի մակերեսի  
առավելագույն օգտագործումը՝ միաժամանակ  
բավարարելով նախագծային սամանափակումները:  
Այս փուլում ժամանակային գործոնը հաշվի է  
առնվում երկու տեսանկյուններով՝

- մտավոր սեփականության բլոկների  
տեղաբաշխում այն Մ/Ե բջիջներին մոտ  
տեղամասերում, որոնք հանդիսանում են  
ելուստներով չափավոր բլոկի համար,
- մտավոր սեփականության բլոկների  
տեղաբաշխում՝ հաշվի առնելով դրանց միջև  
էլեկտրական կապվածությունները:

Երկու դեպքում է նվազարկվում են  
արագագործության տեսակետից առավել  
վտանգավոր միջբլոկային կապերի  
երկարությունները, հետևաբար նաև դրանցում  
ազդանշանի հապաղումները:

Ինչպես արդեն նշվել է 13. - ում, հիմնականում  
տեղաբաշխման արդյունքներից են կախված  
ծրագծման հաջողությունը և ֆիզիկական  
կառուցվածքը: Հետևաբար՝ ժամանակային գործոնի  
տեսանկյունից տեղաբաշխումը մեծապես ազդում է  
հաջորդ՝ ծրագծման փուլում ինչպես առավել կարճ և  
փոքր հապաղումներով միջմիացումների ստացման,  
այնպես էլ միջմիացումների այնպիսի  
կառուցվածքի ստացման վրա, որը կապահովի

աղմուկներին ցածր մակարդակ: Սխեմայի արագագործունեյան ապահովման նպատակով անհրաժեշտունեյուն է առաջանում սխեմայի մուտքեր - ելքեր որոշիչ ուղիների վրա գտնվող տարրերի հնարավորիսս իրար ավելի մոտ տեղաբաշխման, ինչը կապահովի այդ ուղիներում ազդանշանի հապաղման ցածր արժեքներ:

Ծրագծման նպատակն է միջմիացումների երկրաչափական տեղերի, ձևերի և չափսերի որոշումը: Խնդիրն է միջմիացումների ծրագծման այնպիսի հերթականունեյուն և կառուցվածքի ստացումը, որը կապահովի ֆիզիկական նախագծով պայմանավորված սխեմայի էլեկտրական պարամետրերի նվազագույն շեղում սխեմատեխնիկական նախագծով պայմանավորված նունեյուն պարամետրերի արժեքներից: Ծրագծումը կատարվում է 2 փուլով՝ գլոբալ (նախնական) [73-78] և մանրամասն (վերջնական) [79-82]: Գլոբալ ծրագծման խնդիրը միջմիացումների գլոբալ բաշխումն է՝ ըստ դրա համար նախատեսված կապուղիների և միջմիացումների ծրագծման այնպիսի հերթականունեյուն սահմանման, որ նախորդող միջմիացումներն առավել քիչ խանգարեն հաջորդողների ծրագծմանը: Մանրամասն ծրագծման խնդիրն է յունրաքանչյունր միջմիացման ճշգրիտ ծրագծի որոշումը: Ժամանակային գործոնի տեսանկյունից ավելի կարևորվում է գլոբալ ծրագծումը, քանի որ առավել երկար և մեծ հապաղում ունեցող միջմիացումները որոշվում են այդ ժամանակ: Ընդհանունր առմամբ անհրաժեշտ է, որ որոշիչ և դրան մոտ ուղիների վրա ընկած շղթաներին պատկանող միջմիացումները ծրագծվեն առաջնահերթ, որը կապահովի դրանց առավել փոքր երկարունեյունները և, հետևաբար, ավելի փոքր հապաղումները: Բնականաբար, սա կարող է

հանգեցվել ավելի ուշ ծրագծվող ոչ որոշիչ  
ուղիների վրա ընկած շղթաների  
երկարությունների անհարկի աճին, ինչը կարող է  
մեծացնել միջմիացումների գումարային  
երկարությունը, ինչպես նաև առաջացնել նոր  
որոշիչ ուղիներ:


Ինչպես արդեն նշվել է առաջին գլխում,  
ժամանակակից ենթամիկրոնային ԻՍ-ներում  
ազդանշանի հապաղումները միջմիացումներում  
գերակայում են տարրերի հապաղումների համեմատ:  
Ասվածից արդեն պարզ է, որ ինտեգրման աստիճանի  
աճին զուգընթաց, մի կողմից՝ աճում է ֆիզիկական  
կառուցվածքի ազդեցությունը ԻՍ-ի  
արագագործության վրա, իսկ մյուս կողմից՝  
մեծանում է ֆիզիկական նախագծման մեթոդների  
դերն ու նշանակությունը արագագործության վրա  
ազդելու տեսանկյունից:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարելի է  
եզրակացնել .

- Ենթամիկրոնային թվային ԻՍ-երի ֆիզիկական  
նախագծման երթուղու բոլոր փուլերում  
կարևորվում է արագագործության ապահովման  
անհրաժեշտությունը:
- Քանի որ մի կողմից՝ ֆիզիկական նախագծման  
փուլում արագագործության ապահովման  
հիմնական միջոցը միջմիացումներում առկա  
հապաղումների նվազեցումն է, իսկ մյուս  
կողմից՝ ժամանակակից ծրագծման  
գործիքամիջոցները մեծապես հիմնված են նման  
ալգորիթմների վրա, ապախիստ կարևորվում է  
տեղաբաշխման փուլը, որը կարող էլ ավմեկնարկ  
ապահովել հետագա ծրագծման համար:

## **2.2. Թվային ինտեգրալ սխեմաների արագագործության և տոպոլոգիայի կապը**

Հաջորդական թվային սխեմաներում տեղեկատվության մշակման ընդհանրացված ուղին կարելի է ներկայացնել համակցական և հիշողության սխեմաների հաջորդականությամբ: Հաջորդական սխեմայի աշխատանքի ժամանակ համակցականները փոխարկում են տվյալները որոշակի տրամաբանական կախվածությամբ, իսկ հիշողության սխեման այն ընդունում է անցողիկ գործընթացների ավարտից հետո: Համակցական սխեմաներում գոյություն ունեն մուտքերից մինչև ելքեր տարբեր ուղիներ, որոնք կարող են ունենալ տարբեր հապաղումներ: Հաջորդական



սխեմաներում ազդանշանների ժամանակային «մրցություն» վերացման հիմնական մեթոդը դրանց համաժամանակացումն է: Համաժամանակացումն իրականացվում է սինքրոզացիայի (ՍԳ), որի ազդանշանները տրվում են հիշողության սխեմաներին (ՀՐ), որոնք, իրենց հերթին, տեղադրված են համակցական սխեմաների (ՀԿՍ) միջև և թույլատրում են տվյալների ընդունումը դրանցով [83, 84] (նկ. 2.3):


Նկ. 2.3. Տեղեկունյթի մշակումը թվային հաջորդական սխեմայում

Այսպիսով, սխեմայի արագագործությունը որոշվում է սինքրոզացիայի տրվող

սիսթրոնիմպոլլսնէրի պարբերութեամբ, որն էլ, իր հերթին, պայմանավորված է համակցական սխեմաների մուտք-ելք ուղիներում ազդանշանների առավելագույն հապաղումներով [13, 15, 83, 84]: Սակայն համակցական սխեմաների բոլոր մուտք-ելք ուղիների լրիվ համաձայնեցմանը հասնելը գործնականում անհնարին է: Գոյություն ունեն համակցական սխեմաների սկզբնական մուտքերից մինչև ելքեր ազդանշանի թույլատրելի հապաղման ( $T_r$ ) ներքին ( $T_\Theta$ ) և վերին ( $T_H$ ) սահմաններ, որոնց միջակայքում սխեման ճիշտե գործում:

$$T_\Theta \leq T_r \leq T_H: \quad (2.1)$$

Նկ. 2.4-ում բերված է սիսթրոնազդանշանի ժամանակային դիագրամը՝ համակցական սխեմայի սկզբնական մուտքերից մինչև ելքեր թույլատրելի հապաղման ներքին և վերին սահմանների նշմամբ:



Նկ. 2.4. Սիսթրոնազդանշանի ժամանակային դիագրամը

Թույլատրելի հապաղման ներքին սահմանը որոշվում է հիշողության սխեմայի հոլսալի փոխանջատման նվազագույն ժամանակով ( $\Delta_1$ ), որը, իր հերթին, բնութագրվում է հիշողության սխեմայի փոխանջատման նվազագույն ժամանակով և սիսթրոնիմպոլլսնէրի ընդունման հնարավոր պահերի ցրվածքով: Թույլատրելի հապաղման վերին սահմանը որոշվում է հիշողության սխեմայի հոլսալի փոխանջատման առավելագույն ժամանակով ( $\Delta_2$ ), և սիսթրոնիմպոլլսնէրի  $T_{uj}$  պարբերությամբ:

Հիշողությունը սխեմայի հոլսալի փոխանջատման ժամանակը կախված է ՀԿՍ-ի պարամետրերից և որոշվում է տվյալ սարքում օգտագործվող հիշողության սխեմայով, և հաստատուն է հիշողության տարրի որոշակի տեսակի դեպքում: Այսպիսով, պարբերական հաճախության սինքրոնիզմը և, հետևաբար, հաջորդական սխեմայի ընդհանուր արագագործությունը, որոշվում են այդ սխեմայի համակցական մասերի  $T_3$  և  $T_H$  արժեքներով: Հետևաբար, սխեմայի արագագործության մեծացման համար պետք է հնարավորինս կրճատել սինքրոնիզմի տևողությունը ( $T_H$ )՝ առանց  $T_H$ -ի մեծացման: Այդ տեսակետից համակցական սխեմաների բոլոր մուտք-ելք ուղիներին համար հապաղման նույնականությունը կլինեք ցանկալի: Որևէ ուղիներով պայմանավորված համակարգային արագագործությունը որոշվում է դրանում առկա տարրերի և միջմիացումների գումարային հապաղմամբ՝

$$T_{\text{համ}} = T_m + T_{\text{մի}}, \quad (2.2)$$

որտեղ  $T_h$ ,  $T_m$  և  $T_{\text{մի}}$  - ն համապատասխանաբար ամբողջական ուղու, տարրերի և միջմիացումների հապաղումներն են:

Սխեմայի մուտքեր-ելքեր յուրաքանչյուր ուղու համար համակարգային հապաղման ժամանակը կբնութագրի տվյալ ուղով ազդանշանի տարածման հապաղման ընդհանուր ժամանակը, որն իր հերթին կորոշվի այդ ուղու վրա ընկած բոլոր տարրերի  $T_m$  և դրանք իրար կապող միջմիացումների  $T_{\text{մի}}$  գումարային հապաղմամբ: Ամբողջական համակցական սխեմայի համար համակարգային հապաղումը

կորոշվի տվյալ սխեմայի որոշիչ ուղու համակարգային հապաղմամբ:

Ինչպես արդեն նշվել է, տեխնոլոգիական չափերի փոքրացմանը և ԻՍ-ի ինտեգրացման մեծացմանը զուգընթաց՝ աճում է միջմիացումներում ազդանշանների հապաղման մասնաբաժինը և ժամանակակից ԻՍ-ներում կարող է հասնել ազդանշանի ընդհանուր հապաղման 80-90% -ին: Յետևաբար՝ գնալով ավելի է կարևորվում միջմիացումներում հապաղումների դերը համակարգի հապաղման գնահատման ժամանակ:

Եթե ուղիների  $T_{\text{Յ}}$  և  $T_{\text{Ի}}$  ընդհանուր հապաղումներից հանվի տարրերի հապաղումներով պայմանավորված մասնաբաժինը, ապա միայն միջմիացումներով պայմանավորված մուտքից ելք ազդանշանի հապաղման սահմանները կլինեն՝

$$T_{\text{Յ}}^{\text{կազմ}}, T_{\text{Ի}}^{\text{կազմ}}, T_{\text{Ի}}^{\text{կազմ}}, \quad (2.3)$$

որտեղ  $T_{\text{Յ}}^{\text{կազմ}}$ ,  $T_{\text{Ի}}^{\text{կազմ}}$  և  $T_{\text{Ի}}^{\text{կազմ}}$  համապատասխանաբար ՅԿՍ-ի մուտքից ելք միջմիացումներով պայմանավորված հապաղման ներքին, վերին և թույլատրելի մեծություններն են:


Եթե որոշակի տարրային հենքի ընտրության և այդ հենքի վրա տրամաբանական սինթեզի արդյունքում տարրերի հապաղումները դառնում են հայտնի, ապա որոշակի տեխնոլոգիայի դեպքում միջմիացումներում հապաղումը հիմնականում կախված կլինի դրանց երկարություններից: Վերջինս, իր հերթին, որոշվում է ֆիզիկական նախագծման արդյունքում, այսինքն՝ ծրագրումից հետո: Սակայն եթե հաշվի առնվի այն հանգամանքը, որ ծրագրման արդյունքը մեծ մասամբ կախված է տարրերի տեղաբաշխման արդյունքից, ապա ակնհայտ է դառնում տարրերի տեղաբաշխման խնդրի լուծման փուլում ապագա միջմիացումներում

հ ապ աղ ու մ ն եր ը հ աշ վ ի առ ն ե լ ու  
ան հ ր աժ ե շ տ ու թ յ ու ն ը: Այ ս տեղ ե ն թ ադ ր վ ու մ է , ո ր  
տեղ աբ աշ խ վ ած տ առ ր եր ի մ ի ջ և մ ե ծ տ ոպ ո լ ո գ ի կ ա կ ան  
հ եռ ա վ ո թ ու թ յ ու ն ն եր ի ն կ հ ա մ ապ ա տ ա ս խ ան ե ն  
առ ա վ ե լ եր կ ար մ ի ջ մ ի ա գ ու մ ն եր և , հ ե տ և աբ ար , մ ե ծ  
հ ապ աղ ու մ ն եր և հ ա կ առ ա կ ը: Այ ս խ ն դ ի ր ը  
գ ր ա կ ան ու թ յ ան մ ե ջ ան վ ան վ ու մ է “ժ ա մ ան ա կ ո վ  
ու ղ ղ ո թ դ վ ած տեղ աբ աշ խ ու մ ” [12-14, 52]: Ե Ն Ա գ ոյ ու թ յ ու ն  
ու ն ե գ ող հ ա մ ա կ ար գ եր ու մ , ո ր պ ե ս կ ան ո ն , այ ն  
լ ու ծ վ ու մ է ն ա խ ա գ ծ վ ող ս խ ե մ այ ի մ ու տ ք -ե լ ք  
ո թ ո շ ի չ ու ղ ի ն եր ի ժ ա մ ան ա կ այ ի ն վ եր լ ու ծ ու թ յ ան և  
այ դ ու ղ ի ն եր ու մ հ ապ աղ ու մ ն եր ի ն վ ա գ ար կ մ ան  
ու ղ ո վ [15]: Այ ս դ ե պ թ ու մ , ո ր պ ե ս կ ան ո ն ,  
օ գ տ ա գ ո թ վ ու մ ե ն տեղ աբ աշ խ մ ան ք ա գ մ ա կ ր կ ն ա կ ի  
ա լ գ ո թ ի թ մ ն եր , ո թ ո ն ք հ ի մ ն վ ած ե ն ո թ և է ն ա խ ն ա կ ան  
տեղ աբ աշ խ մ ան ք ա գ մ ա կ ր կ ն ա կ ի փ ո խ ա ր կ ու մ ն եր ի վ ր ա,  
ո թ ն ու ղ ղ վ ած է ո թ ո շ ի չ ու ղ ի ն եր ի վ ր ա գ տ ն վ ող  
տ առ ր եր ի ն ա խ ն ա կ ան տեղ աբ աշ խ մ ան այ ն պ ի ս ի  
վ եր ա տեղ աբ աշ խ ու մ ն եր ի ն , ո թ ո ն ք կ հ ան գ ե գ ն ե ն այ դ  
ու ղ ի ն եր ի հ ապ աղ ու մ ն եր ի կ թ ճ ա տ մ ան ը:  
Բ ա գ մ ա կ ր կ ն ա կ ի ա լ գ ո թ ի թ մ ն եր ի հ ի մ ն ա կ ան  
թ եր ու թ յ ու ն ը մ ե ք ե ն այ ա կ ան մ ե ծ ժ ա մ ան ա կ ն է և  
կ ա խ վ ած ու թ յ ու ն ը տ առ ր եր ի ն ա խ ն ա կ ան  
տեղ աբ աշ խ մ ան ո ր ա կ ի գ : Ն ա խ ն ա կ ան տեղ աբ աշ խ մ ան  
ա լ գ ո թ ի թ մ ն եր ը , ի թ ե ն գ հ եր թ ի ն , հ ի մ ն վ ած ե ն  
տ առ ր եր ը մ ի ա գ ն ող առ ան ձ ի ն շ ղ թ ան եր ի  
ժ ա մ ան ա կ այ ի ն պ ար ա մ ե տր եր ը հ աշ վ ի առ ն մ ե լ ու վ ր ա:  
Այ ս պ ի ս ո վ , ո թ ո շ ի չ ու ղ ի ն եր ի ո թ ո շ մ ան և դ ր ա ն գ  
ժ ա մ ան ա կ այ ի ն վ եր լ ու ծ ու թ յ ան հ ե տ մ ի ա ժ ա մ ան ա կ  
կ ար և ո թ խ ն դ ի թ է դ առ ն ու մ ն ա ն առ ան ձ ի ն շ ղ թ ան եր ու մ  
հ ապ աղ ու մ ն եր ի այ ն պ ի ս ի թ ու յ լ ա տր ե լ ի  
ս ա հ մ ան ն եր ի ո թ ո շ ու մ ը , ո թ ո ն ք չ ե ն հ ան գ ե գ ն ու մ  
այ դ պ ի ս ի ո թ ո շ ի չ ու ղ ու գ ու մ ար այ ի ն հ ապ աղ մ ան  
մ ե ծ ա գ մ ան ը :



Ժամանակով ուղղորդված տեղաբաշխման տեսանկյունից կարևորվում է սխեմայի շղթաներն իրագործող միջմիացումների ֆիզիկական երկարությունների և դրանց էլեկտրական պարամետրերի միջև կապվածությունների հետազոտումը, որի հանգամանակից վերլուծությունը բերված է [64]-ում: Քանի որ ժամանակակից թվային ԻՍ-երի համար հիմնականում որպես տարրային հենք են ծառայում ԿՄՕԿ փականներով ստանդարտ բջիջները, ապա ԿՄՕԿ-ի թվային սխեմայի երկու փականների միջև եղած կապը կարելի է մոդելավորել նկ. 2.5-ում բերված սխեմայի տեսքով:

Ազդանշանը տարածվում է սնողից մինչև բեռ: Պարզեցված սխեմայում սնողը  $V_{սն}$  և արմամբ և արման աղբյուր է իրելքային դիմադրությունամբ ( $R_{սն}$ ), իսկ բեռը՝ մուտքային ունակությունը ( $C_{բ}$ ): Սնողի էլքային դիմադրությունը ձևավորվում է սնող փականի էլքային տրանզիստորի հաղորդականությամբ: Որքան փոքր է դիմադրությունը, այնքան ավելի մեծ է տրանզիստորի կապուղու հաղորդականությունը: Բեռի ունակությունը հավասարագոր է բեռ հանդիսացող փականի ներքին տրանզիստորների փականների ունակությանը:



Նկ. 2.5. Երկու ԿՄՕԿ փականների միջմիացման մոդելը

Միջմիացողումը, որը կապում է սնողը և բեռը, առաջին մոտավորություններ կարելի է ներկայացնել որպես RC հապաղման գիծ, իսկ նրանում ազդանշանի հապաղումը կլինի [72,85-87]`

$$t_{\text{մի}} = RC: \quad (2.4)$$

Ֆիզիկական նախագծման փուլում սնողը և բեռը որոշակի տարրեր են, որոնց պարամետրերի արժեքները չեն կարող փոփոխվել դրանց տեղաբաշխման և ծրագրման ընթացքում: Կապի գծի բնութագրերը որոշվում են ինչպես տեխնոլոգիայով, այնպես էլ տարրերի տեղաբաշխմամբ և ծրագրմամբ:

Կապի գծի պարագիտային ունակությունը կարելի է մոտավորապես գնահատել հետևյալ կերպ`

$$C_{\text{մի}} = \frac{elw}{d}, \quad (2.5)$$

որտեղ  $\varepsilon$ -ը օքսիդի շերտի դիէլեկտրիկ թափանցելիությունն է,  $l$ ,  $\omega$ ,  $d$  -ն` համապատասխանաբար միջմիացման երկարությունը, լայնությունը և հաստությունը:

Քանի որ ժամանակակից թվային սխեմաներում ազդանշանային կապի գծերի լայնությունը, որպես կանոն, ֆիքսված է ծրագրման տվյալ մետաղական շերտի նախագծման նվազագույն թույլատրելի լայնությամբ, իսկ գծի հաստությունը սահմանվում է տեխնոլոգիայով, ապա ստացվում է, որ ֆիզիկական նախագծման տեսանկյունից կապի գծի պարագիտային ունակությունը համեմատական է դրա երկարությանը`

$$C_{\text{մի}} : l: \quad (2.6)$$

Կապի գծի դիմադրությունը որոշվում է հետևյալ կերպ`

$$R_{\text{մի}} = \frac{r l}{A}, \quad (2.7)$$

որտեղ  $\rho, 1, A$  - ն համապատասխանաբար միջմիացման նյութի տեսակարար դիմադրությունը, երկարությունը, լայնական հատույթի մակերեսն են: Տրված տեխնոլոգիայի համար ֆիզիկական նախագծման դեպքում ավելի հարմար է օգտվել մակերևույթային տեսակարար դիմադրությունից՝

$$R_s = \frac{r}{d}, \quad (2.8)$$

որտեղ  $d$ -ն միջմիացման հաստությունն է:

Տրված տեխնոլոգիայի դեպքում յուրաքանչյուր մետաղական մակարդակի համար մակերևույթային տեսակարար դիմադրությունը և միջմիացման հաստությունը սահմանված մեծություններ են: Յետևաբար՝ դիմադրության գնահատման համար ավելի հարմար է օգտվել հետևյալ արտահայտությունից, որը ստացվում է (2.7) և (2.8)-ից՝

$$R_{\text{մի}} = R_s \frac{1}{w}, \quad (2.9)$$

որտեղ  $w$ -ն միջմիացման լայնությունն է:


Եթե հաշվի առնվեն ֆիզիկական նախագծման փուլում կապի գծի վրա դրվող նույն պահանջները, ինչ որ ունակության դեպքում, ապա դիմադրության համար նույնպես կարելի է ասել, որ այն համեմատական է կապի գծի երկարությանը՝

$$R_{\text{մի}} : 1 : \quad (2.10)$$

Այսպիսով, (2.4), (2.6) և (2.10) արտահայտությունները հետևում է, որ կապի գծում ազդանշանի տարածման հապաղումը առաջին մոտավորությամբ ուղիղ համեմատական է կապի գծի երկարության քառակուսուն, իսկ քանի որ կապի գծի երկարությունն էլ, իր հերթին, մեծապես կախված է միացվող տարրերի տոպոլոգիական հեռավորությունից, հետևաբար՝ տարրերի տեղաբաշխումը էականորեն կարող է ազդել նախագծվող սխեմայի արագագործության վրա:

Քանի որ տեղաբաշխման փուլում դեռևս հայտնի չեն շղթաների տոպոլոգիական կառուցվածքները, ապա դրանցում հապաղումների գնահատման համար շղթաների վիրտուալ ծրագծման և դրանց երկարությունների գնահատման անհրաժեշտություն է առաջանում: Այս նպատակով օգտագործվում են շղթաների տոպոլոգիական ներկայացման տարբեր ցանցային մոդելներ:

Նկ. 2.6-ում պատկերված են բազմաճյուղ շղթայի տոպոլոգիայի մոդելավորման տարբեր



մոտեցումների օրինակներ [13, 88]:

*Նկ. 2.6. Շղթայի մոդելներ և օրինակները*


Շղթայի երկարություն գնահատման բերված մոտեցումներից ամենատարածված և ամենապարզագույն մեթոդը կիսապարազծային մոդելի վրա հիմնվածն է, որը շղթայի երկարությունը գնահատում է նրա կոնտակտներն

ընդգրկող նվազագույն ուղղանկյան կիսապարագծի երկարությունը [14, 47]:

Եթե  $a(x,y)$  և  $b(x,y)$ -ը նկ. 2.6-ում կիսապարագծային մոդելի դեպքի համար շղթայի հանգույցներն ընդգրկող նվազագույն ուղղանկյան անկյունագծային գագաթներն են, ապա կիսապարագծային մոդելով որոշվող շղթայի երկարությունը կգնահատվի հետևյալ կերպ՝

$$L_{\text{պ}} = |a(x)-b(x)| + |a(y)-b(y)| \quad (2.11)$$

Ստորև ասվածը դիտարկվում է նկ. 2.7-ում բերված



օրինակով:

*Նկ. 2.7. ԻՍ-երի տարրերի կապվածություն  
կիսապարագծային մոդելը*

Ենթադրվում է, որ 1, 2, 3, 4 և 5 կոնտակտները կազմում են մեկ շղթա: Այդ կոնտակտներն ընդգրկող նվազագույն ուղղանկյունը կլինի ABCD-ն, որի կիսապարագծը կլինի  $AD + DC$  և երկարությունը 7 միավոր: Նկարում պատկերված կոնտակտների դասավորության համար դրանք միացնող ծտեյների նվազագույն ծառը, որը ցույց է տրված կետագծերով, նույնպես ունի 7 միավոր երկարություն: Եթե 5-րդ կոնտակտը տեղադրվի 5' դիրքում, ապա ծտեյների նվազագույն ծառի երկարությունը կավելանա 1-ով,

իսկ եթե այն տեղադրվի 5" դիրքում, ապա երկարությունը կավելանա 2-ով: Երկու դեպքում էլ կիսապարագծային մոդելի գնահատականը չի փոխվի և կմնահավասար 7-ի:

Ընդհանուր դեպքում կիսապարագծային մոդելը շղթայի երկարության գնահատման ներքին սահմանն է և ունի փոքր ճշտություն և բազմաճյուղ շղթաների դեպքում: Սակայն փորձը ցույց է տալիս, որ կիսապարագծային մոդելը նախնական տեղաբաշխման փուլում կարող է ապահովել շղթայի երկարության գնահատման բավարար ճշտություն և տեղաբաշխման փուլում, հետագա ճշգրտումը թողնելով տեղաբաշխման և վարկման փուլին [13, 88-91]: Սահիմնավորվում է նաև մոդելի հաշվարկային պարզությունը և այն նկատառումով, որ արդյունաբերական սխեմաներում 2 և 3 հանգույցներով շղթաները միջին հաշվով կազմում են բոլոր շղթաների համապատասխանաբար 64% և 20%-ը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շղթային պատկանող ցանկացած գույգ կոնտակտը միացնող միջմիացման պարագիտային ունակությունը պայմանավորված է ամբողջ շղթայի ունակությամբ, կիսապարագծային մոդելը, բացի շղթայի երկարության գնահատման միջոցից, կարող է հանդիսանալ նաև որպես շղթայի հապաղման գնահատման բավարար միջոց՝ ԻՍ-ի տարրերի ժամանակով ուղղորդված տեղաբաշխման դեպքում: Այսպիսով, տարրերի միջև եղած հեռավորությունները, որոնք կառավարվում են տեղաբաշխման ժամանակ, կարող են հանդիսանալ միջմիացումների երկարության, հետևաբար՝ նաև դրանցում առկա հապաղումների բավարար գնահատման միջոց:

Սակայն, հաշվի առնելով միջմիացումներում հապաղումների դերի անընդհատ աճը, ներկայումս

կարևորվում է շղթաների երկարությունների և հապաղումների մոդելների հետագա կատարելագործումը, որը պետք է միտված լինի դրանց ճշտություն բարձրացմանը՝ առանց դրանց բարդության էական ավելացման: Թվային ԻՍ-երի տարրերի նախնական տեղաբաշխման ժամանակային մոդելների և դրանց կատարելագործման հարցերը ավելի հանգամանորեն քննարկված են ստորև:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել .

Թվային սխեմաների արագագործություն և ապահովման տեսանկյունից կարևորվում է տարրերի այնպիսի տեղաբաշխումը, որը կապահովի մոլտք-ելք որոշիչ ուղիներով րաքննված տարրերը կապող շղթաների հնարավորինս սփոքր երկարություններ:

### **2.3. Շղթաների մոդելավորումը տեղաբաշխման փուլում**


Թվային ԻՍ-երի տարրերի տեղաբաշխման փուլում, երբ դեռևս բացակայում է միջմիացումների \$իզիկական կառուցվածքը, կապի գծերի մոդելների մշակման և օգտագործման անհրաժեշտություն է առաջանում: Այդպիսի մոդելների առկայությունը, հնարավորություն է տալիս սխեմայի արագագործություն տեսանկյունից կառավարել տեղաբաշխման ընթացքը: Տարրերի տեղաբաշխման ժամանակային մոդելների և չափանիշների վրա դրվող հիմնական պահանջը ապագա միջմիացումների \$իզիկական և դրանով պայմանավորված՝ ժամանակային պարամետրերի արագ և բավարար ճշտությամբ գնահատումն է:

**Կապի գծերի երկարության մոդելները:** ԻՍ-երի \$իզիկական նախագծման ավտոմատացման ալգորիթմները հիմնված են կապվածություն

գրաֆների վրա, և որպես մուտքային տեղեկատվություն օգտագործում են նախագծվող սխեմայի շղթաների ցուցակը և երկչափ կամ եռաչափ տարածությունում տարրերի տեղաբաշխման և ծրագծման վրա դրվող նախագծային սահմանափակումները: Ընդհանուր դեպքում սխեմաներում առկա կապի գծերը բազմաճյուղ են, և դրանց ճիշտ ներկայացման համար անհրաժեշտ է օգտագործել շղթաների հիպերգրաֆային մոդելներ: Յուրաքանչյուր հիպերգրաֆային կողին պատկանող գագաթների թիվը համապատասխանում է տվյալ շղթայով միացվող կոնտակտների թվին, իսկ կապի գծերի մոդելները նախագծման ընթացքում օգտագործվում են միջմիացումների երկարությունների նվազարկման նպատակով: Այդպիսի մոդելները հիմնված են գրաֆների տեսությունից հայտնի նվազագույն ծածկող ծառերի և նվազագույն ծտեյների ծառերի վրա [14, 92, 93]: Ստորև հակիրճ ներկայացված է նվազագույն ծածկող ծառերի էությունը:

Կապված չկողմնորոշված գրաֆում ծածկող ծառը ներկայացնում է ացիկլիկ կապված ենթագրաֆ, որը պարունակում է տվյալ գրաֆի բոլոր գագաթները և կողերի այնպիսի ենթաբազմություն, որը թույլ է տալիս հասանել իրական ցանկացած գագաթից դեպի ցանկացած այլ գագաթներ՝ առանց ցիկլերի առաջացման:  $n$ -գագաթանի գրաֆում ցանկացած ծածկող ծառ պարունակում է ճիշտ  $n-1$  կողեր:  $n$ -գագաթանի լրիվ գրաֆում ծածկող ծառերի քանակը որոշվում է Կելի բանաձևով և հավասար է  $n^{n-2}$  [94]:

Կապված կշռված չկողմնորոշված գրաֆում նվազագույն ծածկող ծառն այն է, որն ունի հնարավոր նվազագույն կշիռը, որի տակ հասկացվում է դրամաձև մտնում է  $4$  բոլոր կողերի





կշիռն էր ի գումարը [94]: Նկ. 2.8-ում բերված է նվազագույն ծածկող ծառի օրինակ:

*Նկ. 2.8. Գրաֆում նվազագույն ծածկող ծառի օրինակը*

Նկարում բերված է 6 - գագաթանի կշռված գրաֆի օրինակ, որում նվազագույն ծածկող ծառի կողերը մզացված են: Ինչպես տեսնում է նկարից, նվազագույն ծառի կողերի թիվը հավասար է  $6-1=5$ , այն չի պարունակում ցիկլեր, իսկ ծառի կշիռը հավասար է 16-ի:

Այսպիսով,  $G = (V, E)$  կշռված գրաֆում նվազագույն ծածկող ծառի կառուցումը ենթադրում է գրաֆի կողերի  $E' \subseteq E$  այնպիսի ենթաբազմության (ենթաբազմությունների) որոշում, որը ներկայացնում է ծառ, և որի կողերի գումարային կշիռը նվազագույն է:

Գոյություն ունեն նվազագույն ծածկող ծառի կառուցման մի քանի ալգորիթմներ, որոնցից առավել հայտնի են Պրիմի և Կրուսկալի ալգորիթմները [14, 47]: Դրանց բարդությունը բնութագրվում է համապատասխանաբար՝  $O(E \log V)$  և  $O(E \log E)$ , որտեղ  $V$ -ն գագաթների թիվն է, իսկ  $E$ -ն՝ կողերի [95]: Այս ալգորիթմները տալիս են ճիշտ լուծումներ էվկլիդեսյան չափողականության դեպքում: Սակայն, քանի որ ԻՍ-երում ծրագրումը կատարվում է փոխողական կառուցվածքով, այսինքն՝ Մանհեթենյան չափողականությամբ, ապա այդ ալգորիթմների վրա հիմնված մոդելների կիրառումը տեղաբաշխման փոփոխում կարող է սահմանափակվել միայն նվազագույն ծածկող ծառի առանձնացման նպատակով, իսկ ծառի Մանհեթենյան երկարության գնահատումը տալիս է ոչ բավարար ճշտություն: Այդ իսկ պատճառով տեղաբաշխման փոփոխում շղթաների կապի գծերի երկարության մոդելավորման համար օգտագործվում են շտեյների նվազագույն ծառի վրա հիմնված մոդելները:

**Շտեյների նվազագույն ծառը:** Շտեյների խնդրի դրվածքը հետևյալն է [14]:  $G = (V, E)$  կշռված գրաֆում տրված է գագաթների  $D \leq V$  ենթաբազմություն:

Պահանջվում է ընտրել գազաթևերի  $V' \leq V$  այնպիսի ենթաբազմություն, որ բավարարի  $D \leq V'$  պայմանը և  $V'$ -ը բոլոր նման ծառերի միջից առաջացնի նվազագույն կշռով ծառ:  $D$  բազմությունը ներառում է շղթաների բոլոր ելուստները, իսկ  $V'-D$  բազմությունը պարունակում է ծտեյների լրացուցիչ գազաթևեր: Ակնհայտ է, որ  $D=V$  պայմանի դեպքում ծտեյների նվազագույն ծառը համարժեք է նվազագույն ծածկող ծառին:

Ենթադրենք՝ տրված է  $(X, d)$  չափական տարածությունը, որտեղ  $X$  գազաթևերի բազմության համար որոշված է դրանց միջև  $d$  հեռավորությունները:  $X$  գազաթևերի բազմության վրա տրված է  $G=(V, E)$  գրաֆը: Եթե  $M$ -ը  $X$ -ի վերջավոր ենթաբազմությունն է, իսկ  $G=(V, E)$  կապված գրաֆ է  $X$ -ի վրա, ապա  $G$ -ն կոչվում է  $M$ -ը միացնող գրաֆ: Այն  $G$  գրաֆը, որը  $M$ -ը միացնում է հնարավոր նվազագույն  $d(G)$  մեծությամբ, կոչվում է  $M$ -ի վրա նվազագույն ծտեյների ծառ: Նշենք, որ նվազագույն ծտեյների ծառը ոչ միշտ գոյություն ունի, սակայն  $M$ -ի վրա բոլոր կապված գրաֆներից նվազագույն  $d(G)$  արժեքը միշտ գոյություն ունի և կոչվում է  $M$ -ի վրա ծտեյների նվազագույն ծառի երկարություն: Ծտեյների խնդիրը NP դժվարության է, և դրա ճշգրիտ լուծումը ենթադրում է լրիվ ընտրանք [96-99]:


Կախված  $(X, d)$  հարթության տեսակից՝ ծտեյների խնդիրն ունենում է տարբեր ձևեր: Եթե  $(X, d)$ -ն ստանդարտ Էվկլիդեսյան հարթությունն է, որտեղ  $d$  հեռավորությունները որոշվում է  $\|(x, y)\| = \sqrt{x^2 + y^2}$  նորմով, ապա գործ ունենք ծտեյների դասական խնդրի հետ:

Եթե  $(X, d)$ -ն Մանհեթենյան հարթությունն է, որտեղ  $d$  հեռավորությունները որոշվում է  $\|(x, y)\| = |x| + |y|$  նորմով, ապա գործ ունենք ծտեյների ուղղանկյուն խնդրի հետ, իսկ նվազագույն ծառը կոչվում է ծտեյների ուղղանկյուն նվազագույն ծառ: Նկ. 2.9-ում բերված են ծտեյների նվազագույն ծառի օրինակներ:

Ծտեյների ուղղանկյուն նվազագույն ծառը լայնորեն օգտագործվում է ԻՍ-երի ծրագծման ավտոմատացման խնդիրներում: Հաշվի առնելով ենաչափ ԻՍ-երի առանձնահատկությունները, դրանց ծրագծման խնդիրներում հարթությունը

փոխարինվում է եռաչափ տարածությամբ, իսկ  $d$  հեռավորությունը որոշվում է  $||x, y, z|| = |x| + |y| + |z|$  նորմով:

Տեղաբաշխման փոփոխում ճտեյների նվազագույն ծառի մոդելի օգտագործումն իրանմիջական տեսքով սահմանափակվում է դրա բարդությամբ և, հետևաբար, իրագործման մեծ ժամանակով: Այդ իսկ պատճառով այս փոփոխում հիմնականում օգտագործվում են ճտեյների նվազագույն ծառի տարբեր պարզեցված մոդելներ, որոնք միմյանցից տարբերվում են իրենց բարդությամբ և գնահատման ճշտությամբ: Ճտեյների նվազագույն ծառի մոդելն իր նախնական տեսքով կարող է օգտագործվել միայն տեղաբաշխման վերջնական փոփոխում՝ լավարկման նպատակով:




Նկ. 2.9. Ճտեյների նվազագույն ծառի օրինակները. ա)-էվլի իդեսսյան, բ)-ուդդանկյուն, գ)-ուդդանկյուն նվազագույն ծառի գրաֆային ներկայացումը

Ինչպես արդեն նշվել է, տեղաբաշխման գործիքներում ճտեյների նվազագույն ծառի տարբեր պարզեցված մոդելներից ամենամեծ կիրառությունը գտել են սահմանափակող ուդդանկյուն շրջանակի վրա հիմնված կիսապարագծային մոդելները, որոնք ապահովում են շղթաների երկարությունների գնահատման մեծ արագություն: Սակայն ԻՍ-երի ինտեգրման աճի պայմաններում ներկայումս շղթաների երկարությունների գնահատման նոր և

կատարելագործված մոդելների մշակման անհրաժեշտություն է առաջանում, որը մի կողմից՝ կբարձրացնի գնահատման ճշտությունը, մյուս կողմից՝ կունենա գնահատման համեմատաբար փոքր ժամանակ: Ակնհայտ է, որ բերված երկու պայմաններն իրարամերժ են, և մոդելի ընտրությունը հանդիսանում է ինժեներական փոխզիջման խնդիր:

Ստորև առաջարկված են մեթոդ և ալգորիթմ, որոնք ունենալով  $O(n \log n)$  բարդություն, գնահատման ճշտությամբ գերազանցում են կիսապարագծային մոդելին և մոտենում է ուղղանկյուն շտեյների նվազագույն ծառի մոդելի ճշտությանը: Առաջարկվող մեթոդը հիմնված է այն փաստի վրա, որ 2 և 3 կոնտակտների համար կիսապարագծային մոդելի ճշտությունը համընկնում է շտեյների ուղղանկյուն նվազագույն ծառի մոդելի ճշտությանը: Յաշվի առնելով ասվածը՝ առաջարկվում է բազմաճյուղ շղթաների կոնտակտների տեղաբաշխման դաշտը մասնատել այնպիսի տեղամասերի, որ դրանցից յուրաքանչյուրում հանդես գան ոչ ավելի, քան 3 կոնտակտ:

Նկ. 2.10-ում պատկերված է 9 - կոնտակտանի շղթայի օրինակ, որի կոնտակտների տեղաբաշխումը բերված է նկ. 2.10ա)-ում:



Նկ. 2.10. Շղթայի երկարություն  $q$  նահատման տարբեր մոդելները.  $ա$ - շղթայի կոնտակտների տեղաբաշխումը,  $բ$ - Շտեյների ուղղանկյուն նվազագույն ծառը,  $գ$ - մասնատված տեղամասերի կիսապարագծային մոդելները,  $դ$ - շղթայի երկարություն առաջարկվող մոդելը

Բերված օրինակում շղթայի երկարություն  $q$  նահատականը կիսապարագծային մոդելով հավասար է 20-ի, իսկ շղթայի ուղղանկյուն Շտեյների նվազագույն ծառն ունի 28 միավոր երկարություն: Առաջարկվող մեթոդն իրագործվում է հետևյալ քայլերով՝

1. Հավասարակշռված միջինի կոորդինատի հաշվարկ՝  $y$  առանցքով, որը կկորացվում է մինչև մոտակա ամբողջ թիվը՝

$$y' = \frac{\sum_{i=1}^n y_i}{n} = \frac{\sum_{i=1}^9 y_i}{9} = \frac{44}{9} = 4,88(8) \approx 5 \quad (2.12)$$

2. Ստացված  $A$  և  $B$  երկու մասերի համար  $x$  առանցքով հավասարակշռված միջինի կոորդինատների հաշվարկ, որոնք կկորացվում են մինչև մոտակա ամբողջ թվերը՝

$$x_A' = \frac{\sum_{i=1}^n X_{Ai}}{n} = \frac{\sum_{i=1}^4 X_{Ai}}{4} = \frac{23}{4} = 5,75 \approx 6, \quad (2.13)$$

$$x_B' = \frac{\sum_{i=1}^n X_{Bi}}{n} = \frac{\sum_{i=1}^5 X_{Bi}}{5} = \frac{22}{5} = 4,4 \approx 4 : \quad (2.14)$$

3. 2 և 3 քայլերի ռեկոնստրուկցիոն ալգորիթմի արդյունքում ստացված լուծումները համարձակելով, միևնույն կոնտակտների առաջացած բոլոր ենթաբազմախումբային լուծումներում մնան 3-ից ոչ ավելի կոնտակտներ:

4. Կոնտակտների ստացված յուրաքանչյուր ենթաբազմախումբային համար շղթայի տվյալ տեղամասի երկարություն հաշվարկ՝ կիսապարագծային մոդելի միջոցով:

$$L_i = 0,5((\max X_i - \min X_i) + (\max Y_i - \min Y_i)); i = \overline{1, k}, \quad (2.15)$$

$$L_i = 0,5((\max_{X_i \in \Omega_i} X_i - \min_{X_i \in \Omega_i} X_i) + (\max_{Y_i \in \Omega_i} Y_i - \min_{Y_i \in \Omega_i} Y_i)); i = \overline{1, k}, \quad (2.16)$$

որտեղ  $X_i$  և  $Y_i$ -ը  $\Omega_i$  ենթաբազմախումբային կոնտակտների կոորդինատներն են,  $k$ -ն՝ կոնտակտների ենթաբազմախումբային քանակը:

5. Կոնտակտների ենթաբազմախումբային լուծումները միացնող նվազագույն փոխուղղահայաց ծառի երկարություն հաշվարկ:

Այս նպատակով սկզբում հաշվարկվում է  $\Omega_i; i = \overline{1, 2, \dots, k}$  ենթաբազմախումբային լուծումները տեղային կիսապարագծային մոդելների միջև առկա նվազագույն փոխուղղահայաց հեռավորությունները: Ենթաբազմախումբային լուծումների  $\Omega_i$  և  $\Omega_j$  որևէ գույքի համար այդ հեռավորությունը կլինի՝

1)  $\Omega_i$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ից աջ ներքև.

$$L_{ij} = |\max_{X_i \in \Omega_i} X_i - \min_{X_j \in \Omega_j} X_j| + |\min_{Y_i \in \Omega_i} Y_i - \max_{Y_j \in \Omega_j} Y_j|; i, j = \overline{1, k}; i \neq j,$$

$$\text{եթե } \max_{X_i \in \Omega_i} X_i < \min_{X_j \in \Omega_j} X_j; \min_{Y_i \in \Omega_i} Y_i > \max_{Y_j \in \Omega_j} Y_j;$$

2)  $\Omega_j$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ից աջ վերև.

$$L_{ij} = |\max_{X_i \in \Omega_i} X_i - \min_{X_j \in \Omega_j} X_j| + |\max_{Y_i \in \Omega_i} Y_i - \min_{Y_j \in \Omega_j} Y_j|; i, j = \overline{1, k}; i \neq j,$$

$$\text{է թ է } \max_{X_i \in \Omega_i} X_i < \min_{X_j \in \Omega_j} X_j; \max_{Y_i \in \Omega_i} Y_i < \min_{Y_j \in \Omega_j} Y_j;$$

3)  $\Omega_j$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ի ցածր կողմում.

$$L_{ij} = |\min_{X_i \in \Omega_i} X_i - \max_{X_j \in \Omega_j} X_j| + |\min_{Y_i \in \Omega_i} Y_i - \max_{Y_j \in \Omega_j} Y_j|; i, j =; i \neq j,$$

$$\text{է թ է } \min_{X_i \in \Omega_i} X_i > \max_{X_j \in \Omega_j} X_j; \min_{Y_i \in \Omega_i} Y_i > \max_{Y_j \in \Omega_j} Y_j;$$

4)  $\Omega_j$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ի ցածր կողմում.

$$L_{ij} = |\min_{X_i \in \Omega_i} X_i - \max_{X_j \in \Omega_j} X_j| + |\max_{Y_i \in \Omega_i} Y_i - \min_{Y_j \in \Omega_j} Y_j|; i, j =; i \neq j,$$

$$\text{է թ է } \min_{X_i \in \Omega_i} X_i > \max_{X_j \in \Omega_j} X_j; \max_{Y_i \in \Omega_i} Y_i < \min_{Y_j \in \Omega_j} Y_j;$$

5)  $\Omega_j$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ի ցածր կողմում (աջ).

$$L_{ij} = |\max_{Y_i(X_i) \in \Omega_i} Y_i(X_i) - \min_{Y_j(X_j) \in \Omega_j} Y_j(X_j)|; i, j =; i \neq j, \text{ է թ է } \cdot$$

$$\max_{X_i(Y_i) \in \Omega_i} X_i(Y_i) > \min_{X_j(Y_j) \in \Omega_j} X_j(Y_j); \min_{X_i(Y_i) \in \Omega_i} X_i(Y_i) < \max_{X_j(Y_j) \in \Omega_j} X_j(Y_j);$$

$$\max_{Y_i(X_i) \in \Omega_i} Y_i(X_i) < \min_{Y_j(X_j) \in \Omega_j} Y_j(X_j)$$

6)  $\Omega_j$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ի ցածր կողմում (ձախ).

$$L_{ij} = |\min_{Y_i(X_i) \in \Omega_i} Y_i(X_i) - \max_{Y_j(X_j) \in \Omega_j} Y_j(X_j)|; i, j =; i \neq j, \text{ է թ է } \cdot$$

$$\max_{X_i(Y_i) \in \Omega_i} X_i(Y_i) > \min_{X_j(Y_j) \in \Omega_j} X_j(Y_j); \min_{X_i(Y_i) \in \Omega_i} X_i(Y_i) < \max_{X_j(Y_j) \in \Omega_j} X_j(Y_j);$$

$$\min_{X_i(Y_i) \in \Omega_i} X_i(Y_i) > \max_{X_j(Y_j) \in \Omega_j} X_j(Y_j):$$

Այնուհետև կանոնավորվում է նախադասությունը հետևյալ կերպով: Եթե  $\Omega_j$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ի ցածր կողմում, ապա  $\Omega_j$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ի ցածր կողմում (աջ) կամ  $\Omega_j$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ի ցածր կողմում (ձախ) կամ  $\Omega_j$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ի ցածր կողմում (աջ) կամ  $\Omega_j$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ի ցածր կողմում (ձախ):


Նկ. 2.11 ա)-ում բերված է նկ. 2.10 գ)-ում բերված օրինակի նկարագրումը: Եթե  $\Omega_j$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ի ցածր կողմում (աջ) կամ  $\Omega_j$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ի ցածր կողմում (ձախ) կամ  $\Omega_j$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ի ցածր կողմում (աջ) կամ  $\Omega_j$ -ն գտնվում է  $\Omega_i$ -ի ցածր կողմում (ձախ):

Ենթաբազմոլթյունների հենավորոլթյունների կշռված գրաֆում թողնվում են փոքրագույն կշռով նվազագույն քանակի կողերը, որոնք առաջացնում են ենթաբազմոլթյունները միացնող նվազագույն փոխուղղահայաց ծառը: Դիտարկվող օրինակում (նկ. 2.11բ) այդ ծառի գումարային երկարոլթյունը հավասար է 11-ի: Նշենք, որ եթե այդպիսի ծառերը մեկից ավելի են, ապա թողնվում է դրանցից ցանկացածը:

6. Շղթայի երկարոլթյան գնահատման հաշվարկ հետևյալ բանաձևով`

$$L_{\Sigma} = \sum_{i=1}^k L_i + \min \sum_{\substack{i,j=1 \\ i \neq j}}^k L_{ij} : \quad (2.17)$$

Դիտարկվող օրինակում (նկ. 2.11դ)  $L_{\Sigma} = 29$ :



Նկ. 2.11. Ենթաբազմոլթյունների հենավորոլթյունների կշռված գրաֆը.  
 ա-ենթաբազմոլթյունների հենավորոլթյունների լրիվ կշռված գրաֆը,  
 բ-ենթաբազմոլթյունների միացման նվազագույն ծառը

Այսպիսով, դիտարկվող օրինակում շղթայի երկարոլթյան գնահատումը առաջարկվող մեթոդով տարբերվում է շղթայի ծտեյների



նւղղանկյունն նվազագույն ծառի  
երկարությունից ընդամենը մեկ միավորով:  
Փորձարկված տարբեր դեպքերի համար  
առաջարկվող մեթոդով գնահատականն ապահովում  
է շուրջ 25%-ով ավելի մեծ գնահատման  
ճշտությունն՝ ներկայումս օգտագործվող  
կիսապարագծային մոդելի համեմատ:

**Շղթաների կապի գծերի հապաղման մոդելները:**

Շղթաներում ազդանշանի տարածման հապաղման  
մոդելները պետք է համարժեք լինեն ԻՍ-ում  
ընթացող իրական \$իզիկական գործընթացներին:  
Հապաղման հայտնի մոդելներից էլմորի մոդելն  
առավել համարժեք է արտահայտում էլեկտրոնային  
նախագծման ավտոմատացման համակարգերում  
լայնորեն օգտագործվող Spice մոդելավորման  
գործիքի ժամանակային վերլուծության  
արդյունքները և շատ հարմար է RC բաշխված  
պարամետրերով շղթաներում հապաղման գնահատման  
համար [72, 80, 99, 100]:


Էլմորի հապաղումը ներկայացնում է  
Էլեկտրոնային համակարգերում RC շղթայի միջոցով  
ազդանշանի հապաղման պարզ մոտարկում [72, 101, 102]: Այն,  
լինելով շղթաներում հապաղումների հաշվարկի և  
գնահատման մեթոդ, հաճախ օգտագործվում է  
Էլեկտրոնային համակարգերի նախագծման այնպիսի  
խնդիրներում, ինչպիսիք են տրամաբանական  
սինթեզը, ստատիկ ժամանակային վերլուծությունը,  
տեղաբաշխումը և ծրագրումը: Էլմորի մոդելի  
մոտավոր բնույթը չի խանգարում դրա  
օգտագործմանը տեղաբաշխման խնդիրներում, քանի  
որ այդ մոդելով գնահատված հապաղումների մեծ  
(փոքր) արժեքներին, որպես կանոն,  
համապատասխանում են իրական հապաղումների մեծ  
(փոքր) արժեքներ: Եթե հաշվի առնենք, որ  
տեղաբաշխման խնդիրներում առաջնային են ոչ թե

յ ու ր ա ք ա ն չ յ ու ր տարրի բացարձակ երկրաչափական կոորդինատները, այլ տարրերի փոխադարձ դասավորությունը, ապա այս դեպքում, շղթաներում հապաղումները հաշվի առնելու տեսանկյունից, նույն տրամաբանությամբ՝ առաջնային է դառնում ոչ թե յ ու ր ա ք ա ն չ յ ու ր շղթայի հապաղման բացարձակ արժեքի ճշտությունը, այլ տարբեր շղթաների հապաղումների փոխադարձ հարաբերական արժեքները:

Ենթամիկրոնային ԻՍ-երի նախագծման ժամանակ, տեսնելով զիաների փոքրացմանը գույքը նթաց, ավելի է կարևորվում տրամաբանական և ֆիզիկական նախագծման փուլերի միջև կապը: Նախագծվող սխեմայի արագագործության ապահովման տեսանկյունից ֆիզիկական նախագծման արդյունքում ձևավորվող միջմիացումների ժամանակային պարամետրերը հաշվի չառնել տրամաբանական նախագծման փուլում, հանգեցնում է սինթեզվող սխեմայի պարամետրերի անթույլատրելի որակին: Այդ իսկ պատճառով կարևորվում է նախագծման վաղ փուլերում ֆիզիկական պարամետրերի հնարավորիսս ճիշտ կանխատեսումը և հաշվի առնելը: Ֆիզիկական սինթեզի ընթացքում անհրաժեշտ է ապահովել սխեմայի ժամանակային պարամետրերի գնահատման այնպիսի մոդելների և մեթոդների կիրառումը, որոնք հնարավորիսս ճիշտ կգնահատեն ծրագրման ավարտին ստացվող իրական պարամետրերը, այսինքն՝ ֆիզիկական նախագծման յ ու ր ա ք ա ն չ յ ու ր փուլում նվազագույնի հասցվի միջմիացումների պատճառով առաջացող հապաղումների իրական և գնահատվող արժեքների տարբերությունը: Այստեղ գործունենք բազմակապակի խնդրի հետ, որը պետք է հաշվի առնի այնպիսի պարամետրեր, ինչպիսիք են ծրագրելի ու թյ ու ր ա ք ա ն չ յ ու ր մակերեսը, պիտանի ելքի

տոկոսը, տակտավորման շեղումը, էներգասպառումը և այլն: Բնականաբար, որքան ավելի մոտենում ենք նախագծման վերջին, այնքան պետք է բարձրանա օգտագործվող մոդելների ճշտությունը: Նկ. 2.12-ում պատկերված են նախագծման տարբեր փուլերում օգտագործվող միջմիացումների ժամանակային պարամետրերի գնահատման մոդելները և ճշտության բարելավումը հիերարխիկական պլանավորումից մինչև ծրագրում:

Դիտարկենք նկ. 2.12-ում բերված մոդելների կիրառության հնարավորությունները:



Նկ. 2.12. Նախագծման տարբեր փուլերում օգտագործվող միջմիացումների ժամանակային պարամետրերի գնահատման մոդելները

**Կապի գծերի բեռնվածություն վրահիմնված մոդել (ԳԲՄ)**-վի ճակագրական մեծություն է, որը հիմնված է

օգտագործվող տարրերի գրադարանի և նախագծի բարդությունը վրա: Այս դեպքում, ելքի ճյուղավորման գործակցի միևնույն արժեքն ունեցող բոլոր շղթաները ստանում են հապաղման միևնույն գնահատականը: Այն ունի շատ փոքր ճշտություն և օգտագործվում է տրամաբանական սինթեզի փուլում [80, 103]:

**Ռեկուրսիվ կանոնի վրահիմնված մոդելներ (ՌՄ)**-սրանք հիմնված են Ռեկուրսիվ փորձնական բանաձևի վրա, որը կապ է հաստատում սխեմայի ելուստների քանակի, մեկ տարրի ելուստների քանակի և տարրերի քանակի միջև [104]: Տարրերի համարը նդունելով միջինացված ստանդարտ երկրաչափական չափսեր՝ գնահատվում է մեկ միջմիացման միջին երկարությունը տրված տարրերի քանակի և տեղաբաշխման մակերեսի համար: Այս մոդելները բնորոշվում են 50% և ավելի մեծ սխալանքով և ժամանակակից ԻՍ-երի \$իզիկական նախագծման գործիքներում գործնականում չեն օգտագործվում: Անհրաժեշտության դեպքում դրանք կարող են օգտագործվել կանոնավոր կառուցվածքով ԻՍ-երի \$իզիկական նախագծման վաղ փուլներում՝ միջմիացումների գումարային երկարության մոտավոր գնահատման համար:

**Նվազագույն ծառի մոդելներ (ՆՄ)** - գնահատումը կատարվում է Մանհեթենյան հեռավորություններով պարզեցված ծառերի միջոցով (լրիվ գրաֆային, հիմնականախթային, կիսապարագծային և այլն): Սրանց մասին արդեն խոսվել է: Տեղաբաշխման փուլում օգտագործման համար այս մոդելներն ամենահարմարն են:

**Շտեյների ծառի մոդելներ (ՇՄ)** - գնահատումը կատարվում է Մանհեթենյան հեռավորություններով Շտեյների նվազագույն ծառի միջոցով: Ինչպես արդեն նշվել է, այս մոդելներն ունեն բավականին մեծ ճշտություն,

սակայն տեղաբաշխման փուլում դրանց օգտագործումը սահմանափակված է բարդությամբ:

**Գլոբալ ծրագծման մոդելներ (ԳՃՄ)** - հաշվի են առնում միջմիացումների բաշխումը ծրագծման շերտերով, ինչն ավելի է ճշգրտում RC հապաղման գնահատականը: Սրանք օգտագործվում են ծրագծման նախնական փուլերում:

**Մանրակրկիտ ծրագծման մոդելներ (ՄՃՄ)** - հաշվի են առնում միջմիացումների մանրակրկիտ ծրագծումը, և կատարվում է իրական երկրաչափական տոպոլոգիայի RC պարագիտիկային քաղվածքի ստացում:

Ամփոփելով վերը ասվածը կարող ենք ասել, որ.

- Նախնական տեղաբաշխման փուլում շղթաների հետագա երկարությունների գնահատման համար հարմար է օգտագործել նվազագույն ծառի մոդելները: Ներկայումս դրանցից ամենալայն տարածումն է գտել կիսապարագային մոդելը, որի հիմնական թերությունն է բազմաճյուղ շղթաների մոդելավորման ցածր ճշտություներ:
- Բազմաճյուղ շղթաների մոդելավորման համար առաջարկված է կիսապարագային մոդելի վրա հիմնված հիերարխիկական մոդելավորման մեթոդ, որը  $O(n \log n)$  բարդությամբ պայմաններում ապահովում է կիսապարագային մոդելի համեմատ շուրջ 25% ավելի բարձր ճշտություն և մոտելում է ծտեյների ծառի մոդելների ճշտությանը:

#### **2.4. Շղթաների ժամանակային պարամետրերի վերլուծությունը տեղաբաշխման խնդրի տեսանկյունից**

Տարրերի տեսանկյունից	ժամանակային սխեմայի	տեղաբաշխման ժամանակային
----------------------	---------------------	-------------------------

վերլուծության խնդիրն այդ տարրերը կապող շղթաներին ներկայացվող ժամանակային սահմանափակումներին գնահատումն է՝ տրված տարրային հենքի դեպքում: Այս խնդրի վերլուծումը ենթադրում է հետևյալ ենթախնդիրների վերլուծման հաջորդականությունը.

- սխեմայի ժամանակային վերլուծության մեթոդի ընտրություն,
- սխեմայի ժամանակային վերլուծության մոդելի կառուցում,
- ժամանակային պարամետրերի ընտրություն,
- սխեմայի ժամանակային վերլուծության ալգորիթմի մշակում և իրագործում:

Ստորև քննարկվում են վեր նշված ենթախնդիրները:

**Սխեմայի ժամանակային վերլուծության մեթոդի ընտրություն:** Գրականությունից հայտնի են սխեմայի ժամանակային վերլուծության տարբեր մոտեցումներ, որոնք կարելի է դասակարգել ըստ մոդելավորման նպատակի և ձևի [105,106]:

Ըստ մոդելավորման նպատակի՝ ժամանակային վերլուծության մեթոդները լինում են դինամիկ և ստատիկ: Դինամիկ մոդելները հաշվի են առնում սխեմայում առկա անցողիկ գործընթացները և կիրառվում են սխեմայի աշխատանքի ու փոխանցման բնութագրերի ուսումնասիրության համար: Ստատիկ մոդելները հաշվի են առնում սխեմայի տարրերում ու դրանք միացնող շղթաներում հապաղումները, կիրառվում են սխեմայի մուտք-ելք ուղիներում հապաղումների գնահատման և ազդանշանների մրցավազքի ուսումնասիրման համար: Ըստ մոդելավորման ձևի՝ ժամանակային մոդելավորման մեթոդները կարելի է բաժանել 2 խմբի՝ տրանզիտորային մակարդակի մոդելավորում և փականային մակարդակի մոդելավորում:


Տրանզիտորային մակարդակի մոդելավորումը հիմնված է սխեման նկարագրող դիֆերենցիալ հավասարումների համակարգի լուծման վրա: Այն ապահովում է ավելի բարձր ճշտություներ, սակայն պահանջում է մեքենայական մեծ ժամանակ և գործնականում կիրառելի չէ մեծ սխեմաների մոդելավորման դեպքում: Այսպիսի մոդելավորման համակարգերից առավել լայնորեն տարածված է Spice համակարգը: Փականային մակարդակի մոդելավորման մեթոդներից առավել լայն կիրառություն է գտել ստատիկ ժամանակային վերլուծությունը, որը ներկայումս սինթրոն թվային համակարգերի համակցական սխեմաների արագագործության վերլուծության և գնահատման հիմնական մեթոդն է: Քանի որ ժամանակակից թվային համակարգերում համակցական սխեմաները կարող են ունենալ մի քանի տասնյակ հազարը գերազանցող փականեր և մեծ թվով մուտքեր/ելքեր, ապա դրանց արագագործության վերլուծությունը տրանզիտորային մակարդակի մոդելավորման մեթոդներով գործնականում անհնար է: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ ժամանակակից թվային ԻՍ-երում հիմնականում որպես տարրային հենք են ծառայում ստանդարտ գրադարանային բջիջները և մտավոր սեփականության բլոկները, որոնց մուտք-ելք հապաղումները \$իզիկական նախագծման փուլում հայտնի են, ապա ժամանակային տեղաբաշխման նպատակով առավել նպատակահարմար է ստատիկ ժամանակային վերլուծության վրա հիմնված արագագործության վերլուծության և գնահատման մեթոդների օգտագործումը:

**Սխեմայի ժամանակային վերլուծության մոդելի կառուցումը:**

Սխեմայի ժամանակային վերլուծության մոդելի կառուցման համար հիմք է ծառայում ուղղորդված կշռված գրաֆը, որը


կոչվում է նաև սխեմայի ցանցային մոդել կամ ժամանակային գրաֆ [13]:

Այսպիսի գրաֆը սահմանվում է որպես  $V=(G, C)$ , որտեղ  $G$ -ն գագաթների, բազմությունն է, իսկ  $C$ -ն՝ ուղղորդված կողերի բազմությունը: Յուրաքանչյուր կողին վերագրվում է որոշակի կշիռ, որը համապատասխանում է այդ կողով միացված գագաթների միջև ժամանակային հապաղմանը: Քանի որ ենթամիկրոնային ԽՍ-երում կարևորվում են միջմիացումներում առաջացող հապաղումները, ապա այս դեպքում ինչպես սխեմայում առկա տարրերը, այնպես էլ դրանք իրար կապող շղթաները հանդիսանում են ազդանշանի տարածման հապաղման պատճառ, և հետևաբար՝ ընդհանուր դեպքում ժամանակային գրաֆը կարողնակի երկու տիպի գագաթներ, որոնք համապատասխանորեն ցույց կտան սխեմայում տարր-շղթա և շղթա-տարր անցումները: Նույն տրամաբանությամբ՝ գրաֆի կողերը կհամապատասխանեն ինչպես սխեմայի տարրերին, այնպես էլ՝ շղթաներին և սխեմայի շղթաների ցուցակին համապատասխան կմիացնեն գագաթները: Նկ. 2.13-ում բերված է տրամաբանական սխեմայի օրինակ, որի ժամանակային գրաֆը պատկերված է նկ. 2.14-ում:



Նկ. 2.13. Էլեկտրական սխեմայի օրինակը





*Նկ.2.14 Ժամանակային գրաֆը*

Ժամանակային գրաֆում յուրաքանչյուր կողմնակից շղթա, որը համապատասխանում է տվյալ կողմնակից համապատասխանող տարրի կամ շղթայի հապաղմանը: Ժամանակային գրաֆում առկա է կողերի երկու տիպ՝ ներքին և արտաքին: Ներքին կողերը համապատասխանում են տարրերին և դրանք փաստորեն տարրերի մուտքերը կապում են դրանց ելքերի հետ: Տեղաբաշխման ընթացքում այս կողերի կշիռները ֆիքսված են և կախված են տեխնոլոգիայից ու տարրերի ֆիզիկական հատկություններից: Արտաքին կողերը համապատասխանում են շղթաներին և ըստ սխեմայի տարրերը կապում են իրար:


Տեղաբաշխման փուլի սկզբում հայտնի են լինում տարրերի հապաղումները, իսկ շղթաների հապաղումները ստացվում են տեղաբաշխման և ծրագծման արդյունքում: Այսպիսով, ժամանակով ուղղորդված տեղաբաշխման խնդրում տարրերի հապաղումները հանդիսանում են մուտքային տվյալներ, իսկ խնդրի նպատակն է տարրերի տեղաբաշխման արդյունքում հասնել շղթաների ծրագծման ռեսուրսների այնպիսի բաշխման, որի դեպքում ժամանակային գրաֆում արտաքին կողերի վրա ստացվող կշիռները կհանգեցնեն մուտքեր-ելքեր ամենամեծ գումարային կշռով ուղղակի ավարկման:

Ստորև առաջարկվում է մոտեցում, որը թույլ է տալիս ԻՍ-երի շղթաներում հապաղումների հաշվառումը տարրերի նախնական տեղաբաշխման ժամանակ: Առաջարկվող մոտեցումը հիմնված է յուրաքանչյուր շղթայում ազդանշանի հայտնվելու հապաղման ներքին և վերին սահմանների ցանկալի ժամանակների հաշվարկի և, դրանով իսկ, շղթաների երկարությունների կառավարման հնարավորության վրա:

Քանի որ ժամանակային տեղաբաշխման խնդրում տարրերի հապաղումները հայտնի են, և անհրաժեշտ է վերլուծել միայն շղթաների ժամանակային պարամետրերը, ապա այսպիսի մոդելներում  $G$  գագաթների բազմությունը համապատասխանում է սխեմայի շղթաների բազմությանը, իսկ  $C$  կողերի բազմությունը՝ տրամաբանական տարրերի բազմությանը: Ընդ որում, ուղղորդված կողի սկիզբը համապատասխանում է տրամաբանական տարրի մուտքին, իսկ վերջը՝ ելքին: Պարզագույն տրամաբանական սխեմայի և դրա ժամանակային գրաֆի օրինակը բերված է նկ. 2.15-ում:

Ինչպես երևում է նկարից, ընդհանուր դեպքում մեկ տրամաբանական տարրին կարող են համապատասխանել մեկից ավելի կողեր: Եթե տրամաբանական տարրը պարունակում է ոմուտքեր և մեկ ելք, ապա ընդհանուր դեպքում այդ տարրին կհամապատասխանեն  $m \times n$  կողեր:

Նկ. 2.15. Տրամաբանական սխեմայի (ա) և դրա



*Ժամանակային գրաֆի (բ)օրինակները*

Քանի որ տրամաբանական տարրի յուրաքանչյուր ելքին համապատասխանում է որոշակի շղթա, ապա բոլոր այն մուտքերը, որոնց արժեքից կախված է սվյալ ելքի արժեքը, պետք է ժամանակային գրաֆում ունենան իրենց համապատասխան կոդերը: Այսպես, օրինակ, քանի որ G5 շղթայի վրա ազդանշանը որոշվում է C2 տարրի ելքային ազդանշանով, որը, իր հերթին, որոշվում է G1 և G4 շղթաների վրա եղած ազդանշաններով, որոնք հանդիսանում են C2 տարրի մուտքեր, ինչպես նաև՝ C2 տարրի տրամաբանական ամբ, ապա ժամանակային գրաֆում C<sub>2</sub>-ին համապատասխանում են 2 կոդեր՝ C'<sub>2</sub> և C''<sub>2</sub>, որոնք պայմանականորեն արտահայտում են C<sub>2</sub> տարրի 2 մուտքերից յուրաքանչյուրի անցումը դեպի այդ տարրի ելք:

Ժամանակային գրաֆում, որպես կոդերի կշիռ, հանդես են գալիս համապատասխան տարրերի մուտք-ելք հապաղումները: Ժամանակային գրաֆի յուրաքանչյուր գագաթի համար հնարավոր են 2 տիպի փոխանջատումներ՝ 0-1 (ցածրից բարձր) և 1-0 (բարձրից ցածր): Ընդհանուր դեպքում, քանի որ 0-1 և 1-0 փոխանջատումների հապաղումները կարող են լինել միմյանցից տարբեր, ապա յուրաքանչյուր կոդին կարելի է վերագրել 4 տիպի հապաղումներ՝ T<sup>99</sup> (ցածր-ցածր), T<sup>9բ</sup> (ցածր-բարձր), T<sup>բ9</sup> (բարձր-ցածր), և T<sup>բբ</sup> (բարձր-բարձր): Տարրերի ժամանակային տեղաբաշխման տեսանկյունից ինժեներական բավարար ճշտությամբ կարելի է խնդիրը պարզեցնել և որպես սվյալ տարրի հապաղման չափ վերցնել կամ վերը նշված 4 տիպի հապաղումներից առավել ազոլյնը, կամ դրանց միջինը: Յետագա շարադրանքում որպես ժամանակային գրաֆի կոդերի կշիռներ օգտագործված է միջին հապաղումը, որի արժեքը յուրաքանչյուր տրամաբանական տարրի համար բերված է լինում թվային ստանդարտ բջիջների գրադարաններում:

**Սխեմայի ժամանակային վերլուծության մեթոդը:**

Ժամանակային գրաֆի միջոցով վերլուծության

իրագործումը ենթադրում է հետևյալ 2 խնդիրների  
լուծումները .

1. Ժամանակային գրաֆում մուտք-ելք ուղիների  
փնտրման կազմակերպում ,

2. մուտք-ելք ուղիների և առանձին շղթաների  
ժամանակային պարամետրերի հաշվարկ :

Երկար ու թյ ու ն ը կապված ու թյ ամբ տեղաբաշխման դեպք ու մ , մ կ մ	14,39	6,03	5,84	9,1	5,5	3,7	7,71	3,08	4,76	6,2

Կատարված է տարրերի տեղաբաշխում 3 շարք պարունակող ուղղանկյուն դաշտում՝ ինչպես շղթաների ժամանակի պահուստների հաշվառումով (3.8 չափանիշ), այնպես էլ տարրերի կապված ու թյ ամբ (3.7 չափանիշ): Տեղաբաշխման արդյունքները բերված են



Նկ. 3.13. a28 թեստային սխեմայի տարրերի ժամանակ ո վ ու ղ ղ ո ղ ո վ ա ծ տեղաբաշխումը երկչափ մոնտաժային դաշտում: ա) ժամանակ ո վ ու ղ ղ ո ղ ո վ ա ծ տեղաբաշխում, որտեղ պատկերված են նաև որոշ իջ շղթաները:

Սխեմայի ներքին շղթաների ժամանակի պահուստները և կիսապարագային մոդելով գնահատված երկար ու թյ ու ն ները բերված են աղ. 3.1 - ու մ:

Ինչպես երևում է աղյուսակից, շղթաների կարևոր ու թյ ան հաշվառմամբ տեղաբաշխման

դեպքում 0-ական ժամանակային պահուստով առավել երկար G92 դթայի երկարությունը նվազել է շուրջ 20%-ով: Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել .

- Առաջարկված է ենթամիկրոնային ԻՍ-երի տարրերի ժամանակով ուղղորդված տեղաբաշխման նոր չափանիշ (3.8), որի մաթեմատիկական տեսքը համանման է միջմիացումների գումարային երկարության ավանդական չափանիշի (3.7) տեսքին և կարող է օգտագործվել նախնական տեղաբաշխման հաշորդական ալգորիթմներում:
- ժամանակով ուղղորդված տեղաբաշխման առաջարկված (3.8) չափանիշը թույլ է տալիս սխեմայի շղթաներին վերագրել կարևորության գործակից՝ համաձայն նրանցում հապաղումների ժամանակային պահուստների մեծության, ինչը արդյունքում հանգեցնում է սխեմայի որոշիչ ուղիների վրա ընկած շղթաների համեմատական կարճացմանը և, հետևաբար, արագագործության բարձրացմանը:
- Առաջարկված մոտեցման իրագործումը կատարվել է ինչպես բերված, այնպես էլ մի շարք այլ թեստային սխեմաների տարրերի նախնական տեղաբաշխման օրինակների վրա, ինչը ապահովել է որոշիչ շղթաների երկարությունների 20-30% նվազում:

**3.3. Շղթաների նախնական տեղակայման վրա հիմնված տարրերի ժամանակով ուղղորդված տեղաբաշխումը**

Նախորդ ենթագլխում նկարագրված ժամանակով ուղղորդված տեղաբաշխման մոտեցումը, ապահովելով որոշիչ շղթաների

Երկար ու թյուր նկերի նվագեցումը, միաժամանակ հաշվի չի առնում թվային սխեմայում ազդանշանի մշակման տրամաբանական հաջորդականությունը: Այս թերությունը հետևանք է կիրառվող տեղաբաշխման հաջորդական ալգորիթմի էություն, որը յուրաքանչյուր հերթական տարրի և դրա տեղաբաշխման դիրքի ընտրությունը կատարում է միայն տվյալ քայլում առկա իրողությունները հաշվի առնելով: Սա, սահմանափակ մոնտաժային ռեսուրսների առկայություն պարագայում, տեղաբաշխման ավարտին մոտենալու զուգընթաց, հանգեցնում է շղթաների երկարությունների աճին: Արդյունքում՝ որոշ ոչ որոշիչ շղթաների երկարությունների չարդարացված մեծարժեքների պատճառով կարող են առաջանալ նոր որոշիչ ուղիներ՝ էլ ավելի մեծ հապաղմամբ: Գոյություն ունեցող \$իզիկական սինթեզի ծրագրային գործիքային միջոցներում այս խնդիրը լուծվում է տեղաբաշխման լավարկման փուլում, որի արդյունքը, ինչպես արդեն նշվել է, մեծապես կախված է նախնական տեղաբաշխման որակից:

Այս բաժնում ներկայացված է նախնական ժամանակով ուղղորդված տեղաբաշխման նոր մոտեցում, որտեղ տարրերի տեղաբաշխումը հիմնվում է շղթաների նախնական տեղաբաշխման վրա, ինչը թույլ է տալիս տեղաբաշխման ընթացքում բոլոր շղթաների ժամանակային պարամետրերի միաժամանակյա հաշվառում և դրանով իսկ՝ տեղաբաշխման գործընթացի կառավարում [13, 124-127]:

Առաջարկվող մեթոդը հիմնված է հետևյալ հաջորդական քայլերի վրա՝

1. գծային կոորդինատային համակարգում սխեմայի շղթաների դիրքերի որոշում,
2. գծային կոորդինատային համակարգում սխեմայի տարրերի դիրքերի որոշում,

3. տարրերի տեղաբաշխման համահավասարեցում (փոխծածկումների և բացակների վերացում),

4. ուղղանկյուն մակերեսի վրա կողերի տրված հարաբերություններ գծային տեղաբաշխման վերածնափոխում:

**Գծային կոորդինատային համակարգում սխեմայի շղթաների դիրքերի որոշումը:** Այս խնդրի լուծման հիմքում ընկած է շղթաների ժամանակային պարամետրերից անցումը գծային կոորդինատային համակարգին:

Շղթաների գծային կոորդինատները որոշվում են հետևյալ նկատառումներով.

- տեղեկություն մշակելիս շղթաներում ազդանշանի ձևավորման հաջորդականությունը կատարվում է՝ դրանցում ճիշտ ազդանշանի ձևավորման ժամանակների ներքին սահմանների աճը հաշվի առնելով,
- ազդանշանի ձևավորման ժամանակի ներքին սահմանի առավելագույն արժեքին ( $T_{u\max}$ ) համապատասխանում է տարրերի շարային դասավորություն առավելագույն երկարություն ( $L_{(G)\max}$ ), որը որոշվում է բոլոր տեղաբաշխվող բջիջների գումարային երկարություններ, իսկ որևէ  $i$ -րդ շղթայում ճիշտ ազդանշանի ձևավորման ժամանակի ներքին սահմանին ( $T_{ui}$ ) համապատասխանող գծային կոորդինատը ( $L_{(G)ui}$ ) համամասնական է տվյալ շղթայում ազդանշանի ձևավորման ժամանակի ներքին սահմանի  $T_{ui}$  արժեքին: Այն որոշվում է հետևյալ կերպ.

$$L_{(G)ui} = \frac{L_{(G)\max}}{T_{u\max}} T_{ui} : \quad (3.6)$$

Կոոորդինատային համակարգում շղթաների դիրքերի որոշումը կատարվում է հետևյալ քայլերի հաջորդականությամբ .

1. Տեղաբաշխվող տարրերի շարային դասավորության առավելագույն երկարության որոշում`

$$L_{\max} = \sum_{i=1}^n L_i, \quad (3.7)$$

որտեղ  $L_i$ -ն  $i$ -րդ ստանդարտ բջջի երկարությունն է,  $n$ -ը` տեղաբաշխվող բջջերի քանակը :

2. Սխեմային մուտքերից ելքեր ազդանշանի տարածման հապաղման ժամանակի ներքին ( $T_{ii}$ ) և վերին ( $T_{ji}$ ) սահմանների որոշում: Սակատարվում է նախորդ գլխում նկարագրված ձևով` հիմնվելով (2.9) և (2.10) արտահայտություններով:

3. Գծային կոորդինատային համակարգում սխեմայի յուրաքանչյուր շղթային համապատասխանող դիրքերի որոշում`

$$X_{\hat{a}(q)i} = T_{\hat{a}(q)i} \frac{L_{\max}}{T_{\hat{a}(q)\max}}; i = 1, \dots, n, \quad (3.8)$$

որտեղ  $X_{\hat{a}(q)i}$  - ն  $i$ -րդ շղթայի հապաղման ժամանակի ներքին (վերին) սահմանին համապատասխանող գծային կոորդինատն է,  $T_{\hat{a}(q)i}$  - ն`  $i$ -րդ շղթայի հապաղման ժամանակի ներքին (վերին) սահմանը,  $T_{\hat{a}(q)\max}$  - ը` տվյալ սխեմայի մուտքերից ելքեր ազդանշանի տարածման հապաղման ժամանակի ներքին (վերին) սահմանը: Ինչպես արդեն հիմնավորվել է նախորդ գլխում, հաջորդական սինքրոնացվող սխեմայի ճիշտ աշխատանքի ապահովման տեսանկյունից դրա մակամոդ համակցական սխեմայում պետք է ապահովել  $T_{\hat{a}\max} = T_{\hat{q}\max}$  պայմանը :

**Գծային կոորդինատային համակարգում սխեմայի տարրերի դիրքերի որոշումը:** Այս խնդրի լուծման

հիմքում ընկած է տարրերի դիրքերի ընտրությունը դրանց կից շղթաների ժամանակային պահուստները հաշվի առնելու ճանապարհով: Տեղաբաշխման ժամանակ շղթաների երկարությունների կառավարման նպատակով մտցված է ժամանակային տեսակետից շղթաների կարևորությունը բնութագրող որոշակի գործակից, որը կորոշվի տվյալ շղթայի ժամանակային պահուստի և սխեմայում առկա առավելագույն ժամանակային պահուստի հարաբերական մեծությամբ: Քանի որ որևէ շղթայի ցանկալի երկարությունը հակադարձ համեմատական է դրա ժամանակային պահուստին, ինչպես նաև հաշվի առնելով, որ  $T_{m_i=0}$ , որևէ  $j$ -րդ շղթայի համար այդ կարևորություն  $K_j$  գործակիցը կարելի է որոշել հետևյալ կերպ՝

$$K_j = 1 - \frac{R_j}{R_{\max}} : \quad (3.9)$$

Սխեմայի տարրերի դիրքերի գծային կոորդինատները որոշվում են հետևյալ նկատառումներով.

- յուրաքանչյուր տարր դիտարկվում է որպես դրան կից շղթաներից ձգողականության ենթարկվող նյութական կետ,
- յուրաքանչյուր շղթայի ձգողականության ուժը հակադարձ համեմատական է տվյալ շղթայի ժամանակի պահուստին,
- տարրերի համար ընտրվում են այնպիսի դիրքեր, որ սխեմայի ուժային համակարգը բերվի հավասարակշռության վիճակի,
- որպես տարրերի կոորդինատային հաշվարկման սկզբնական վերցվում են դրանց երկրաչափական կենտրոնները,

- տեղաբաշխման այս փուլում թույլատրվում են տարրերի փոխծածկումները և միջտարրային բացակները:

Չաշվի առնելով վերը բերված նկատառումները՝ որևէ  $i$ -րդ տարրի գծային կոորդինատը որոշող անալիտիկ արտահայտությունը կունենա հետևյալ տեսքը՝

$$X_{(C_i)} = \frac{\sum_{j \in G(C_i)} 0,5(X_{ij} + X_{ji})K_j}{\sum_{j \in G(C_i)} K_j}, \quad (3.10)$$

որտեղ  $T_{ij}$ -ն և  $T_{ji}$ -ն համապատասխանաբար  $j$ -րդ շղթայում ճիշտագրանշանի ձևավորման ժամանակի ներքին և վերին սահմաններին համապատասխանող գծային կոորդինատներն են;  $K_j$  - ն՝  $j$ -րդ շղթայի կարևորություն գործակիցը;  $G_{(C_i)}$  - ն՝  $C_i$  տարրին պատկանող շղթաների բազմությունը:

Վերը բերված գործողություններն արդյունքում կոորդինատային առանցքի վրա ստացվում է տարրերի անկանոն դասավորվածություն: Տարրերի տեղաբաշխման կարգավորման համար անհրաժեշտ է կատարել դրանց վերատեղաբաշխում, որը բացառի տարրերի փոխծածկումները և միջտարրային բացակները:

**Տարրերի տեղաբաշխման համահավասարեցում:** Սխեմայի տարրերի տեղաբաշխման համահավասարեցումը կատարվում է հետևյալ նկատառումներով.

- տարրերի շարային դասավորություն՝ ապահովելով դրանց փոխծածկումները և միջտարրային բացակների բացառումը,
- գծային կոորդինատային համակարգում տարրերի անկանոն դասավորվածության դիրքերի կոորդինատների նվազագույն



փոփոխություն, որը կհանգեցնի նախորդ  
նկատառման բավարարմանը:

Տարրերի տեղաբաշխման համահավասարեցումը  
կատարվում է հետևյալ քայլերի  
հաջորդականությամբ.

1. Այն տարրը, որի կորդինատային հաշվարկման  
սկզբնակետն ամենամոտն է կորդինատային  
առանցքի սկզբնակետին, տեղադրվում է շարային  
դասավորության սկզբում: Եթե այդ պայմանը  
բավարարում են մեկից ավել տարրեր, ապա որպես  
սկզբնական տարր ընտրվում է առավել քանակով 0-ին  
հավասար ժամանակային պահուստով շղթաներին կից  
տարրը: Եթե այս պայմանը բավարարում են մեկից  
ավելի տարրեր, ապա դրանցից ընտրվում է  
ցանկացածը:

2. Յուրաքանչյուր հաջորդ տեղաբաշխվող տարրի  
ընտրությունը կատարվում է ըստ նախորդ փուլում  
ստացված դիրքերի գծային կորդինատների աճի:  
Եթե այս պայմանը բավարարում են մեկից ավելի  
տարրեր, ապա ընտրությունը կատարվում է 1-ին  
քայլում բերված տրամաբանությամբ: Ընտրված  
յուրաքանչյուր տարրը տեղադրվում է վերջին  
տեղադրված տարրից հետո՝ առանց բացակի:

3. 1-ին և 2-րդ քայլերը կրկնվում են՝ մինչև վերջին  
տարրի տեղաբաշխումը:

Ունենալով տարրերի շարային տեղաբաշխումը՝  
անհրաժեշտության դեպքում այն պետք է  
վերատեղաբաշխել կողերի տրված հարաբերությամբ  
ուղղանկյան մակերեսի վրա 3.2 բաժնում  
նկարագրված ձևով:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարելի է  
ասել, որ առաջարկված է ԻՍ-երի տարրերի նախնական  
տեղաբաշխման նոր սկզբունք, որը, ի  
տարբերություն գոյություն ունեցողների  
տարրերի, տեղաբաշխումը կատարում է շղթաների

նախնական տեղաբաշխման հիման վրա: Այսպիսի մոտեցումը յուրաքանչյուր տարրի համար ապահովում է այնպիսի դիրքի ընտրություն, որը համամասնորեն է հեռացված տվյալ տարրին միացված շղթաների ժամանակի վերին սահմաններին համապատասխանող կոորդինատներից, ինչը հանգեցնում է ոչ միայն որոշիչ, այլ նաև մյուս բոլոր շղթաների երկարությունների համամասնական կառավարմանը:


### **3.4. Շղթաներում հապաղումների հաշվառմամբ տարրերի հարաբերական տեղաբաշխումը**

ԻՍ-երի ինտեգրման աճին գույքը նթաց՝ ավելանում է դրանց նախագծման բարդությունը և աշխատատարությունը: Այսպես, օրինակ՝ 18մմ x 18մմ մակերես գբաղեցնող, մոտ 10<sup>5</sup> տրամաբանական բջիջներ և 10<sup>6</sup> կարգի միջմիացումներ պարունակող, 500 մՅԳ հաճախականությամբ և 50 - 100 Վտ հզորությամբ թվային հանգույցի նախագծման գործընթացի կազմակերպումը պահանջում է բարձր որակավորմամբ ավելի քան 80 ճարտարագետ նախագծողներն ենթակազմված թիմ և արդյունքում՝ կարող է պահանջել մոտ 800 հազար \$ ներդրումներ [128]:

Գլուխ 1-ում դիտարկված ԻՍ-երի նախագծման ավանդական երթուղին (նկ. 1.4), ենթադրում է ֆիզիկական նախագծման իրագործման միասնական միջանցիկ ընթացակարգ: Այսպիսի երթուղին մեծ բարդության նախագծերի դեպքում կարող է հանգեցնել մեծ ծավալի անճշտությունների և թերությունների, որոնց վերացման համար հարկ կլինի ֆիզիկական նախագծման ամբողջ ընթացքի բազմակրկնակի ցիկլիկ կրկնություն: Այսպիսի մոտեցումը հանգեցնում է նախագծման ժամկետների զգալի ավելացման և վերջնական ֆիզիկական

Նախագծի ստացման համար կարող է պանջվել ամիսներ: Եթե հաշվի առնենք, որ ենթամիկրոնային ԻՍ-երում արագագործության պահանջների բավարարման տեսանկյունից մեծ դեր ունեն հապաղումները միջմիացումներում, որոնք ստացվում են ծրագրման արդյունքում, ապա հաճախ հարկ է լինում, վերը նշված ցիկլիկ կրկնությունների ժամանակ, տարրերի վերատեղաբաշխման ճանապարհով հիմնավորապես փոփոխել ընթացիկ տպուկ գիական կառուցվածքը:

Նախագծման այսպիսի երթուղին, ստանդարտ գրադարանային բջիջների վրա կառուցված ԻՍ-երի դեպքում, հանգեցնում է միջմիացումների երկարությունների երկու բնութագրիչ խմբի առաջացման, որոնց որակական բաշխումը բերված է




Նկ .3.14-ում [129]:

Նկ .3.14. Թվային ԻՍ-երի միջմիացումների երկարությունների բաշխումը

Լոկալ միջմիացումները պայմանավորված են տրամաբանական բջիջների ներքին միջտրանզիստորային միջմիացումներով, որոնց երկարությունները համաչափ են բջիջների

տոպոլոգիական չափսերին և, օրինակ, 32 նմ տեխնոլոգիայի դեպքում կազմում են 3 մկմ-ի կարգի: Գլոբալ միջմիացումները պայմանավորված են միջբջջային կապերով և կարող են տարածվել տվյալ նախագծի գբադեցրած ամբողջ մակերեսով, իսկ նրանց երկարությունները համաչափ են կիսահաղորդչային բյուրեղի գծային չափսերին և կազմում են  $10^4$  մկմ կարգի: Եթե ընդունենք, որ տրանզիստորների և ստանդարտ բջիջների էլուստների քանակները նույն կարգի են, իսկ մեկ բջջում տրանզիստորների քանակը 10-ի կարգի է, ապա լոկալ և գլոբալ միջմիացումների գումարային երկարությունների հարաբերության կարգը կլինի  $10^{-3}$ : Ասվածից հետևում է, որ հապաղումների հիմնական մասը բաժին է ընկնում գլոբալ միջմիացումներին:

Ստորև նկարագրված է ԻՍ-երի տարրերի տեղաբաշխման խնդրի լուծման հարաբերական գուգահեռականացված ընթացակարգ, որն ապահովում է գլոբալ և լոկալ միջմիացումների քանակների հարաբերական փոփոխությունն՝ ի նպաստ լոկալ միջմիացումների քանակի ավելացման [130]: ԻՍ-երի տարրերի տեղաբաշխման առաջարկվող




հարաբերական գուգահեռականացված ընթացակարգի երթուղին բերված է նկար 3.15-ում :

Նկ. 3.15. ԻՄ-երի տարրերի հարաբերական տեղաբաշխման երթուղին

Առաջարկվող մոտեցումը հնարավորություն է տալիս գլոբալ միջմիացումների միմասը վերածել անհամեմատ ավելի կարճ ներմոդուլային միջմիացումների, որոնց երկարությունները մոտենւոկալ միջմիացումների երկարություններին : Միջմիացումների երկարությունների այսպիսի վերաբաշխման որակական փոփոխությունը պատկերված է նկ. 3.14-ում կետագծային բաշխման կորով : Այսպիսի մոտեցման արդյունավետությունը կախված է սխեմայի մասնատման որակից :

Առաջարկվող մոտեցումը դիտարկենք նկ.3.16-ում բերված թեստային տրամաբանական սխեմայի



Նկ. 3.16. Թեստային սխեմայի ժամանակային վերլուծությունը և մասնատումը մոդուլների

տարրերի տեղաբաշխման օրինակով :

Դիտարկվող սխեմայի մասնատումը մոդուլներին կատարված է շղթաների ժամանակային պահուստների հաշվառմամբ, որոնց արժեքները գնահատվում են նախորդ գլխում դիտարկված մեթոդաբանությամբ:

Պարզության համար դիտարկվող օրինակում բոլոր տրամաբանական տարրերի հապաղումներն ընդունված են հավասար 10 պայմանական միավորի: Շղթաների համար ազդանշանի ձևավորման ներքին, վերին սահմանների և ժամանակի պահուստների արժեքները, որոնք հաշվարկված են համապատասխանաբար (2.19), (2.20) և (2.21) բանաձևերով, բերված են նկ.3.16-ում:

Սխեմայի մասնատումը կատարվել է մասնատման հաջորդական ալգորիթմի օգտագործմամբ [14], որում որպես որակի չափանիշ է ծառայում մոդուլների միջև կապերի քանակի նվազարկումը: Արդյունքում՝ ձևավորված են 3 մոդուլներ, որոնց համար կատարված է տարրերի ներմոդուլային գծային տեղաբաշխում՝ նախորդ բաժնում նկարագրված տեղաբաշխման հաջորդական ալգորիթմի միջոցով:

Այսպիսի մոտեցման արդյունավետությունը կախված է մասնատվող մոդուլների մեծությունից և սխեմայի մասնատման որակից:


Ստորև առաջարկված է սխեմայի մասնատման մոդուլներին մեծության գնահատման մեթոդ, որը հիմնված սխեմայի տրամաբանական խորություն, այսինքն՝ տրամաբանական տարրերի կասկադների թվի մոտավոր գնահատման վրա [131, 132, 133]: Այն հիմնված է Ռենտի գործակցի վրան ունի հետևյալ տեսքը [133]՝

$$H = 10^{(1-P) \lg n}, \quad (3.11)$$

որտեղ  $n$  - ը մասնատվող սխեմայի տարրերի թիվն է,  $H$  - ը՝ մոդուլում տարրերի թիվը,  $P$  - ն՝ Ռենտի ցուցիչը, որը ժամանակակից թվային սխեմաներում կարող է տատանվել 0,4-ից 0,6 միջակայքում [132]:

Այս պեսս, օրինակ, նկ. 3.16-ում դիտարկված սխեմայի համար, որում  $n=12$ , ընդունելով  $P=0,5$ , կստանանք  $H \approx 3,5$ :

Հարաբերական տեղաբաշխման վերջնական տեսքը բերված է նկ. 3.17-ում:



Նկ. 3.17. Թեստային սխեմայի տարրերի հարաբերական տեղաբաշխումը

Նկարում պատկերված են որոշիչ շղթաները, որոնք հիմնականում իրագործված են ներմոդուլային միջմիացումների մակարդակում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի էասել, որ ենթամիկրոնային թվային ԻՍ-երի տարրերի ժամանակով ուղղորդված տեղաբաշխման վերը շարադրված մոտեցումն ապահովում է մոդուլներին բազմուղյան գույքահեռականացված նախագծման հնարավորությունն՝ նախագծման երթուղու հետադարձ կապերի խորուղյան փոքրացմամբ, ինչը կհանգեցնի նախագծման ժամկետների կրճատման և նախագծային լուծումների կանխատեսելիության մեծացման:

**3.5. Ժամանակով ուղղորդված նախնական տեղաբաշխման իրագործումը և սխեմայի արագագործության գնահատումը**

Թվային ԻՍ-երի տարրերի ժամանակով ուղղորդված տեղաբաշխման առաջարկված և վերը շարադրված մեթոդների հիման վրա մշակվել է գրադարանային

ստանդարտ բջիջների հենքի վրա ժամանակով  
 ուղղորդված նախնական տեղաբաշխման ծրագրային  
 գործիք, որն իրագործված է C++ ԷԳՎՈՎ և փորձարկված  
 է մի շարք թեսթային սխեմաների համար [13, 125]:  
 Մշակված ծրագրային գործիքում իրագործված է  
 թվային ԻՍ-երի տարրերի տեղաբաշխման փոփոխում  
 դրանց արագագործ ության ապահովման և գնահատման  
 միջոցների համալիր ընթացակարգ, որը իրագործում  
 է հետևյալ երեք նախագծային գործառնությունները՝


- սխեմայի բոլոր շղթաների համար  
 ժամանակային պարամետրերի հաշվարկ,
- տարրերի ժամանակով ուղղորդված  
 տեղաբաշխում,
- տեղաբաշխումից հետո սխեմայի  
 արագագործ ության գնահատում:

Նշված գործառնությունների իրագործման երթուղին  
 բերված է նկ. 3.18-ում:

Մշակված ծրագրային գործիքի համար որպես  
 մոլտքային տվյալներ ծառայում են՝

1. սխեմայի փականային մակարդակի Verilog  
 նկարագրող ությունը,
2. ստանդարտ բջիջների գրադարանը, որի տարրերը  
 պետք է օգտագործվեն նախնական տեղաբաշխման  
 իրագործման համար,
3. տեղաբաշխման ձևաչափը՝ գծային կամ կոդերի  
 տրված հարաբերություններով՝ ուղղանկյուն:





*Նկ. 3.18. Թվային ԻՍ-երի տարրերի ժամանակով ու ռդդորդով ածտեղաբաշխման և արագագործ ու թյան գնահատման առաջարկվող երթուղին*

Որպես ԵԼՔային արդյունքներ ստացվում են՝

1. սխմայի մուտքեր-ելքեր բոլոր ուղիների ցուցակը ,
2. յուրաքանչյուր շղթայի համար ճիշտ ազդանշանի ձևավորման ժամանակի ներքին և վերին սահմանները ,
3. յուրաքանչյուր շղթայի ժամանակի պահուստը ,

4. շղթաների և տարրերի կոորդինատները գծային տեղաբաշխման դեպքում,

5. ուղղանկյուն տեղաբաշխման դեպքում տարրերի տեղաբաշխման կոորդինատները,

6. շղթաների կիսապարագծային մոդելները,

7. կիսապարագծային մոդելով շղթաների հապաղումներին գնահատումը,

8. սխեմայի մուտք-ելք բոլոր ուղիների հապաղումներին գնահատումը՝ հաշվի առնելով ինչպես տարրերի, այնպես էլ շղթաների հապաղումները:


Մշակված ծրագրային գործիքն ունի զարգացած գրաֆիկական ինտերֆեյս, որը թույլ է տալիս ինչպես տեղաբաշխման վերջնական արդյունքի, այնպես էլ այնպիսի միջանկյալ արդյունքների արտապատկերումը, ինչպիսիք են շղթաներում ճիշտագդան շանի ձևավորման ժամանակին ներքին և վերին սահմաններին համապատասխանող գծային կոորդինատները, տարրերի նախնական տեղաբաշխումը գծային կոորդինատային համակարգում, տարրերի վերջնական շարային տեղաբաշխումը, տարրերի երկչափ տեղաբաշխումը, շղթաների կիսապարագծային մոդելների արտապատկերումը տեղաբաշխման արդյունքի վրա:

Մշակված ծրագրային գործիքի աշխատանքի արդյունքները ներկայացված են երրորդ գլխում դիտարկված a28 թեստային սխեմայի օրինակով: Որպես տարրային հենք օգտագործված է SAED90 թվային ստանդարտի չափերի գրադարանը:


Նկ. 3.19-ում պատկերված է գծային առանցքի վրա (3.10) բանաձևով ստացված տարրերի ոչ կանոնավոր տեղաբաշխումը: Նույն նկարում բերված են նաև գծային առանցքի վրա շղթաներում ճիշտագդան շանի ձևավորման ժամանակին ներքին և վերին սահմաններին համապատասխանող կոորդինատները:

Նկ. 3.20-ում պատկերված է տարրերի կանոնավոր շարային տեղաբաշխումը, որում վերացված են փոխածածկումները և միջտարային բացակները:


Ստացված շարային տեղաբաշխումից անցումը երկչափ տեղաբաշխման կատարված է 3.2 ենթագլխում նկարագրված մեթոդաբանությամբ: Նկ. 3.21-ում պատկերված է  $K=1/2$  կողերի հարաբերության դեպքում երկչափ տեղաբաշխման արդյունքը: Տեղաբաշխման մակերեսը ստացվել է  $110,07 \text{ մկմ}^2$ : Տեղաբաշխվող բջիջների գումարային մակերեսը  $99,3 \text{ մկմ}^2$  է: Արդյունքում՝ ստացվել է 9,8% չօգտագործված մակերես:



Նկ. 3.19. a28թ ե ս տայ ի ն ս խե մ այ ի տարրերի անկանոն գծային տեղաբաշխումը




Նկ. 3.20. a28 թե ս տայ ի ն ս խե մ այ ի տարր եր ի կանոնավոր



շարայ ի ն տեղաբաշխումը

Նկ. 3.21. a28 թե ս տայ ի ն ս խե մ այ ի տարր եր ի երկչափ տեղաբաշխումը


Ինչպես արդեն նշվել է, տեղաբաշխումից հետո սխեմայի շղթաներով պայմանավորված ժամանակային վերլուծությունը կատարվել է կիսապարագծային մոդելի միջոցով: Նկ. 3.22-ում բերված է շղթաների կիսապարագծային մոդելների արտապատկերումը տարրերի երկչափ տեղաբաշխման վրա: Որպես շղթաների միացման հաշվարկային



կոորդինատներ վերցված են համապատասխան տարրերի երկչափական կենտրոնները:


*Նկ. 3.22. Շղթաների կիսապարագծային մոդելների արտապատկերումը a28 թեստային սխեմայի տարրերի երկչափ տեղաբաշխման վրա*

Արդյունքների համեմատության համար կատարված են աննույն սխեմայի տարրերի նախնական տեղաբաշխում Սինոփսիս ընկերության



Ֆիզիկական սինթեզի IC Compiler ծրագրային գործիքով, որի արդյունքը բերված է նկ. 3.23-ում:

Նկ. 3.23. a28 թե ստայի ն սխեմայի տարրերի նախնական տեղաբաշխումը Սինոփսիսը նկերոն թյան ֆիզիկական սինթեզի IC Compiler ծրագրային գործիքով Կիսապարագայի ն մոդելով շղթաների երկարությունը ն ների գնահատումը կախված շղթաների ժամանակի պահուստներից, ներկայացված



Ե նկ. 3.24 - ում հիստոգրամի տեսքով: Ծղթաները խմբավորված են ըստ ժամանակի պահուստի աճի:

Հիստոգրամում բերված են նույն սխեմայի տարրերի նախնական տեղաբաշխման արդյունքները հետևյալ չորս տեսակներով՝

- Հաջորդական տեղաբաշխման ալգորիթմի տարրերի կապվածություն (3.7) չափանիշի կիրառմամբ,
- 3.2 պարագրաֆում ներկայացված շղթաների ժամանակային պահուստները հաշվի առնմող հաջորդական տեղաբաշխման ալգորիթմով,

- 3.3 պարագրաֆում ներկայացված շրթաների նախնական դասավորման վրա հիմնված տարրերի ժամանակով ուղղորդված տեղաբաշխման ալգորիթմով,

- IC Compiler ծրագրային գործիքով:


Ինչպես երևում է նկարից, գրոյական ժամանակի պահուստով որոշիչ շրթաների ամենակարճ երկարությունները ստացվել են շրթաների նախնական դասավորման վրա հիմնված տարրերի՝ ժամանակով ուղղորդված տեղաբաշխման դեպքում: Այսպես, օրինակ՝ շրթաների նախնական դասավորման վրա հիմնված տարրերի ժամանակով ուղղորդված տեղաբաշխման դեպքում, համեմատած տարրերի կապվածությունամբ տեղաբաշխման հետ, ապահովվել է որոշիչ շրթաների երկարության 30% նվազում՝ բոլոր շրթաների գումարային երկարության շուրջ 10% աճի պայմաններում: Այս արդյունքը ավելի մեծ է ստացվել Սինոֆուս ընկերության \$իզիկական սինթեզի IC Compiler ծրագրային գործիքով նախնական տեղաբաշխման համեմատ՝ կազմելով համապատասխանաբար 50% և 15%: Միևնույն ժամանակ նկատվել է IC Compiler-ի համեմատ տեղաբաշխման մակերեսի շուրջ 8,5% մեծացում: Սա բացատրվում է նրանով, որ IC Compiler-ի նախնական տեղաբաշխման դեպքում հիմնական ուշադրությունը սևեռվում է մակերեսի փոքրացման վրա՝ ժամանակային լավարկման հարցերը թողնելով տեղաբաշխման հաջորդ՝ օպտիմալացման փուլին:

Առաջարկվող մեթոդի արդյունավետությունն ավելի ակնհայտ է մեծ սխեմաների տարրերի տեղաբաշխման դեպքում: Նկ. 3.25-ում ցույց է տրված տեղաբաշխումից հետո ISCAS 85 սերիայի C5315 ամենամեծ թեստային համակցական սխեմայի մոնտքեր-ելքեր ուղիներին հապաղումների հարաբերական աճի

դիագրամը: Այդ սխեման պարունակում է 2307 բջիջ և 3008 շղթա:

Քանի որ այդ ուղիների քանակը շատ մեծ է և հավասար է 1.341.304, պատկերավոր լինելու համար դիտարկված է այդ ճանապարհների որոշակի պատահական ընտրանք՝ ներառելով նվազագույն և առավելագույն հապաղմամբ ուղիները, որոնք կազմում են համապատասխանաբար 159 և 4178 *պվ*: Ինչպես երևում է հիստոգրամից, տեղաբաշխման արդյունքում որոշիչ և դրանց մոտիկ ուղիները նվազագույն հապաղմամբ ուղիների համեմատ, ցուցաբերել են շղթաներով պայմանավորված հարաբերական հապաղման ավելի քան 25%-ով փոքր աճ:

Շղթաներով ազդանշանի հապաղումը գնահատվել է կիսապարագծային մոդելով որոշված երկարության միջմիացման վրա՝ տրված տեխնոլոգիային բնորոշ հապաղմամբ: Որպես հապաղման մոդել օգտագործվել է RC հապաղման պարզեցված էլմորյան մոդելը, որն ապահովում է բավարարձ շտուրթյուն և պահանջում է համեմատաբար փոքր հաշվարկային ծամանակ:



Նկ. 3.25. C5315 թեստային սխեմայի մոլտքեր-ելքեր ճանապարհների հապաղումների հարաբերական աճի բաշխման հիստոգրամը

$T_{un+2}$  և  $T_2$  - ը համապատասխանաբար մոլտքեր-ելքեր ճանապարհների ամբողջական և միայն շղթաներով...



Եթե տարրերի փոխանջատման և արու մը ընդունվի մոտավորապես հավասար տրամաբանական մակարդակների տարբերություն կեսին, որևէ իրդ շղթայի համար, կախված դրա երկարությունից, հապաղումը կարելի է գնահատել երկու տիպի մոդելներով՝ կենտրոնացված և բաշխված պարամետրերով [134]՝

$$t_i = \begin{cases} 0,69rcL_i L_i J 120t_{\min} & \text{մկմ համար,} \\ 0,38r_0c_0L_{0i}^2 & \text{մնացած շղթաների համար,} \end{cases} \quad (3.12)$$

որտեղ՝  $r$ -ը միավոր երկարության միջմիացման դիմադրությունն է [ՕՄ/Մկմ],  $c$ -ն՝ ունակությունը [ՖՖ/Մկմ],  $L$ -ը՝ տվյալ միջմիացման կիսապարագծային մոդելի երկարությունը [Մկմ],  $t_{\min}$ -ն՝ տեղաբաշխվող բջիջների նվազագույն հապաղումը [սկմ],  $r_0=120t_{\min}r$ ,

$$c_0=120t_{\min}c, \quad L_{0i} = \frac{L_i}{120\tau_{\min}}$$

Օգտագործված SAED90 գրադարանի համար  $t_{\min}=39$  սկմ, իսկ  $r$  և  $c$ -ի համար ընդունված են հետևյալ արժեքները՝  $r=320$  ՕՄ/Մկմ և  $c=1,8$  ՖՖ/Մկմ [1]:

Առաջարկված մեթոդով ժամանակով ուղղորդված տեղաբաշխման արդյունքում ստացված ժամանակային պարամետրերը, միջարք թեստային սխեմաների համար, բերված է աղ.3.2-ում:

Մշակված ծրագրի միայն տեղաբաշխմանը վերաբերող մասի աշխատանքի ժամանակացույցի արդյունքները, կախված սխեմայի բարդությունից, բերված է նկ.3.26-ում:


### Աղյուսակ 3.2

Թեստային սխեմաների տարրերի տեղաբաշխման արդյունքում հապաղումների գնահատված արժեքները

Պարամետրերը	Թեստային սխեմայի նշանակումը				
	C17	a28	C432	C1908	C5315
1	2	3	4	5	6
Բջիջների քանակը	6	11	160	880	2307

Շղթաների քանակը	11	17	272	1028	3008
Մեկ շղթայի միջին հապաղումը [սվ]					
1	2	3	4	5	6
առավելագույն պահուստով	2	4,4	8,5	32	77
միջին պահուստով	0	3,2	5,4	15	27
որոշիչ	1,6	2,6	3,5	12	14
Շղթայի հապաղման հարաբերական նվազումը $((t_{max} - t)/t_{max})100\%$ :					
առավելագույն պահուստով	0	0	0	0	0
միջին պահուստով	-	28	37	54	65
որոշիչ	20	41	59	63	82
Միայն բջիջներով պայմանավորված ուղիներին հապաղումը [սվ]					
առավելագույն պահուստով	102	194	701	1250	89
միջին պահուստով	0	235	1070	1842	1750
որոշիչ	153	350	1453	2475	3414
Միայն շղթաներով պայմանավորված ուղիներին հապաղումը [սվ]					
առավելագույն պահուստով	4	4,4	119	331	155
միջին պահուստով	0	8	108	648	954
որոշիչ	5	7,8	249	597	944

Աղյուսակ 3.2-ի շարունակական թյունը



Ինչպես երևում է նկարից, սկսած մոտ 50 տարրերից և շղթաներից կազմված սխեմաներից ծրագրի աշխատանքի ժամանակը ցուցաբերում է սխեմայի բարդություններից կախված գծային կախվածություն, որը լինվիս բավարարում է նախնական տեղաբաշխման ալգորիթմներին ներկայացվող պահանջները:

### **Եզրակացություններ**

1. Առաջարկվել են թվային ԻՍ-երի շղթաների ժամանակային պահուստները հաշվի առնող, տարրերի տեղաբաշխման ալգորիթմ և ծրագրային միջոց: Առաջարկված ալգորիթմն ապահովում է որոշիչ շղթաների երկարության 30-35% նվազում, բոլոր շղթաների գումարային երկարության ոչ ավելի, քան 25% աճի պայմաններում:

### **Նկ. 3.26 Տեղաբաշխման ենթացիկ աշխատանքային ժամանակի կախումը սխեմայի բարդություններից**

2. Առաջարկվել են թվային ԻՍ-երի շղթաների նախնական տեղաբաշխման վրա հիմնված տեղաբաշխման նոր ալգորիթմ և ծրագրային միջոց: Առաջարկված ալգորիթմը, կախված սխեմայի բարդություններից, առավելագույն պահուստով շղթաների համեմատապահովում է որոշիչ շղթաների հապաղումների 20...80% նվազում: Ընդ որում, եթե հաշվի առնենք, որ տեսնուկոգիական չափսերի նվազմանը գուցե չենք սխեմայում առկա հապաղումներում աճում է միջմիացումներով պայմանավորված հապաղումների մասնաբաժինը, ապա պահանջատե, որ առաջարկված մեթոդի արդյունավետությունը համապատասխանաբար կաճի:

3. Առաջարկվել է ստանդարտ բջիջների շարային տեղաբաշխումից կողերի տրված հարաբերությունամբ ուղղանկյան վրա երկչափ տեղաբաշխման ալգորիթմ:

4. Առաջարկվել է, տեղաբաշխման արդյունքում սխեմայի արագագործության գնահատման միջոց՝ հիմնված կիսապարագային մոդելի վրա:

5. Ներկայացված են մշակված միջոցների ծրագրային իրագործումը և թեստային սխեմաների համար, դրա փորձարկման արդյունքները:

#### **Գ Լ ՈՒ Խ 4. Թ Վ Ա Յ Ի Ն Ի Ն Տ Ե Գ Ր Ա Լ Ս Խ Ե Մ Ա Ն Ե Ր Ի Տ Ա Ր Բ Ե Ր Ի Ջ Ե Ր Մ Ա Յ Ի Ն Տ Ե Ղ Ա Բ Ա Շ Խ ՈՒ Մ Ը**

##### **4.1. Ջ Ե Ր Մ Ա Յ Ի Ն Տ Ե Ղ Ա Բ Ա Շ Խ ՈՒ Մ Ը Ո Ր Ա Ե Ս Ի Ն Տ Ե Գ Ր Ա Լ Ս խ Ե մ ան Ե Ր Ի հ ո Լ ս ա Լ ի ո Լ թ Յ ան ք ար ձ ր ա ց մ ան մ ի ջ ո ց**

Է ն ե Ր գ ա ս պ առ մ ան չ ն վ ա գ ո ղ ք ար ձ ր մ ա կ ար դ ա կ ն ե Ր ի պ ա յ մ ան ն ե Ր ո Լ մ Ի Ս -ե Ր ի ի ն տ Ե գ Ր մ ան ան ը ն դ հ ա տ ա ճ ը հ ան գ Ե ց ն ո Լ մ Է կ ի ս ա հ ա ղ ո Ր դ չ ա յ ի ն ք յ ո Լ ր Ե ղ ի տ Ե ս ա կ ար ար Է ն ե Ր գ ա ս պ առ մ ան ան ը ն դ հ ա տ ա ճ ի ն : Մ ի ա ժ ա մ ան ա կ , ն ո Լ յ ն ի ս կ ա մ Ե ն ա Լ ա վ ջ Ե Ր մ ա հ Ե ո ա ց մ ան հ ն ար ա վ ո Ր ո Լ թ Յ ո Լ ն ն ե Ր ո վ պ ա տ յ ան ն ե Ր ի օ գ տ ա գ ո Ր ծ մ ան պ ա յ մ ան ն ե Ր ո Լ մ , ի ն չ պ Ե ս ար դ Ե ն ն շ վ Ե Լ Է առ ա ջ ի ն գ Լ խ ո Լ մ , կ ի ս ա հ ա ղ ո Ր դ չ ա յ ի ն ք յ ո Լ ր Ե ղ ի ա շ խ ա տ ան ք ա յ ի ն ջ Ե Ր մ ա ս տ ի ճ ան ն ե Ր ը կ ար ո ղ Է ն


գերազանցել 100°C-ը, իսկ բյուրեղի տարբեր տեղամասերում ջերմաստիճանային տարբերությունները՝ տասնյակ աստիճանները [1, 2, 8, 9, 13, 17-20,]:

Բարձր ջերմաստիճանը բացասական ազդեցություն է ունենում նաև ԳՄԻՍ-ների ժամանակային բնութագրերի վրա: Աշխատանքային ջերմաստիճանի յուրաքանչյուր 10°C-ով բարձրացման դեպքում ՄՕԿ տրանզիստորի տանող ուժը փոքրանում է մոտավորապես 4%-ով, իսկ միջմիացումներով պայմանավորված հապաղումները՝ 5%-ով: Չնախատեսված մեծ ջերմաստիճանային գրադիենտը որոշ դեպքերում կարող է հանգեցնել նույնիսկ տրամաբանական սխալների առաջացման [1, 2, 13]:

Ինչպես հայտնի է, ԻՍ-ի անխափան աշխատանքի միջին ժամանակի կախվածությունը ջերմաստիճանից ( $T_{միջ}(\theta)$ ) ունի էքսպոնենցիալ տեսք (նկ. 4.1) և բնութագրվում է Բլեյբի օրենքով [20, 135]՝

$$T_{միջ}(\theta) = AJ^{-m} \exp\left(\frac{E}{k\theta}\right), \quad (4.1)$$

որտեղ  $A$  պարամետրը կախված է տեխնոլոգիական միկրոկառուցվածքից,  $J$ և  $m$  հոսանքի խտությունն է, իսկ  $m$  ցուցիչը  $J=(0,2\text{-ից } 2,0)10^6 \text{ Ա/սմ}^2$  սահմաններում ընդունում է  $n=1\text{-ից } 2$  արժեքը,  $E$ և  $k$  ակտիվացման էներգիան է, որով կախված է օգտագործվող նյութերի տեսակից  $E$ , ալյումինե միջմիացումներով կիսահաղորդիչի ն ԻՍ-երի դեպքում ընդունում է  $E=0.5, \dots, 0.6 \text{ eV}$  արժեքը:  $k$  Բոլցմանի հաստատուն է, իսկ  $\theta$ -ն՝ ԻՍ-ի բացարակ ջերմաստիճանը,  $^\circ\text{K}$ ,  $\Delta\theta$ -ն՝ ԻՍ-ի բացարձակ ջերմաստիճանի գերազանցման չափը,  $300^\circ\text{K}$ :



Նկ. 4.1. Էլեկտրամիգրացիայով պայմանավորված՝ մինչև խափանումը միջին ժամանակի կախումը ջերմաստիճանից

ԻՍ-ի բյուրեղի վրա տեղային բարձր ջերմային տիրույթներին առկայ ությունը կարող է հանգեցնել սխեմայի առանձին տեղամասերի աշխատանքի վատթարացմանը և հոլսալի ության անկմանը: Բարձր ջերմույթյան առկայ ությունն արագացնում է ԻՍ-երի կառուցվածքներում և օգտագործվող նյութերում ոչ ցանկալի ֆիզիկա-քիմիական գործընթացները, ինչը ժամանակի ընթացքում կարող է հանգեցնել սխեմայի աշխատանքի վերջնական խափանմանը [1, 2, 136, 137]:

Այսպիսով, ԻՍ-ի կիսահաղորդչային բյուրեղի աշխատանքային ջերմաստիճանի բարձրացումը հանգեցնում է դրա հոլսալի ության կտրուկ անկմանը:

Ջերմաստիճանի իջեցման ավանդական միջոցներ՝ ջերմացրիչների և հովացուցիչների օգտագործումը ոչ միշտ է արդարացված, իսկ օրեցօր ընդլայնվող դյուրակիր և ինքնաբավ սնուցմամբ սարքերի դեպքում դրանց կիրառումն ընդհանրապես հնարավոր չէ:

Յետևաբար, ԻՍ-երը նախագծելիս հրատապ են դառնում դրանց ջերմային հոլսալի ության բարձրացման միջոցների մշակման հարցերը:

ԻՍ-երի ֆիզիկական նախագծման ժամանակ ջերմային ռեժիմի ապահովման տեսանկյունից կարևորվում է ոչ միայն կիսահաղորդչային բյուրեղի ջերմաստիճանը, այլև ջերմային գրադիենտը: Այս տեսանկյունից հոլսալի ության բարձրացման արդյունավետ ճանապարհ կարող է լինել կիսահաղորդչային բյուրեղի տարբեր տեղամասերում ջերմաստիճանային

տարբերություններին վազեցումը: Սա, առաջին հերթին, վերաբերում է տարրերի տեղաբաշխման փոփոխության: Տեղաբաշխման փոփոխումը ջերմային դաշտի տոպոլոգիական համահարթեցումը կնպաստի բյուրեղի տաք տեղամասերի ջերմաստիճանների իջեցմանը, որոնք ջերմային հոսքի իրականացմանը, առումով առավել վտանգավոր են: Միեւնույն ժամանակ, բյուրեղի համեմատաբար սառը տեղամասերում կնկատվի ջերմաստիճանի որոշակի բարձրացում, քանի որ դրանք կկատարեն յուրօրինակ միկրոհոսքի շարժման գործառնություն: Տեղաբաշխման փոփոխումը կարևորվում է նաև անալոգային և խառը ազդանշանային ԻՍ-երի ֆիզիկական նախագծման առանձնահատկությունները հաշվի առնելը: Այս դեպքում սխեմայի բալանսավորվող տեղամասերում տրանզիստորային գոյացրի տարբեր տրանզիստորների աշխատանքային ռեժիմների նույնականության անհրաժեշտություն է առաջանում: Այդպիսի սխեմաների օրինակներ են դիֆերենցիալ օպերացիոն ուժեղարարները, կոմպարատորները, անալոգ-թիվ և թիվ-անալոգ ձևափոխիչները և այլն: Այդ դեպքերում գոյացրի տրանզիստորների ջերմաստիճանների տարբերությունը, որպես կանոն, չպետք է գերազանցի 0,1-ից 0,3°C-ը [13]: Յետևաբար, կարևորվում է ջերմային մոնիթորինգի և վերլուծության միջոցների օգտագործումը տարրերի տեղաբաշխման փոփոխում, ինչը թույլ կտա խոստովել նման իրավիճակներից:

Քանի որ ջերմային դաշտի տոպոլոգիական բաշխումը հիմնականում կախված է տարրերի տեղաբաշխումից, ներկայումս առաջնահերթ կարևորություն է ստանում ջերմային տեղաբաշխման մեթոդների և միջոցների մշակումը

ուսանողները ԻՍ-երի ֆիզիկական նախագծման ավտոմատացման համակարգերում: Այս նպատակով, առաջին հերթին, անհրաժեշտությամբ առաջանում է քերական տեղաբաշխման այնպիսի չափանիշների մշակման, որոնք հարմար ձևով ինտեգրվեն նախորդ գլխում քննարկված սխեմաների էլեկտրական կապվածության և ժամանակային հապաղումների վրա հիմնված չափանիշների հետ:

ԻՍ-երի քերական տեղաբաշխման տեսանկյունից ստորև ներկայացված է հեղինակի կողմից կատարված հոլսալիություն և տարրերի քերամաստիճանների բաշխվածության փոխկապվածության վերլուծությունը [13, 138-143]:

ԻՍ-ի նորմալ աշխատանքային ժամանակահատվածի համար, որը բնութագրվում է խափանումների հանդես գալու հավանականությունների անկախության մեկ դրանք բաշխման էքսպոնենտային օրենքով, ԻՍ-ի առավելագույն հոլսալիության ապահովման պայմանը կարտահայտվի դրանխափան աշխատանքի հավանականության առավելագույն արժեքի ապահովման պայմանով [144]՝

$$P(T, \theta) = \exp\left(-T \sum_{i=1}^n v_i(\theta_i)\right) \rightarrow \max, \quad (4.2)$$

որտեղ  $P(T, \theta)$ -ն ԻՍ-ի անխափան աշխատանքի հավանականությունն է՝ կախված ժամանակից  $T$ , և քերամաստիճանից  $\theta$ ,  $v_i(\theta_i)$ -ն՝  $i$ -րդ տարրի խափանման ինտենսիվությունը  $\theta_i$  քերամաստիճանի դեպքում, որը՝ ԻՍ-ում դիտարկվող տարրերի քանակը:

Բարձր ինտեգրման աստիճանով ԻՍ-երի դեպքում մեկ ԻՍ-ի սահմաններում (4.1)-ի բոլոր պարամետրերը, բացի  $\theta$  քերամաստիճանից, կարելի է ընդունել մոտավորապես հավասար բոլոր տարրերի համար: Եթե (4.1)-ում, պարզեցման նպատակով, կատարվեն հետևյալ



նշանակումները՝  $B = (AJ^{-m})^{-1}$  և  $C = \frac{k}{E}$ , ինչպես նաև հաշվի առնելով, որ (4.2) պայմանում անխափան աշխատանքի  $P(T, \theta)$  հավանականությունը,  $(v_i(\theta_i))$ -ից կախված, մոնոտոն նվազող ֆունկցիա է, և քանի որ խափանումների ինտենսիվությունը  $(v(\theta))$  հակադարձ համեմատական է անխափան աշխատանքի միջին ժամանակին  $(T_{սրբ}(\theta))$ , ապա (4.2)-ից առավելագույն հոլսալիությունն ապահովման պայմանը՝ կախված ջերմաստիճանից, կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$v_i(\theta_i) = (T_{սրբi}(\theta_i))^{-1} = (B \exp(C\theta_i)) \rightarrow \min: \quad (4.3)$$

Քանի որ (4.3)-ում  $v_i(\theta_i)$ -ն ջերմաստիճանից կախված մոնոտոն աճող ֆունկցիա է, ապա էքսպոնենտը վերլուծելով աստիճանային շարքի և սահմանափակվելով առաջին երկու կախյալ անդամներով, առավելագույն հոլսալիությունն ապահովման պայմանը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$\sum_{i=1}^n (a_i + b_i \theta_i + c_i \theta_i^2) \rightarrow \min, \quad (4.4)$$

որտեղ  $a_i, b_i$  և  $c_i$  բազմանդամի գործակիցներ են:

Որպեսզի (4.4) պայմանը բերվի ԻՍ-ում տարրերի տեղաբաշխման խնդրի համար հարմար տեսքի, սահմանենք ԻՍ-ի տարրերի միջին ջերմաստիճանը՝ որպես բոլոր տարրերի ջերմաստիճանների միջին

թվաբանական՝  $\theta_{սրբ} = \frac{\sum_{i=1}^n \theta_i}{n}$  և (4.4)-ում կատարենք որոշ

ձևափոխություններ՝

$$\begin{aligned} \sum_{i=1}^n (a_i + b_i \theta_i + c_i \theta_i^2) &= \sum_{i=1}^n (a_i + b_i \theta_i + c_i (\theta_i - \theta_{սրբ} + \theta_{սրբ})^2) = \\ &= \left( \sum_{i=1}^n a_i + \sum_{i=1}^n b_i \theta_i + \sum_{i=1}^n c_i (\theta_i - \theta_{սրբ})^2 + 2 \sum_{i=1}^n c_i (\theta_i - \theta_{սրբ}) \theta_{սրբ} + \sum_{i=1}^n c_i \theta_{սրբ}^2 \right) \rightarrow \min: \end{aligned} \quad (4.5)$$

Ակնհայտ է, որ (4.5) արտահայտության նվազագույն արժեքի ստացման նպատակով անհրաժեշտ է ապահովել բոլոր հինգ գումարելիների նվազագույն արժեքները: ԻՍ-ի բյուրեղի մակերևույթին ջերմաստիճանի հավասարաչափ բաշխման տեսանկյունից այդ գումարելիներից ուղղաձուգական միայն  $\left( \sum_{i=1}^n c_i (\theta_i - \theta_{\text{միջ}})^2 \right)$  և  $\left( 2 \sum_{i=1}^n c_i (\theta_i - \theta_{\text{միջ}}) \theta_{\text{միջ}} \right)$

արտահայտությունները, քանի որ մնացած երեք գումարելիների արժեքները կախված չեն տարրերի փոխադարձ դասավորությունից: Եթե հաշվի առնվի, որ  $c_i$  գործակիցները կախված չեն ջերմաստիճանից, և միևնույն բյուրեղի վրա բոլոր տարրերի համար դրանց արժեքները նույնն են ( $c_1=c_2=\dots=c_n=c_0$ ), ապակարելի է գրել՝

$$2 \sum_{i=1}^n c_i (\theta_i - \theta_{\text{միջ}}) \theta_{\text{միջ}} = 2c_0 \theta_{\text{միջ}} \sum_{i=1}^n (\theta_i - \theta_{\text{միջ}}) = 2c_0 \theta_{\text{միջ}} \left( \sum_{i=1}^n \theta_i - n \sum_{i=1}^n \frac{\theta_i}{n} \right) = 0:$$

Այսպիսով, (4.5)-ից հետևում է, որ տարրերի տեղաբաշխման տեսանկյունից ԻՍ-ի ջերմային հոսալիությունն պայմանը բերվում է բյուրեղի մակերևույթին ջերմաստիճանի հավասարաչափ բաշխմանը, ինչը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$\left( \sum_{i=1}^n (\theta_i - \theta_{\text{միջ}})^2 \right) \rightarrow \min : \quad (4.6)$$

Ստացված (4.6) պայմանը ներկայացնում է տարրերի ջերմաստիճանների միջինից շեղումների քառակուսիների գումարը և բնութագրում է ԻՍ-ի ջերմային դաշտի տոպոլոգիական հավասարաչափությունը:

Որպեսզի նախորդ պայմանը բերվի գույքատարրերի ջերմաստիճանների տարբերությունն տեսքի, ինչը անհրաժեշտ է տարրերի փոխադարձ դասավորության տեսանկյունից՝ հաշվի առնելով  $\theta_{\text{միջ}}$ -ի սահմանումը, կարելի է գրել, որ՝

$$\begin{aligned} \sum_{i=1}^n (\theta_i - \theta_{\text{avg}})^2 &= \sum_{i=1}^n \left( \theta_i - \left( \frac{\sum_{j=1}^n \theta_j}{n} \right) \right)^2 = \frac{1}{n^2} \sum_{i=1}^n \left( n\theta_i - \sum_{j=1}^n \theta_j \right)^2 = \\ &= \frac{1}{n^2} \sum_{i=1}^n \left( (n-1)\theta_i + \theta_i - \sum_{j=1, j \neq i}^n \theta_j \right)^2 = \frac{1}{n^2} \sum_{i=1}^n \left( \sum_{j=1, j \neq i}^n (\theta_i - \theta_j) \right)^2 \rightarrow \min : \end{aligned} \quad (4.7)$$

Ստացված (4.7) պայմանից հետևում է առաջին գումարի յոլրաքանչյուր անդամի միևնույն պայմանը՝

$$\left( \sum_{\substack{j=1 \\ j \neq i}}^n (\theta_i - \theta_j) \right)^2 \rightarrow \min, i=1, 2, \dots, n \text{ համար :} \quad (4.8)$$

Քանի որ  $\left( \sum_{\substack{j=1 \\ j \neq i}}^n (\theta_i - \theta_j) \right)^2 \geq 0, i=1, 2, \dots, n$  համար, ապա (4.8)-ից

հետևում է հետևյալ պայմանը՝

$$\sum_{\substack{j=1 \\ j \neq i}}^n |\theta_i - \theta_j| \rightarrow \min, i=1, 2, \dots, n \text{ համար :} \quad (4.9)$$

Հաշվի առնելով վերնասվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ  $\frac{1}{n^2}$  արտահայտության արժեքը կախված չէ տարրերի տեղաբաշխումից, (4.7) պայմանը կարող ենք փոխարինել հետևյալ պայմանով՝

$$\sum_{i=1}^n \sum_{\substack{j=1 \\ j \neq i}}^n |\theta_i - \theta_j| \rightarrow \min : \quad (4.10)$$

Ստացված (4.10) պայմանը ԻՍ-ի ջերմային դաշտի տոպոլոգիական հավասարաչափում (4.6) պայմանի ներկայացումն է՝ առանձին տարրերի ջերմաստիճանների տեսքով:

Քանի որ տարրերի տեղաբաշխման փոփոխում հայտնի են դրանց ոչ թե ջերմաստիճանները, այլ հզորությունները, ապա (4.10) պայմանը ջերմային տեղաբաշխման չափանիշի փոխարկելու նպատակով անհրաժեշտ է դրանում առկա ջերմաստիճաններն արտահայտել համապատասխան հզորություններով, ինչը կդիտարկվի հաջորդելն ագլխում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել .

- ԻՍ-երի հոլսալիոլթյունը խիստ կախված է նրանց ջերմաստիճանից (Բլեյքիօրենքը):
- ԻՍ-երի հոլսալիոլթյան բարձրացման արդյունավետ ճանապարհ տարրերի տեղաբաշխման փոփոխում, կարող է հանդիսանալ ջերմաստիճանների տոպոլոգիական բաշխվածություն համահարթեցման ապահովումը, ինչը կհանգեցնի կիսահաղորդչային բյուրեղի վրա ջերմային գրադիենտի փոքրացմանը, որը, իր հերթին, հոլսալիոլթյան տեսակետից կապահովի բարձր ջերմային տեղամասերում առավել վտանգավոր տեղային ջերմաստիճանների իջեցումը և ջերմային հոլսալիոլթյան բարձրացումը:

#### **4.2. Ջերմային տեղաբաշխման չափանիշի մշակումը**


Ջերմային տեղաբաշխման առկա մեթոդները խնդիրը լուծում են երկու փոփոխվող՝ նախնական տեղաբաշխում՝ հիմնված մոտավոր արագագործ ալգորիթմների վրա, և վերջնական՝ հիմնված բազմակրկնակի ալգորիթմների վրա, որոնք լավարկում են նախնական տեղաբաշխումը [14, 18, 145]: Ինչպես և ժամանակով ուղղորդված տեղաբաշխման դեպքում, մեծ մասամբ նախնական տեղաբաշխման որակից է կախված երկրորդ փոփոխիտերացիաների քանակը և, հետևաբար, նաև տեղաբաշխման խնդրի լուծման ընդհանուր ժամանակը:

Գրականությունից հայտնի ջերմային տեղաբաշխման ալգորիթմները կարելի է դասակարգել երկու խմբի [145-148]՝

- մասնատման վրահիմնված ալգորիթմներ ,
- մատրիցային ալգորիթմներ :

Առաջին խմբի ալգորիթմները հարմար են նախնական տեղաբաշխման փոփոխում կիրառելու համար : Դրանց հիմքում ընկած է տարրերի նախնական դասակարգումն ըստ նրանց հզորությունների : Այնուհետև որոշակի էվրիստիկ ընթացակարգերի օգտագործմամբ՝ կատարվում է տարրերի տեղաբաշխում՝ նպատակ ունենալով հզորությունների հնարավորինս հավասարաչափ ցրումը տեղաբաշխման մակերեսի վրա : Ստորև դիտարկված են այդ ալգորիթմների աշխատանքի մեխանիզմները :

Եթե սխեման կազմված է  $n$  տարրերից, որոնց հզորությունները հայտնի են՝  $P_1, P_2, \dots, P_n$ , ապա առաջին քայլում կատարվում է տարրերի դասակարգում՝ ըստ դրանց հզորությունների աճի կամ նվազման՝  $P_1 \geq P_2 \geq \dots \geq P_n$  : Այնուհետև մասնատման վրահիմնված ալգորիթմներում կատարվում է տարրերի մասնատում երկու այնպիսի խմբերի, որ դրանցում հայտնված տարրերի գումարային հզորությունները լինեն հնարավորինս իրար հավասար : Այդ խմբերին համապատասխանեցվում են տեղաբաշխման մակերեսի համապատասխան տեղամասեր, ինչպես սցոլյոզ է տրված նկ.4.2-ում :



Նկ.4.2.Սխեմայի մասնատմամբ ջերմային տեղաբաշխման իրագործումը

Յատկանշական է, որ այդ մակերեսները ոչ միշտ են ճշգրիտ իրար հավասար, քանի որ տարաչափ տարրերի առկայությունը դեպքում կարող են առաջանալ որոշակի մակերեսային տարբերություններ: Խիստ տարաչափ տարրերի դեպքում, սխեման մասնատելիս, առաջնային է համարվում մակերեսների մոտիկություն պահանջը, որը կառաջացնի խմբերում տարրերի քանակների տարբերություն: Բոլոր դեպքերում առաջնային է համարվում խմբերում տարրերի գումարային հզորություն մոտիկության պայմանը՝  $\sum_{i \in A} P_i \approx \sum_{j \in B} P_j$ : Նկ. 4.2. ա-ում պատկերված

առաջնային մասնատումը շարունակվում է հիերարխիկ մասնատման սկզբունքով, մակերեսի հորիզոնական և ուղղահայաց բաժանումների հաջորդականությամբ, ինչպես պատկերված է նկ. 4.2. բ-ում: Այսպիսի հիերարխիկ մասնատման գործընթացը շարունակվում է այնքան, մինչև առաջանան այնպիսի ենթամասեր, որոնցում լինի մեկ տարր կամ նախօրոք տրված թվով փոքր քանակությամբ տարրեր: Արդյունքում ստացվում է տարրերի հզորությունների հնարավորինս հավասարաչափ ցրում տեղաբաշխման մակերեսի վրա:

Ջերմային տեղաբաշխման մատրիցային ալգորիթմներում, ըստ հզորությունների աճիկամ նվազման տարրերի դասակարգումից հետո, լուծվում է մատրիցային համահավասարեցման խնդիր: Խնդիրը դրվում է հետևյալ կերպ. տրված թվերի բազմությունից սինթեզել այնպիսի մատրից, որ դրա՝ նախօրոք տրված չափի բոլոր ենթամատրիցներում հայտնված թվերի գումարներից առավելագույնը լինի հնարավորինս փոքր:

Այս դեպքում մատրիցի թվերը ներկայացնում են տարրերի հզորությունները, մատրիցի չափողականությունը համապատասխանում է տեղաբաշխվող տարրերի քանակին, իսկ տողերի և սյունների հարաբերակցությունը՝ տեղաբաշխման ուղղանկյուն մակերեսի կողերի հարաբերակցությանը: Խնդրի նման դրվածքը ներկայացնում է կոմբինատորական խնդիր, որի ճշգրիտ լուծումը ենթադրում է լրիվ ընտրանքի կիրառում, այսինքն՝ *n!* տեղաբաշխման տարբերակների դիտարկում: Քանի որ այսպիսի մոտեցումը կպահանջի հաշվողական մեծ ժամանակ, ապագործնականում կիրառում են մատրիցի ստացման որոշ էվրիստիկ ընթացակարգեր, որոնցից առավել մեծ տարածում է գտել հետևյալ ընթացակարգը: Սկզբում տրվում է դիտարկվող տեղային ենթամատրիցների չափողականությունը: Սակատարվում է փորձնական ճանապարհով՝ հիմնվելով ջերմափոխանակության տեղային ազդեցության սկզբունքի վրա [149]: Յամաձայն դրա՝ ջերմային դաշտի ցանկացած տեղային գրգռումը ջերմափոխանակության տեսակետից հանդիսանում է տեղային և չի տարածվում դաշտի հեռավոր կետերի վրա: Այնուհետև ըստ տարրերի հզորությունների աճի կամ նվազման դասակարգված շարքը տրոհվում է այնքան մասեր, որքան բջիջ կա յուրաքանչյուր ենթամատրիցում: Ենթամատրիցներից յուրաքանչյուրին վերագրվում է մեկական տարր՝ շարքի բաժանման արդյունքում ստացված յուրաքանչյուր ենթաբազմություններից: Նկ. 4.3-ում պատկերված է 12 տարրերի ջերմային տեղաբաշխման օրինակ, որոնց հզորություններին վերագրված են 0-ից 8 թվեր:

1	0	3	7
2	8	7	0
0	4	8	2
3	3	1	3

ա)

Նկ.

0	8	1	8
1	3	0	3
3	3	0	4
0	7	2	7

բ)

0	3	0	3
3	8	2	7
0	3	1	4
2	8	1	7

գ)

4.3. Սխեմ մայի մատրիցայի նշերի մայի նտեղաբաշխման օրինակը.

ա-պատահական տեղաբաշխում, բ-լավարկված տեղաբաշխում, գ-էվրիստիկ լավարկման արդյունք

Տեղաբաշխումը կատարվել է 4x4 մատրիցի վրա, իսկ ենթամատրիցների չափը վերցված է 2x2: Պատահական տեղաբաշխման դեպքում, որը բերված է նկ. 4.3. ա-ում, ենթամատրիցներից առավելագույն գումարը ստացվել է 27: Լրիվ ընտրանքի ճանապարհով ստացված լավարկված տեղաբաշխման դեպքում այդ արդյունքը 13 է: Լրիվ ընտրանքից խուսափելու նպատակով կարելի է կիրառել որոշ էվրիստիկ ընթացակարգեր, որոնք կտան լավագույնի նմուշը լուծումներ: Օրինակ՝ շարքի բաժանման արդյունքում ստացված յուրաքանչյուր ենթաբազմաթյուններից կարելի է վերցնել տարրերի հզորությունների՝ փոքր-մեծ կրկնվող հաջորդականությունը: Բերված օրինակում, այս ընթացակարգի կիրառման արդյունքում, ըստ հզորությունների աճի տարրերի դասակարգումից հետո շարքի բաժանումից առաջացած քառյակները կլինեն՝ 1) 0, 0, 0, 1; 2) 1, 2, 2, 3; 3) 3, 3, 3, 4; 4) 7, 7, 8, 8: Օգտվելով հզորությունների մեծ-փոքր կրկնվող հաջորդականությունից և ընտրված տարրերը տեղաբաշխելով վերևից ներքև, ճախից աջ հերթականությամբ կստացվի նկ. 4.3. գ-ում բերված տեղաբաշխման մատրիցը, որում առավելագույն ենթամատրիցային գումարը ստացվում է 14:



Այս ալգորիթմների հիմնական թերույթյունն այն է, որ ջերմային տեղաբաշխման ընթացքում հաշվի չեն առնում տարրերի սխեմատիկական կապվածությունը՝ հետառնելով չափանիշները, որի արդյունքում կարող են ստացվել ջերմային ռեժիմի տեսանկյունից լավ, սակայն արագագործության առումով ոչ բավարարար արդյունքներ: Այս դեպքում, որպես կանոն, սխեմատիկ կապվածության հարցերը դիտարկվում են տեղաբաշխման լավարկման փուլում՝ օգտվելով բազմակրկնակի լավարկման ալգորիթմներից և տարրերի էլեկտրական կապվածությունը հաշվի առնող չափանիշներից, որոնք դիտարկվել են նախորդ գլխում:

Ամփոփելով վերնասվածը՝ ակնհայտ է դառնում նախնական տեղաբաշխման այնպիսի չափանիշների մշակման անհրաժեշտությունը, որոնք ջերմային ռեժիմի հետ միաժամանակ հաշվի կառնեն նաև տարրերի էլեկտրական կապվածությունները:

Ստորև ներկայացված է հեղինակի կողմից մշակված տարրերի ջերմային տեղաբաշխման չափանիշ, որը հիմնված է ԻՍ-ի ջերմային դաշտի տոպոլոգիական հավասարաչափության (4.10) պայմանի վրա, և որի մաթեմատիկական տեսքը համանման է տարրերի էլեկտրական կապվածության նախորդ գլխում բերված (3.7) և (3.8) չափանիշներին [142, 143, 148, 150-154]:

**Ջերմային ռեժիմի տոպոլոգիական չափանիշի մշակումը:** Ենթադրվում է, որ ԻՍ-ի տարրերի հզորությունները, ԻՍ-ի բյուրեղի առանձին տեղամասերի ջերմահաղորդականության և ջերմափոխանակության գործակիցները կախված չեն ջերմաստիճանից: Դիցուք տրված է տարրերի որոշակի տեղաբաշխում, որում տարրերի համարները համընկնում են իրենց տեղաբաշխման դիրքերի համարներին: Համաձայն ջերմափոխանակության տեսությունից հայտնի համադրման սկզբունքի՝

որևէ իր դ տարրի ստացիոնար շերմաստիճանը որոշվում է բոլոր տարրերի փոխադարձ շերմային ազդեցություններից [149, 155]՝

$$\theta_i = \theta_0 + \sum_{k=1}^n P_k R_{\rho ki}, \quad (4.11)$$

որտեղ  $\theta_0$ -ն արտաքին միջավայրի շերմաստիճանն է,  $P_k$ -ն՝  $k$ -րդ տարրի հզորությունը,  $R_{\rho ki}$  -ը՝  $k$ -րդ և  $i$ -րդ դիրքերի միջև շերմային դիմադրությունը:

Իր և  $j$ -րդ տարրերի համար (4.11) արտահայտությունները գումարից առանձնացնենք այն անդամները, որոնք որոշում են տարրերի սեփական գերտաքացումները և դրանց փոխադարձ ազդեցությունը:

$$\theta_i = \theta_0 + P_i R_{\rho ii} + P_j R_{\rho ji} + \sum_{\substack{k=1 \\ k \neq i, j}}^n P_k R_{\rho ki},$$

$$\theta_j = \theta_0 + P_j R_{\rho jj} + P_i R_{\rho ij} + \sum_{\substack{k=1 \\ k \neq i, j}}^n P_k R_{\rho kj}: \quad (4.12)$$

Այդ դեպքում  $i$ -րդ և  $j$ -րդ տարրերի շերմաստիճանների տարբերությունը կլինի՝

$$\theta_i - \theta_j = \theta_0 - \theta_0 + P_i R_{\rho ii} - P_j R_{\rho jj} + P_j R_{\rho ji} - P_i R_{\rho ij} + \sum_{\substack{k=1 \\ k \neq i, j}}^n P_k R_{\rho ki} - \sum_{\substack{k=1 \\ k \neq i, j}}^n P_k R_{\rho kj}: \quad (4.13)$$

Բարձր ինտեգրման աստիճանով և կառուցվածքային համասեռությամբ օժտված ԻՍ-ի համար կարելի է ընդունել տարրերի տեղաբաշխման բոլոր դիրքերի սեփական շերմային դիմադրությունների արժեքների հավասարությունը, այսինքն՝  $R_{\rho ij} \approx R_{\rho ji} = R_{\rho 0}$ ;  $i, j=1, \dots, n$  համար:

Չաշվի առնելով նաև, որ  $\sum_{\substack{k=1 \\ k \neq i, j}}^n P_k R_{\rho ki}$  և  $\sum_{\substack{k=1 \\ k \neq i, j}}^n P_k R_{\rho kj}$  գումարների

արժեքները քիչ են կախված  $i$ -րդ և  $j$ -րդ տարրերի փոխադարձ դասավորություններից, և նկատի ունենալով (4.10) և (4.13) արտահայտությունները, որպես ստեղծաբաշխման չափանիշ, որը հաշվի կառնի ԻՍ-ի

բյուրեղի վրա ջերմաստիճանի տոպոլոգիական հավասարաչափ բաշխումը, կստացվի՝

$$\sum_{i=1}^n \sum_{\substack{j=1 \\ j \neq i}}^n |(P_i - P_j)(R_{\rho 0} - R_{\rho ij})| \rightarrow \min : \quad (4.14)$$

Քանի որ  $R_{\rho ij}$ -ն նվազող ֆունկցիա  $i$ -րդ և  $j$ -րդ տարրերի երկրաչափական հեռավորություններից ( $d_{ij}$ ), ապա  $(R_{\rho 0} - R_{\rho ij})$ -ի մեծ արժեքներին կհամապատասխանեն  $d_{ij}$  -ի մեծ արժեքներ և հակառակը: ԻՍ-ի առավելագույն հոլսալի ու թյան ապահովման տեսանկյունից տարրերի ջերմային տեղաբաշխման չափանիշը կընդունի հետևյալ տեսքը՝

$$f_{\rho} = \sum_{i=1}^{n-1} \sum_{j=i+1}^n |P_i - P_j| d_{ij} \rightarrow \min : \quad (4.15)$$

Չափվի առնելով (4.15)-ը և 1.5-ում բերված նախնական տեղաբաշխման խնդրի դրվածքը, ԻՍ-երի տարրերի ջերմային տեղաբաշխման խնդիրը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ: Անհրաժեշտ է գտնել ԻՍ-ի տրված հզորություններից տարրերի փոխադարձ տոպոլոգիական հեռավորությունների ( $d_{ij}; i, j = 1, 2, \dots, n$ ) այնպիսի կոորդինատներ, որոնք բավարարեն (4.15) պայմանը: Ինչպես արդեն նշվել է 1.5-ում, այսպիսի խնդիրը ներկայացնում է կոմբինատորական խնդիր, որի ճշգրիտ լուծումը ենթադրում է տեղաբաշխման տարբերակների լրիվ ընտրանք, ինչը գործնականում հնարավոր չէ: Նախնական տեղաբաշխման փոփոխում, նախորդ գլխում նկարագրված ժամանակով ուղղորդված տեղաբաշխմանը համանման ձևով, տեղաբաշխման բավարարող կարելի է ապահովել տեղաբաշխման հաջորդական ալգորիթմների կիրառմամբ:

Մաթեմատիկական տեսանկյունից ստացված (4.15) չափանիշը ներկայացնում է երկու տողմատրիցների սկալյար արտադրյալ, որոնց անդամները,

համապատասխանաբար, գոլյգ տարրերի փոխադարձ հզորությունների տարբերության բացարձակ արժեքները և դրանց միջև տոպոլոգիական հեռավորություններն են: Այդպիսի արտահայտության նվազագույնը կապահովվի այն դեպքում, երբ այդ մատրիցների անդամներն ըստ իրենց արժեքների դասավորված են հակառակ կարգով:

Ստացված (4.15) պայմանը նախագծողի տեսանկյունից նշանակում է, որ բացարձակ արժեքով մեծ հզորությունամբ տարբերվող տարրերը անհրաժեշտ է հնարավորինս իրար մոտ տեղադրել և հակառակը, ինչը կհանգեցնի կիսահաղորդչային բյուրեղի ջերմային դաշտի հավասարակշռմանը, և հետևաբար՝ կնվազեն հոլսալիության տեսանկյունից ամենավտանգավոր տեղամասերի ջերմաստիճանները:

Հիմնվելով վերը շարադրված ի վրա և ելնելով (4.15) չափանիշի տեսքից՝ ԻՍ-երի տարրերի հզորությունների տեսանկյունից ջերմային տեղաբաշխման խնդիրը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ: ԻՍ-ի տարրերի տրված հզորությունների դեպքում պահանջվում է գտնել տարրերի այնպիսի տեղաբաշխում, որ դրանց դիրքերի միջև փոխադարձ տոպոլոգիական հեռավորությունները ( $d_{ij}; i, j = 1, \dots, n$ ) բավարարեն (4.15) պայմանը: Ստացված չափանիշի տեսքը թույլ է տալիս տարրերի նախնական տեղաբաշխման փոփոխում օգտվել գծային բարդությունամբ հաջորդական տեղաբաշխման ալգորիթմներից, որոնք տալիս են բավարարարարդյունք, որը տեղաբաշխման ավարկման բազմակրկնակի ալգորիթմներով կարելի է հետագայում բարելավել:

ԻՍ-երի իրական կառուցվածքների վերլուծության համար անհրաժեշտ է հաշվի առնել ջերմափոխանակության սահմանային պայմանները և

նյութերի շերմաֆիզիկական հատկությունները: Մասնավորապես, պետք է հաշվի առնել, որ կիսահաղորդչային բյուրեղի եզրային սահմանների մոտ շերմափոխանակությունն ավելի լավ է, քան դրական տրոնական մասերում: Չերմային դաշտի վրա մեծ ազդեցություն կարող են գործել նաև մետաղական միջմիացումների ուղղվածությունները, որոնց շերմային դիմադրությունը շատ անգամ փոքր է կիսահաղորդչի շերմային դիմադրությունից: Ընդհանուր առմամբ, որքան բարդ է ԻՍ-ի կառուցվածքը, այնքան ավելի դժվար է հաժվի առնել շերմափոխանակության եզրային սահմանները: Չերմափոխանակության պայմանների վերլուծության անալիտիկ մեթոդները հաճախ այնքան բարդ և աշխատատար են, իսկ դրանց ճշտությունն այնքան ցածր է, որ համակարգի շերմային դաշտի ուսումնասիրության այս ճանապարհը կարող է դառնալ աննպատակահարմար: Դա է պատճառը, որ իրական ԻՍ-երի շերմային դաշտի վերլուծության նպատակով հիմնականում օգտվում են փորձարարական մեթոդներից, օրինակ՝ կիսահաղորդչային բյուրեղի մակերևույթի ինֆրակարմիր ճառագայթմամբ շերմատեսագրիչներից [156]: Սակայն, ուսումնասիրության փորձարարական մեթոդները չեն կարող օգտագործվել ԻՍ-երի նախագծման փուլում: Այս նպատակով ԻՍ-երի ֆիզիկական նախագծման փուլում, երբ արդեն հայտնի են առանձին տարրերի հզորությունները, օգտագործվում են շերմափոխանակության պարզեցված մոդելներ, որոնք ապահովում են բավարար ճշտություն:

Հաշվի առնելով շերմափոխանակության տեսությունից հայտնի տեղային ազդեցության սկզբունքը [149, 155], ինչպես նաև ԻՍ-երի ինտեգրման

մեծ աստիճանը, առաջարկված ջերմային տեղաբաշխման (4.15) չափանիշը կարող է ապահովել ջերմային դաշտի համահարթեցում կիսահաղորդչային բյուրեղի մակերևույթի հիմնական մասի վրա:

Ինչպես արդեն նշվել է նախորդ գլխում, տարրերի նախնական տեղաբաշխման ավանդական ալգորիթմներում, որպես տեղաբաշխման չափանիշ է օգտագործվում տարրերի կապվածության (3.7) տեսքի չափանիշը, որն ապահովում է կապերի գումարային երկարության նվազարկում:

Չամադրելով (3.7) և (4.15) չափանիշները, առաջարկվում է տեղաբաշխման ընդհանրացված չափանիշ, որը հաշվի կառնի ինչպես տարրերի էլեկտրական կապվածությունը, այնպես էլ ԻՍ-ի ջերմային ռեժիմը [151, 152]:

Առաջարկվող չափանիշի օգտագործման արդյունավետությունը դիտարկված է հաջորդ ենթագլխում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել.

- ԻՍ-երի տարրերի նախնական ջերմային տեղաբաշխման գոյությունը ունեցող ալգորիթմերը հաշվի չեն առնում տարրերի էլեկտրական կապվածությունը:
- Մշակված և տեսականորեն հիմնավորված է ԻՍ-երի տարրերի նախնական ջերմային տեղաբաշխման նոր չափանիշ, որի հիմքում ընկած է տարրերի միջոցով ցրվող հզորությունների հավասարաչափ տոպոլոգիական բաշխումը:
- Մշակված ջերմային տեղաբաշխման չափանիշի մաթեմատիկական տեսքը թույլ է տալիս այն համադրել էլեկտրական կապվածության (3.7) չափանիշի հետ և տարրերի նախնական

տեղաբաշխման փուլում օգտագործել ԻՍ՝  
տարրերի տեղաբաշխման ընդհանրացված  
չափանիշի տեսքով:

### **4.3. ԻՍ-էրի տարրերի տեղաբաշխումը ջերմային ռեժիմի հաշվառմամբ**

Նախորդ բաժնում ստացված (4.15) չափանիշի հիման վրա իրագործվել է հաշնորդական տեղաբաշխման ալգորիթմ: Առաջարկվող մեթոդի արդյունավետության գնահատման նպատակով որպես օրինակ դիտարկել ք ջերմային տեղաբաշխման իրագործումը վեց տրամաբանական բջիջներից կազմված ISCAS 85 շարքի պարզագույն C17 թեստային սխեմայի օրինակով, որի տեսքը բերված է նկ. 3.4-ում: Ստորև իրականացված է C17 թեստային սխեմայի տարրերի շարային տեղաբաշխում՝ օգտվելով ինչպես տարրերի կապվածության (3.7), այնպես էլ ջերմային տեղաբաշխման (4.15) չափանիշներից:

Խնդրի լուծման պարզեցման նպատակով ընդունվել են հետևյալ պայմանականությունները, որոնք տեղաբաշխման առաջարկվող չափանիշի արդյունավետության գնահատման տեսանկյունից չեն ազդում հիմնական խնդրի վրա՝

- բջիջների տեղերի տոպոլոգիական չափերի հավասարաչափությունը,
- բջիջների՝ առանց բացակների շարային տեղաբաշխումը,
- բջիջների հզորությունների ներկայացումը պայմանական միավորներով:

Դիտարկվող սխեմայի C1, C2, C3, C4, C5 և C6 տրամաբանական բջիջների համար ընդունված են ցրվող հզորությունների պայմանական միավորներով կամայական արժեքներ, համապատասխանաբար՝

$$P1=P2=P3=10, P4=P6=20 \text{ և } P5=30:$$

Տարրերի էլեկտրական կապերի  $R = ||r_{ij}||$  մատրիցը և դրա հիման վրա տարրերի տեղաբաշխման հաշվարկը բերված են նկ. 3.6-ում: Բջիջների հզորությունների փոխադարձ տարբերությունների բացարձակ արժեքների  $\Delta P = |||P_i - P_j|||$  մատրիցը և դրա հիման վրա տարրերի տեղաբաշխման հաշվարկը բերված են նկ. 4.4-ում:

	C1	C2	C3	C4	C5	C6	$\beta_0$	$\beta_1$	$\beta_2$	$\beta_3$	$\beta_4$	$\beta_5$
C1	0	0	0	10	20	10	40	X	X	X	X	X
C2	0	0	0	10	20	10	40	40	20	X	X	X
C3	0	0	0	10	20	10	40	40	20	20	-20	X
C4	10	10	10	0	10	0	40	20	X	X	X	X
C5	20	20	20	10	0	10	80	40	20	-20	X	X
C6	10	10	10	0	10	0	40	20	20	0	-20	-40

Նկ. 4.4. ISCAS 85 շարքի C17 թեստային սխեմայի տարրերի ջերմային տեղաբաշխման հաշվարկի ընթացքը

Իրագործվել է շարային տեղաբաշխման հաջորդական ալգորիթմ, որը հիմնված է (1.14) հավակնորդություն  $\Phi$  նկատմամբ 1.5 ենթագլխում բերված տեղաբաշխման ընթացակարգի վրա և համանման է 3.2. բաժնում բերված ալգորիթմին: Ալգորիթմը իրականացված է՝ հիմնվելով հետևյալ հիմնական գործընթացի ռեկուրսիվ կրկնություն վրա: Հերթական մոտակա դիրքում տեղադրվում է այն տարրը, որն օժտված է  $\beta$  հավակնորդություն  $\Phi$  նկատմամբ նվազագույն արժեքով, որն իր հերթին սահմանվում է որպես հերթական տեղաբաշխվող տարրի՝ դեռևս չտեղադրված և արդեն տեղադրված տարրերի բազմությունների հետ կապվածությունների տարբերություն: Հաշվի առնելով վերը շարադրվածը, չտեղաբաշխված հերթական  $i$  - ընտրվող տարրի համար տեղաբաշխման հավակնորդության  $\Phi$  նկատման կունենա հետևյալ տեսքը՝




$$b_i = \min_{\substack{K \\ i \in E_{\text{in}}, j \in E_{\text{out}}}} e(DP_{ij}) - \min_{\substack{H \\ j \in E_{\text{in}}, i \in E_{\text{out}}}} e(DP_{ji}) \quad i = 1, \dots, n, \quad (4.16)$$

որտեղ  $E_{\text{in}}$  և  $E_{\text{out}}$ -ը համապատասխանաբար տեղաբաշխված և չտեղաբաշխված տարրերի բազմություններն են:

Նկ. 4.4-ում  $f_0$  արժեքները համապատասխանում են տվյալ տողի թվերի գումարին, իսկ  $\beta_1$ -ից  $\beta_5$  -ի արժեքները՝ (4.16) պայմանին:

Տեղաբաշխման արդյունքները բերված են նկ. 4.5-



նում:

Նկ. 4.5. Թեստային սխեմայի բջիջների տեղաբաշխման արդյունքները.

ա - (3.7) չափանիշի կիրառմամբ, բ - (4.16) չափանիշի կիրառմամբ

Նկ. 4.5 ա)-ում բերված է միայն տարրերի կապվածությունը տեղաբաշխումը, որի դեպքում միջմիացումների գումարային երկարությունը ստացվել է 10 պայմանական միավոր, իսկ 4.6 բ)-ում՝ ջերմային տեղաբաշխումը, որի դեպքում միջմիացումների գումարային երկարությունը ստացվել է 11 պայմանական միավոր: Նկարի վրա բերված է սխեմայի ներքին շղթաների սխեմատիկ պատկերը: Ինչպես երևում է նկարից, ջերմային տեղաբաշխման դեպքում ապահովվել է տարրերի հզորությունների առավել հավասարաչափ

տեղաբաշխում, սակայն շղթաների գումարային երկարությունն աճել է մեկ պայմանական միավորով:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրակացնել.

- Առաջարկված է ԻՍ-երի տարրերի տեղաբաշխմանը նդհանրացված չափանիշ, որը հաշվի է առնում ինչպես ջերմային ռեժիմը, այնպես էլ տարրերի էլեկտրական կապվածությունը:
- Իրագործված է առաջարկված ջերմային չափանիշի կիրառման վրա հիմնված տեղաբաշխման հաջորդական ալգորիթմ:
- Առաջարկված միջոցի արդյունավետությունը ցույց է տրված թեստային սխեմայի տարրերի ջերմային տեղաբաշխման օրինակով:

#### **4.4. Բազմապարամետրական նախնական տեղաբաշխումը ջերմային ռեժիմի հաշվառմամբ**

ԻՍ-երի տարրերի բազմապարամետրական նախնական տեղաբաշխման առաջարկվող մեթոդը հիմնված է 1-ին գլխում բերված քառակուսային նշանակման խնդրի բազմապարամետրական ներկայացման մոտեցման վրա, որում տարրերի փոխկապվածության քառային գործակիցները ներկայացվում են՝ հիմնվելով մասնակի պարամետրերի նորմավորման վրա, ելնելով համապատասխան տարրերի միջև հեռավորությունների մեծության նկատմամբ հակադարձ համեմատականության նկատառումներին [151-155]: Յիմնվելով քառակուսային նշանակման խնդրի բազմապարամետրական ներկայացման դեպքում տարրերի փոխկապվածության  $\lambda_{ij}(i, j=1, 2, \dots, n)$  քառային գործակցի բազմապարամետրական գումարային միավորման (1.13) արտահայտության և տեղաբաշխման

$b_i (i = 1, 2, \dots, n)$  հավակնորդությունը  $\Phi$  նկատի ունի (1.14) պայմանի վրա, որպես տարրերի տեղաբաշխման ընդհանրացված չափանիշ, որը միևնույն ժամանակ հաշվի կառնի և բջիջների էլեկտրական կապվածությունը, և ԻՍ-ի ջերմային ռեժիմը, և հապաղումները ԻՍ-ի շղթաներում, առաջարկվում է օգտագործել մի գումարային  $\Phi$  նկատի, որը բաղկացած է տեղաբաշխման 3 տարրեր մասնակի չափանիշներից  $f_{ij}, f_{ij}, f_{ij}$

$$F = a_1 f_{ij} + a_2 f_{ij} + a_3 f_{ij} = \sum_{i=1}^n \left( a_1 \sum_{\substack{j=1 \\ j \neq i}}^n r_{ij} d_{ij} + a_2 \sum_{\substack{j=1 \\ j \neq i}}^n |\Delta P_{ij}| d_{ij} + a_3 \sum_{\substack{j=1 \\ j \neq i}}^n R_{ij} d_{ij} \right), \quad (4.17)$$

որտեղ  $r_{ij}, \Delta P_{ij}$  և  $R_{ij}$  -ն  $r_{ij}, \Delta P_{ij}$  և  $R_{ij}$  -ի նորմավորված արժեքներն են, իսկ  $a_1, a_2, a_3$ -ը՝ դրանց քաշային գործակիցները:

Նորմավորումը կատարվում է, որպեսզի տարրերի  $\Phi$  հիպոթեզային մեծությունները նկատի առնելով պարամետրերը բերվեն առանց չափողականության մեծությունների: Ընդ որում, որևէ  $x_i$  պարամետրի նորմավորված արժեքը կարելի է հաշվել հետևյալ բանաձևով՝

$$X_{ij} = \frac{X_i - X_{\min}}{X_{\max} - X_{\min}}, \quad (4.18),$$

որտեղ  $X_i, X_{\min}$  և  $X_{\max}$ -ը համապատասխանաբար  $x$  պարամետրի ընթացիկ, նվազագույն և առավելագույն արժեքներն են:

Նախագծողը  $a_1, a_2, a_3$  քաշային գործակիցների միջոցով կարող է կարգավորել միջմացումների երկարություն, ջերմաստիճանի հավասարաչափ քաշի մասնակի շղթաներում հապաղումների համեմատական կարևորությունը:

Առաջարկվող բազմապարամետրական նախնական տեղաբաշխման մեթոդի արդյունավետությունը ցույց տանք նկ. 4.6-ում բերված պարզ թեստային սխեմայի տարրերի շարային տեղաբաշխման օրինակով:


Խնդրի պարզեցման նպատակով ընդունված են նախորդ բաժնում բերված պայմանականությունները:

Դիտարկվող սխեմայի տարրերի համար տրված են հետևյալ պարամետրերը.

$$P_1 = P_3 = 10, P_4 = P_5 = 20, P_2 = P_6 = 30, P_7 = 40,$$


$$T_1 = T_3 = 10, T_2 = T_4 = 20, T_5 = 25, T_6 = 30, T_7 = 40.$$

որտեղ  $P$ -ն սխեմայի տարրերում ցրվող հզորությունն է՝ վերցված պայամանական միվորներով, իսկ  $T$ -ն՝ հապաղում է, նույնպես վերցված պայամանական միավորով:



Նկ. 4.6. Թեստային սխեմայի օրինակ

Շղթաներում ճիշտ ազդանշանի ձևավորման ժամանակներին և 0-ական պահուստով որոշիչ շղթաների ակնհայտ ներկայացման նպատակով նկ. 4.7-ում պատկերված է սխեմայի ժամանակային գրաֆը:



Շղթաների վերևի ուղղահայաց գծերի ձախ, աջ և վերին մասերում բերված են համապատասխան շղթաներում ճիշտ ազդանշանի ձևավորման ժամանակի համապատասխանաբար ներքին և վերին սահմանները և ժամանակի պահուստները, իսկ մզացված օղակներով՝ որոշիչ շղթաները: Նշված պարամետրերի հաշվարկը կատարված է 2.5 ենթագլխում ներկայացված մեթոդներով:

Իրականացված է 1.5 ենթագլխում նկարագրված և 3.2 ենթագլխում իրագործված ընթացակարգով հաջորդական տեղաբաշխման ալգորիթմը, որում ներկայացված (1.14) հավակնորդության ֆունկցիան կստանահետևյալ տեսքը՝

$$b_i = \min_{j \in OE_{in}} \left\{ a_{ij} e^{r_{ij} \sigma} - e^{r_{ij} \sigma} + a_2 e^{|DP_{ij}|} - e^{|DP_{ij}|} + a_3 e^{R_{ij} \sigma} - e^{R_{ij} \sigma} \right\}, \quad (4.19)$$

որտեղ  $E_{in}$  և  $E_{z in}$ -ն համապատասխանաբար տեղաբաշխված և չտեղաբաշխված տարրերի բազմություններն են:

Որպես առաջին տարրը նտրվում է մնացած բոլոր տարրերի հետ գումարային նվազագույն

կապված ու թյուն ունեցող տարրը և տեղադրվում է գծային շարքի եզրային դիրքում: Մի քանի տարրերի համար  $\beta$   $\Phi$  ունկցիայի միևնույն արժեքի դեպքում որպես հերթական տեղադրող տարր պայմանականորեն ընտրվում է նվազագույն հերթական համարով տարրը: Ստորև կներկայացնենք կատարված հաշվարկների ընթացքը:

Շղթաների հապաղումների պահուստների մատրիցը կունենանկ .4.8-ում բերված տեսքը:

	C1	C2	C3	C4	C5	C6	C7
C1	-	-	-	10	-	-	-
C2	-	-	-	0	0	0	0
C3	-	-	-	-	10	-	-
C4	10	0	-	-	0	5	5
C5	-	0	10	0	-	-	0
C6	-	0	-	5	-	-	5
C7	-	0	-	5	0	5	-

ա)

	C1	C2	C3	C4	C5	C6	C7
C1	-	-	-	1	-	-	-
C2	-	-	-	0	0	0	0
C3	-	-	-	-	1	-	-
C4	1	0	-	-	0	0.5	0.5
C5	-	0	1	0	-	-	0
C6	-	0	-	0.5	-	-	0.5
C7	-	0	-	0.5	0	0.5	-

բ)

*Նկ.4.8. Շղթաների հապաղումների պահուստների մատրիցը.*

Մատրիցը սորմավորումը կատարվել է [0-1] միջակայքում՝ օգտվելով (3.3) և (3.4) նորմավորման բանաձևերից:

Քանի որ մեծ ժամանակային պահուստներ ունեցող շղթաներով կապված տարրերը անհրաժեշտ է տեղաբաշխել իրարից ավելի հեռու, քան փոքր ժամանակային պահուստներով կապվածները, ապա ստացված մատրիցի յուրաքանչյուր տարրի արժեքը կփոխարինենք (1-r) արժեքով և կստանանք շղթաների հապաղումների պահուստների հաշվարկային մատրիցը, որի տեսքը բերված է նկ.4.9-ում:

	C1	C2	C3	C4	C5	C6	C7
C1	-	-	-	0	-	-	-
C2	-	-	-	1	1	1	1
C3	-	-	-	-	0	-	-
C4	0	1	-	-	1	0.5	0.5
C5	-	1	0	1	-	-	1
C6	-	1	-	0.5	-	-	0.5
C7	-	1	-	0.5	1	0.5	-

Նկ.4.9. Շղթաների հապաղող մեների պահող ստների հաշվառության հնմատոհոն

Նույն տրամաբանությամբ կառուցված տարրերի էլեկտրական կապվածությունների և հզորությունների տարբերությունների բացարձակ արժեքների հաշվարկային մատրիցները բերված են համապատասխանաբար նկ.4.10 աև բ-ում:

	C1	C2	C3	C4	C5	C6	C7
C1	0	0	0	0.5	0	0	0
C2	0	0	0	0.5	0.5	0.5	0.5
C3	0	0	0	0	0.5	0	0
C4	0.5	0.5	0	0	0.5	0.5	0.5
C5	0	0.5	0.5	0.5	0	0.5	0.5
C6	0	0.5	0	0.5	0.5	0	1
C7	0	0.5	0	0.5	0.5	1	0

	C1	C2	C3	C4	C5	C6	C7
C1	0	2/3	0	1/3	1/3	2/3	1
C2	2/3	0	2/3	1/3	1/3	0	2/3
C3	0	2/3	0	1/3	1/3	2/3	1
C4	1/3	1/3	1/3	0	0	1/3	2/3
C5	1/3	1/3	1/3	0	0	1/3	2/3
C6	2/3	0	2/3	1/3	1/3	0	1/3
C7	1	2/3	1	2/3	2/3	1/3	0

Կատարված) տարրերի տեղաբյուրում  $a_1, a_2, a_3$  քաշային

Նկ.4.10. Տարրերի էլեկտրական

կապվածությունների (ա) և հզորությունների

գործակիցների տարբեր արժեքների համար: Չափի առնելով այն հանգամանքը, որ միջմիացումների գումարային երկարության և որոշիչ շղթաների երկարությունների գնահատումը ավելի հաշվարկելի մեծություն է, քան ջերմային ռեժիմինը, ստորև ներկայացված են տեղաբաշխման 3 դեպքեր ջերմային ռեժիմի հաշվառման քաշային գործակից տարբեր արժեքների համար՝

1. միայն տարրերի էլեկտրական կապվածությունն հաշվառմամբ՝  $a_1=1, a_2=a_3=0$ ;

2. միայն ջերմային ռեժիմի հաշվառմամբ՝  $a_3=1, a_1=a_2=0$ ;

3. բոլոր պարամետրերի հավասարաչափ հաշվառմամբ՝  $a_1=a_2=a_3=1/3$ ։


Ստորև ներկայացված է  $\beta$  հավակնորդությունն ֆունկցիայի հաշվարկի ընթացքը 3-րդ դեպքի համար (նկ. 4.11)։

	C1	C2	C3	C4	C5	C6	C7	$\Sigma$	$\beta_0$	$\beta_1$	$\beta_2$	$\beta_3$	$\beta_4$	$\beta_5$	$\beta_6$
C1	0	2/3	0	1/3	1/3	2/3	1	3	2,25	0,95	x	x	x	0	X
C2	2/3	0	2/3	1/3	1/3	0	2/3	2,75	2	x	x	x	x	x	X
C3	0	2/3	0	1/3	1/3	2/3	1	3	2,25	0,95	0,95	-1,05	-1,8	x	X
C4	1/3	1/3	1/3	0	0	1/3	2/3	2	x	x	x	x	x	x	X
C5	1/3	1/3	1/3	0	0	1/3	2/3	2	2	1,25	0,5	-1	x	x	X
C6	2/3	0	2/3	1/3	1/3	0	1/3	2,75	2	2	0,5	-0,25	-1	-2,5	X
C7	1	2/3	1	2/3	2/3	1/3	0	4,75	3,25	1,75	-0,25	x	x	x	X

Նկ. 4.11. Թեստային սխեմայի տարրերի բազմապարամետրական նախնական

տեստառաջիման ու ռաժժոն  $a_1=a_2=a_3=1/3$  դեպքում

Տեղաբաշխման սխեմատիկ տեսքը վերը բերված 3 դեպքերի համար ներկայացված է նկ. 4.12-ում։



Նկ. 4.12. Թեստային սխեմայի տարրերի բազմապարամետրական տեղաբաշխման տարբերակներ.

Տեղաբաշխման բնութագրերի արդյունքների համեմատությունը՝ ըստ (4.17) բազմապարամետրական



չ ափան ի շ ի մ ե ջ մ տ ն ո ղ  $f_U, f_2, f_{\sigma}$  մ ա ս ն ա կ ի չ ափան ի շ ն եր ի ,  
բ եր վ ա ծ է ա ղ .4.1-ն ւ մ :

Ա ղ յ ու ւ ա կ 4.1

*Տ ե ղ աբ ա շ խ մ ա ն բ ն ու թ ա գ ը ե ղ ի ար ղ յ ու ն ք ն ե ղ ի  
հ ա մ ե մ ա տ ու թ յ ու ն ը*

	$f_U$	$f_2$	$f_{\sigma}$	F
ա	1,9	3,8	2,4	2,7
բ	1,9	1,8	2,1	1,9
գ	2,3	2,6	1,9	2,3

Ա ղ յ ու ւ ա կ ի գ եր ն ու մ է , ո ղ ղ ի տար կ վ ո ղ թ ե ս տ ա յ ի ն  
ս խ ե մ ա յ ու մ բ ա գ մ ա պ ար ա մ ե տր ա կ ա ն տե ղ աբ ա շ խ մ ա ն  $f_U$   
պ ար ա մ ե տր ի ո ղ ա կ ա կ ա ն 20%-ն վ վ ա տ թ ար ա գ ու մ ը  
հ ա ն գ ե գ ը ե լ է մ ն ա գ ա ծ  $f_2$  և  $f_{\sigma}$  պ ար ա մ ե տր ե ղ ի  
հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն աբ ար 31% և 21% ո ղ ա կ ա կ ա ն  
բ ար ե լ ա վ մ ա ն ը :

Ա մ փ ո փ ե լ ո վ վ եր ը շ ար ա ղ ը վ ա ծ ը ` կ ար ո ղ ե ն ք  
ե գ ղ ա կ ա գ ն ե լ .

- Առ ա ջ ար կ վ ա ծ է Ի Ս - ե ղ ի տար ը ե ղ ի  
բ ա գ մ ա պ ար ա մ ե տր ա կ ա ն ն ա խ ն ա կ ա ն տե ղ աբ ա շ խ մ ա ն  
չ ափան ի շ , ո ղ ը թ ու յ լ է տա լ ի ս տար ը ե ղ ի  
ե լ ե կ տր ա կ ա ն կ ա պ վ ա ծ ու թ յ ա ն հ ե տ մ ի ա ժ ա մ ա ն ա կ  
հ ա շ վ ի առ ն ե լ ս խ ե մ ա յ ի ար ա գ ա գ ո ղ ծ ու թ յ ու ն ը և  
ջ եր մ ա յ ի ն ռ ե ժ ի մ ը :

- Իր ա գ ո ղ ծ վ ա ծ է առ ա ջ ար կ վ ա ծ  
բ ա գ մ ա պ ար ա մ ե տր ա կ ա ն չ ափան ի շ ի կ ի ղ առ մ ա ն վ ղ ա  
հ ի մ ն վ ա ծ տե ղ աբ ա շ խ մ ա ն հ ա ջ ո ղ ա կ ա ն ա լ գ ո ղ ի թ մ :

Առ ա ջ ար կ վ ա ծ մ ե թ ո ղ ի ար ղ յ ու ն ա վ ե տ ու թ յ ու ն ը  
գ ու յ գ է տր վ ա ծ թ ե ս տ ա յ ի ն ս խ ե մ ա յ ի տար ը ե ղ ի  
բ ա գ մ ա պ ար ա մ ե տր ա կ ա ն տե ղ աբ ա շ խ մ ա ն օ ղ ի ն ա կ ո վ , ո ղ ի  
ար ղ յ ու ն ք ու մ տե ղ աբ ա շ խ մ ա ն  $f_U$  պ ար ա մ ե տր ի  
ո ղ ա կ ա կ ա ն 21%-ն վ վ ա տ թ ար ա գ ու մ ը հ ա ն գ ե գ ը ե լ է  
մ ն ա գ ա ծ  $f_2$  և  $f_{\sigma}$  պ ար ա մ ե տր ե ղ ի հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն աբ ար 31%  
և 21% ո ղ ա կ ա կ ա ն բ ար ե լ ա վ մ ա ն ը :

Նմանատիպ տեղաբաշխման փորձերը զանազան ավելի բարդ ԻՍ-երի վրա (ISCAS-85 թեստային սխեմաների շարք, ORCA, Chip Top, Open SPARC, Power PC պրոցեսորների շարք և այլն) ցույց են տվել առաջարկված մեթոդի բարձր արդյունավետությունը, ապահովելով արագագործություն և ջերմային չափանիշների համապատասխանաբար 20-ից 30% և 30-ից 35% բարելավում՝ միջմիացումների գումարային երկարության չափանիշի 18-ից 20% վատթարացման հաշվին:

#### **4.5. Եռաչափ ԻՍ-երի տարրերի ջերմային տեղաբաշխումը**

ԻՍ-երի ինտեգրման անընդհատ աճի պայմաններում դրանց երկչափ կառուցվածքի հետագա զարգացումը սահմանափակվում է մի շարք տեխնոլոգիական և \$ ունկցիոնալ գործոններով, որոնցից հիմնականներն են.

1. ԻՍ-ի բյուրեղի չափերի հետագա մեծացումը, բյուրեղի միավոր մակերեսում առկա արատների հաստատունություն պայմաններում, հանգեցնում է արատների ընդհանուր քանակի աճին և հետևաբար՝ պիտանիելի տոկոսի նվազմանը:

2. ԻՍ-ի բյուրեղի չափերի մեծացմանը զուգընթաց՝ մեծանում է ինչպես միջմիացումների գումարային երկարությունը, այնպես էլ մեկ միջմիացման միջին երկարությունը: Այս պայմաններում աճում է համեմատաբար երկար, համընդհանուր միջմիացումների քանակը: Քանի որ ենթամիկրոնային տեխնոլոգիաների դեպքում միջմիացումներով պայմանավորված հապաղումների արժեքները գերազանցում են փականներով պայմանավորվածներին, իսկ գլոբալ միջմիացումներում հապաղումները հարյուրավոր անգամ կարող են գերազանցել փականների

հապաղումներին, ապա դրանք կարող են զգալիորեն իջեցնել համակարգի արագագործությունը և արտադրողականությունը:

3. Աճում են տարրերի և միջմիացումների միջև փոխազդեցությունները և պարագիտային երևույթների ազդեցությունը: Պարագիտային և փոխազդեցության երևույթները զգալի ազդեցություն են թողնում սխեմայի աշխատանքի վրա և կարող են հանգեցնել ԻՍ-ի հոլսալիության անկման:

Այս խնդիրներին լուծման նպատակով ներկայումս կիրառվում են ԻՍ-երի ինտեգրման նոր կառուցվածքային լուծումներ, որոնք ենթադրում են մեկից ավելի կիսահաղորդչային բյուրեղների ինտեգրումը մեկ պատյանի մեջ:

Լուծումներից մեկն է եռաչափ ԻՍ-ն: Եռաչափ ԻՍ-երի կիրառությունը թույլ է տալիս մեկ պատյանի մեջ ունենալ մեկից ավելի բյուրեղ, որոնք դասավորված են ուղղահայաց առանցքի երկայնքով և միմյնացից տարանջատված են մեկուսիչ շերտերով:

Եռաչափ ԻՍ-երը թույլ են տալիս շրջանցել կամ լուծել բազմաթիվ խնդիրներ, որոնք բնորոշ են երկչափ կառուցվածքներին: Եռաչափ ԻՍ-երի կիրառումը հնարավորություն է ընձեռում գործնականում պահպանել և նույնիսկ գերազանցել Մուրի օրենքով բնութագրվող տարրերի քանակի աճը ԻՍ-ում: Հնարավոր է լինում պահպանել համակարգի արագագործությունը և արտադրողականությունը՝ ապահովելով սինթրոազդանշանի հաճախության և տեղային քեշ հիշողության աճ: Հնարավոր է լինում իրագործել ավելի բարդ գործառնություններ համակարգեր՝ առանց մեծացնելու բյուրեղի չափերը, ինչը թույլ է տալիս խոլսափել արատների քանակի աճից և նպաստում է գործող ԻՍ-երի ելքի տոկոսի աճին: Եռաչափ ԻՍ-երում, շնորհիվ առանձին

բյուրեղների չափերի փոքրացման, հնարավոր է  
լինում կրճատել գլոբալ միջմիացումների  
երկարությունը՝ նվազեցնելով ազդանշանի  
հապաղումը:

Նշված բոլոր առավելությունների հետ  
գոյություն ունեն նաև եռաչափ ԻՍ-երին բնորոշ  
թերություններ, որոնցից ամենակարևորը  
ջերմային ցրման խնդիրն է:

Տարրերի բարձր նտեգրման պատճառով առաջացող  
ջերմային էներգիայի կուտակումը եռաչափ ԻՍ-ի  
ծավալում կարող է հանգեցնել վերջինիս  
հուսալիություն կտրուկ անկման, իսկ որոշ  
դեպքերում՝ լիարժեք անպիտանություն: Եռաչափ ԻՍ-  
երում ջերմային երևույթների բացասական  
ազդեցությունների նվազեցման նպատակով  
կիրառվում են բազմաբևույթ մոտեցումներ, որոնք  
ներառում են ինչպես սխեմատիկ խնդիրների  
լուծումներ՝ ցածր հզորության նախագծման  
մեթոդների կիրառմամբ, այնպես էլ՝ ֆիզիկական:  
Ներկայումս կիրառվող ֆիզիկական լուծումներից  
է բլոկների և դրանցում տարրերի հատուկ  
ջերմային տեղաբաշխումը, որոնց դեպքում մեծ  
տեսակարար հզորությունը տարրերը տեղաբաշխվում  
են բյուրեղի մակերեսով հնարավորինս  
հավասարաչափ, և ջերմային միջմիացումների  
կիրառությունը, երբ տեղադրվում են հատուկ  
միջսիլիկոնային ջերմային միացումներ, որոնք  
թույլ են տալիս հեռացնել ջերմային էներգիան տաք  
տիրույթներից: Արդյունքում՝ կատարվում է  
առավելագույն ջերմությունը լուրջ  
տեղամասերում ջերմաստիճանի հնարավորինս  
իջեցում՝ ի հաշիվ համեմատաբար ցածր  
ջերմությունը տեղամասերի ջերմաստիճանների  
որոշակի բարձրացման, այսինքն՝ կատարվում է  
ջերմային դաշտի համահարթեցում: Այս

աշխատանքում մշակված է եռաչափ ԻՍ-երում տարրերի նախնական տեղաբաշխման մեթոդ, որը հիմնված է նախորդ երկու գլուխներում դիտարկված երկչափ տեղաբաշխման չափանիշների և մեթոդների համապատասխան փոխակերպման վրա, ինչը, ի տարբերություն առկա մեթոդների, թույլ է տալիս միաժամանակ հաժվի առնել ԻՍ-ի տարրերի էլեկտրական կապվածությունը և ջերմային ռեժիմը նախնական տեղաբաշխման ժամանակ [13, 153-157]:

Ընդհանուր դեպքում, եթե եռաչափ ԻՍ-ը կազմված է հատ բյուրեղներից, որոնցից յուրաքանչյուրը սպառում է  $P_i$  ( $i=1,2,\dots,k$ ) հզորություն, ապա պատենավորումից հետո ԻՍ-ի գումարային սպառող հզորությունը կլինի՝  $P = \sum_{i=1}^k P_i$ : Յետևաբար, եթե եռաչափ ԻՍ-ում բյուրեղների բազմափակ կառուցվածքը դիտարկվի որպես մեկ ընդհանուր ջերմային տիրույթ, ապա դրա ջերմաստճանը կորոշվի հետևյալ կերպ [158, 159]՝

$$q = q_0 + R_{\text{ջլ}} P, \tag{4.20}$$

որտեղ  $q_0$ -միջավայրի ջերմաստճանն է, իսկ  $R_{\text{ջլ}}$ -ը՝ ԻՍ-ի պատյանի ջերմային դիմադրությունը:

Այս դեպքում ԻՍ-ի պատյանի ջերմային դիմադրությունը մոդելավորվում է 3 դիմադրությունների միջոցով՝ պայմանավորված ջերմահաղորդականությամբ, կոնվեկտիվ և ճառագայթային ջերմացրումներով: Քանի որ ժամանակակից ԻՍ-երի պատյանների համար կոնվեկտիվ և ճառագայթային դիմադրությունները ջերմահաղորդականությամբ պայմանավորված դիմադրության համեմատ շատ փոքր են, ուստի դրանք կարելի է արհամարհել: Նման մոտեցումը կիրառելի է համեմատաբար պարզ և այնպիսի ԻՍ-երի դեպքում, որոնցում տարբեր մակարդակների բյուրեղների


միջև ջերմային գրադիենտը գործնականում քաղցրացված է, ինչը թույլ կտա կիսահաղորդչային բյուրեղների եռաչափ կառուցվածքը դիտարկել որպես մեկ ընդհանուր ջերմային տիրույթ: Սակայն քանի որ գործնականում եռաչափ ԻՍ-ի տարբեր են նրանց բյուրեղներ ունեն սպառման տարբեր հզորություններ, և քաղցրացումը, նրանց համար տարբեր է ջերմային դիմադրություններ, ապա այս դեպքում ԻՍ-ի ջերմաստիճանը կախված կլինի ինչպես առանձին բյուրեղներում սպառվող հզորություններից, այնպես էլ պատյանի մեջ դրանց փոխադարձ դասավորվածությունից:

Նկ. 4.13-ում պատկերված են երեք մակարդակից կազմված եռաչափ ԻՍ-ի պարզեցված կառուցվածքը և համապատասխան ջերմային մոդելը [155, 156]:

Բերված մոդելում,  $P_3$ ,  $P_2$  և  $P_1$ -ը համապատասխանաբար երրորդ, երկրորդ և առաջին մակարդակներում տեղադրված բյուրեղների հզորություններն են,  $q_0$ -ն՝ միջավայրի ջերմաստիճանը, իսկ  $R_{23}$ ,  $R_{21}$ ,  $R_{210}$  և  $R_{201}$ -ը՝ համապատասխանաբար երրորդից երկրորդ, երկրորդից առաջին, առաջինից ջերմահաղորդիչ հարթակ և ջերմահաղորդիչ հարթակից դեպի շրջակա միջավայր (տվյալ դեպքում՝ տպասալ), ջերմային դիմադրությունները:

Այս դեպքում 1-ից 3 մակարդակների բյուրեղների գումարային տաքացումը միջավայրի նկատմամբ առաջին մոտավորություն կարելի է արտահայտել հետևյալ կերպ [160]՝

$$q = e \sum_{i=1}^3 q_i = e \sum_{i=1}^3 P_i \sum_{j=i-1}^3 e R_{2ij} + R_{20i} e \sum_{i=1}^3 P_i : \quad (4.21)$$



Նկ. 4.13. Եռաշափհ U-ի ջերմային մոդելը.  
 ա-եռաշափհ U-ի պարզեցված  
 և առուժմած թռ. թ-ջերմային մոդելը

Բերված արտահայտության մեջ երկրորդ գումարելիի արժեքը կախված է ըստ մակարդակների բյուրեղների դասավորվածությունից: Առաջին գումարելին ներկայացնում է երկու բազմությունների սկալյար արտադրյալը, որոնցից մեկը բյուրեղների հզորությունների բազմությունն է, իսկ մյուսը՝ բյուրեղներից մինչև ջերմահաղորդիչ հարթակ գումարային ջերմային դիմադրությունը: Ինչպես հայտնի է, այսպիսի սկալյար արտադրյալի նվազագույն արժեքը ստացվում է այն դեպքում, երբ բազմություններից մեկի աճող հաջորդականությունը համապատասխանության մեջ է դրվում մյուս բազմության նվազող հաջորդականությանը [161]:

Ընդհանրացնելով եռաշափհ U-ի ջերմային մոդելը կամայական  $n$  մակարդակների համար՝ ցանկացած  $p$  և  $q$  մակարդակների համար կարող ենք գրել՝

$$\text{էթե } p < q, \text{ ապա } \prod_{j=p-1}^0 R_{yij} \prod_{j=q-1}^0 R_{zij}; i = 1, 2, \dots, n: \quad (4.22)$$

Յետևաբար, համաձայն (4.21)-ի, հաշվի առնելով, որ ընդհանուր դեպքում հնարավոր է նաև տարբեր բյուրեղների հզորությունների հավասարություն,  $\theta$ -ի նվազագույն արժեքը ( $\theta_{min}$ ) կապահովվի հետևյալ պայմանի դեպքում՝

$$P_i \leq P_{i+1}; i = 1, 2, \dots, n \text{ ու } q = q_{min}: \quad (4.23)$$

ԻՍ-երի նախագծման տեսանկյունից (4.23) պայմանը հանգեցնում է կարևոր եզրակացության՝ որ տրված հզորությունների առկայությամբ եռաչափ ԻՍ-ում նվազագույն ջերմաստիճանի ապահովման համար անհրաժեշտ է ըստ մակարդակների այդ բյուրեղները տեղաբաշխել ըստ ջերմացրիչից հեռացվածության հզորությունների նվազման հաջորդականությամբ:

Եռաչափ ԻՍ-երում կարևորվում է նաև տարբեր մակարդակների բյուրեղների միջև էլեկտրական կապերի իրագործման խնդիրը: Այդ նպատակով օգտագործվում են միջանցիկ սիլիկոնային անցումներ, որոնք էլեկտրական կապի հետ համատեղ ծառայում են նաև որպես մակարդակների միջև ջերմահաղորդման միջոց: Այդպիսի անցումների տրամագիծը բավականին մեծ է և, օրինակ, 32 նմ տեխնոլոգիայում այն կարող է կազմել ստանդարտ բջիջների բարձրության 5, ..., 10 պատիկը [162, 163]: Դրանք, զբաղեցնելով բավականին մեծ մակերես, նվազեցնում են բյուրեղի վրա տարրերի տեղաբաշխման և ծրագծման ռեսուրսները:

Եռաչափ ԻՍ-երում ջերմաստիճանի աճին նպաստող հանգամանքները երկուսն են՝ միավոր ծավալում պարունակվող ակտիվ բաղադրիչների աճը և անբավարար ջերմահեռացումը, որոնց պատճառներից մեկը անբավարար ջերմահաղորդականությունն է:



Առաջին տեսակի խնդիրները կարող են լուծվել ցածր էներգասպառմամբ նախագծմամբ, ինչպես նաև բլոկերի և տարրերի տեղաբաշխման փոփոխություններով: Երկրորդ տեսակի խնդիրները՝ ոչ բավարարչերմահեռացումը, պայմանավորված են այն հանգամանքով, որ ԻՍ-ի արտադրության ընթացքում կիրառվող նյութերի մի մասն ունեն շատ ցածր ջերմահաղորդականություն և խոչընդոտում են ջերմության փոխանցմանը: Այդպիսի նյութերից են, օրինակ, էպօքսիդային միացությունները: Նման պայմաններում, նույնիսկ տարրերի հավասարաչափ տեղաբաշխման դեպքում, հետազոտությունները ցույց են տալիս, որ եռաչափ ԻՍ-ի միջուկում ջերմաստիճանը կարող է հասնել 150°C: Այս դեպքում, ինչպես արդեն նշվեց, ջերմահեռացման նպատակով կարող են կիրառվել հատուկ միջանցիկ սիլիկոնային անցումներ, որոնք կիրառվում են ԻՍ-ի իրանից դեպի հովացուցիչ՝ ջերմության տեղափոխման նպատակով [163]:

Միջանցիկ սիլիկոնային անցումների չափերի աճը մի կողմից՝ նպաստում է ջերմահեռացմանը, սակայն մյուս կողմից՝ բարդանում է ծրագծման հնարավորությունը [164]: Միջանցիկ սիլիկոնային անցումները կարող են տեղաբաշխվել բյուրեղի եզրերով կամ մակերեսով, ռեգուլյար կամ խառը ձևով (Նկ . 4.14) [165, 166]:


Միջանցիկ սիլիկոնային անցումների օգտագործման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ սահմանափակումները [167, 168].

- Միջանցիկ սիլիկոնային անցումների չափերը մի քանի կարգով մեծ են տարրերի տեխնոլոգիական չափերից, որը հանգեցնում է բյուրեղի մակերեսի մոտ 10-15% աճի:


• Միջանցիկ սիլիկոնային անցումներն առաջացնում են մեխանիկական և արվածություններ, և անհրաժեշտ է լինում դրանց շրջակայքում պահպանել որոշակի ազատտիրույթներ:

• Միջանցիկ սիլիկոնային անցումները, զբաղեցնելով բավականին մեծ մակերես, նվազեցնում են բյուրեղի վրա տարրերի տեղաբաշխման և ծրագծման հնարավորությանը:

Ասվածից հետևում է, որ եռաչափ ԻՍ-երում, մի կողմից՝ ջերմային դաշտի համահարթեցման նպատակով կարելի է կիրառել ջերմային միջբյուրեղային միացումներ, իսկ մյուս կողմից՝ ցանկալի չէ դրանց քանակի անհարկի ավելացումը միջբյուրեղային էլեկտրական կապերի իրագործման նպատակով: Հետևաբար, նախագծվող համակարգի, առանձին բյուրեղների մասնատման դեպքում, ցանկալի է նվազարկել միջբյուրեղային էլեկտրական կապերի թիվը:



ա) Միջսիլիկոնային անցումներ բ)



տեղաբաշխումը բյուրեղի վրա.  
 ա - տեղաբաշխումը բյուրեղի եզրերում, բ -  
 տեղաբաշխումը բլոկների եզրերում, գ -

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ առաջարկվում է ենթադրել ԽՍ-երի տարրերի տեղաբաշխման հետևյալ ընթացակարգը.

1. համակարգի մասնատումը բյուրեղների, միջբյուրեղային կապերի թվի նվազարկում,
2. բյուրեղների փոխադարձ դասավորության որոշումը՝ ըստ նրանց հզորությունների,
3. տարրերի ներբյուրեղային տեղաբաշխումը՝ ջերմային դաշտի համահարթեցման պայմանով:

Առաջին խնդրի լուծումը կատարվում է մասնատման հաջորդական ալգորիթմի կիրառմամբ [157, 158]: Որպես որակի չափանիշ հանդես է գալիս միջբյուրեղային կապերի թվի նվազարկումը՝ բյուրեղի մակերեսի տրված սահմանափակմամբ.

$$F = \sum_{i=1}^k \sum_{\substack{j=1; \\ i \neq j}}^k r_{ij} \rightarrow \min, \sum_{i \in v_j} S_i(v_j) \leq \frac{S_{\Sigma}}{k} \cup S_{\max}; j=1,2,\dots,k, \quad (4.24)$$

որտեղ  $r_{ij}$ -ն հորդ և հորդ բյուրեղների միջև կապերի թիվն է;  $k$ -ն՝ բյուրեղների քանակը,  $v_j$ -ն՝ հորդ բյուրեղի տարրերի բազմությունը;  $S_i(v_j)$ -ը՝ հորդ բյուրեղի հորդ տարրի մակերեսը;  $S_{\max}$ -ը՝ սխեմայի ամենամեծ տարրի մակերեսը,  $S_{\Sigma}$ -ն՝ սխեմայի տարրերի գումարային մակերեսը:

Մասնատման հաջորդական ալգորիթմը հիմնված է հետևյալ ընթացակարգի ռեկուրսիվ կրկնություն վրա: Որպես հերթական ձևավորվող մասի հերթական հորդ տարր ընտրվում է այն տարրը, որն ունի հավանորդության ֆունկցիայի ( $\beta$ ) նվազագույն արժեք: Այն որոշվում է դեռևս չմասնատված ( $E_{\alpha\beta}$ ) և արդեն մասնատված ( $E_{\alpha\omega}$ ) տարրերի հետ տվյալ տարրի կապերի տարբերությամբ՝

$$b_i = \min_{i \in E_{\alpha\beta}} \left( \sum_{j \in E_{\alpha\beta}} r_{ij} \right) - \min_{j \in E_{\alpha\omega}} \left( \sum_{i \in E_{\alpha\omega}} r_{ij} \right), \quad (4.25)$$

որտեղ  $E_{\text{շ}}^{\text{ը}}$  և  $E_{\text{մաս}}$ -ը տվյալ քայլում դեռևս չմասնատված և արդեն մասնատված տարրերի բազմություններն են:

Երկրորդ խնդրի լուծումը հանգում է (4.23) պայմանի կատարմանը:


Երրորդ խնդրի համար առաջակվում է 4.3. ենթագլխում ներկայացված տեղաբաշխման հաջորդական ալգորիթմը: Որպես տեղաբաշխման չափանիշ հանդես է գալիս 4.4 բաժնում ներկայացված ջերմային ռեժիմի հաշվառմամբ բազմապարամետրական նախնական տեղաբաշխման (4.19) չափանիշը [157, 158]:

Եռաչափ ԻՍ-երում տեղաբաշխման խնդրի լուծման առաջարկվող ընթացակարգը հիմնված է ներկայումս բավականին լավ մշակված երկչափ ԻՍ-երի տեղաբաշխման մոդելի եռաչափ փոխարկման վրա: Այդպիսի փոխարկման առաջարկվող ընթացակարգը բերված է նկ. 4.15-ում:

Հիմնվելով առաջարկվող ընթացակարգի վրա՝ իրագործվել է եռաչափ ԻՍ-երում տարրերի տեղաբաշխման ալգորիթմ, որի աշխատանքը ներկայացնենք a28 պայմանական անվանումով թեստային սխեմայի օրինակով, որի Verilog նկարագիրը բերված է նկ. 2.15-ում:

Առաջարկված ընթացակարգի առաջին խնդրի լուծման նպատակով իրագործված է մասնատման հաջորդական ալգորիթմի մոդիֆիկացված տարբերակ, որը բյուրեղների միջև կապվածության նվազարկման դեպքում ապահովում է առանձին բյուրեղների համար մակերեսային սահմանափակումները:

Մասնատման ալգորիթմը հիմնված է (4.24) որակի խնդրի լուծման և սահմանափակումների հսկման վրա, իսկ



ալ գործիք մի և նթացակարգը՝ (4.25) պայմանի ռեկոնստրուկցիայի կրկնակցական վրա:


Սխեմայի հարևանական մատրիցը, մասնատման ալգորիթմի իրականացման քայլերի հաշվարկով,

-	A											B												
	C <sub>0</sub>	C <sub>2</sub>	C <sub>4</sub>	C <sub>1</sub>	C <sub>5</sub>	C <sub>9</sub>	C <sub>10</sub>	C <sub>6</sub>	C <sub>7</sub>	C <sub>3</sub>	C <sub>8</sub>													
0	0	0	1	0	1	0	0	0	0	0	0	2	$\beta_0$	$\beta_1$	$\beta_2$	$\beta_3$	$\beta_4$	$\beta_5$	$\beta_6$	$\beta_7$	$\beta_8$	$\beta_9$	$\beta_{10}$	$\beta_{11}$
0	0	0	1	0	1	0	0	0	0	0	0	2	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x
1	0	0	0	1	1	1	1	0	0	0	0	4	4	4	2	x	x	x	x	x	x	x	x	x
2	1	0	0	0	1	0	1	1	0	0	0	4	2	x	x	x	x	x	x	x	x	x	x	x
3	0	1	0	0	0	0	1	1	1	0	0	4	4	4	4	2	2	2	2	0	-2	x	x	x
4	1	1	1	0	0	1	0	0	0	1	0	5	3	1	x	x	x	x	x	x	x	x	x	x
5	0	1	0	0	1	0	0	0	0	1	1	4	4	4	2	0	x	x	x	x	x	x	x	x
6	0	1	1	1	0	0	0	1	0	0	1	5	5	3	3	1	1	1	-1	x	x	x	x	x
7	0	0	1	1	0	0	1	0	1	0	1	5	5	3	3	3	3	3	1	-1	x	x	x	x
8	0	0	0	1	0	0	0	1	0	1	0	3	3	3	3	3	3	1	1	1	-1	-3	x	x
9	0	0	0	0	1	1	0	0	1	0	1	4	4	4	2	2	0	x	x	x	x	x	x	x
10	0	0	0	0	0	1	1	1	0	1	0	4	4	4	4	4	2	0	x	x	x	x	x	x

Նկ. 4.16. a28 թեստային սխեմայի հարևանական մատրիցը՝ մասնատման հաշվարկով

բերված է նկ. 4.16-ում:

Մասնատման արդյունքում ստացվել են A(e<sub>0</sub>, e<sub>1</sub>, e<sub>2</sub>, e<sub>4</sub>, e<sub>5</sub>, e<sub>9</sub>) և B(e<sub>3</sub>, e<sub>6</sub>, e<sub>7</sub>, e<sub>8</sub>, e<sub>10</sub>) խմբերը: Թեստային սխեման և խմբերի բաժանումը բերված է նկ. 4.17-ում:



Մասնատված խմբերի միջև կապերի թիվը 4 է, որը հնարավոր նվազագույնն է:

Առաջարկված ընթացակարգի երկրորդ խնդրի լուծումը հիմնված է (4.23) պայմանի կատարման վրա, ինչը ենթադրում է սխեմայի մասնատված մասերին համապատասխանող բյուրեղների ուղղահայաց տեղաբաշխում՝ ըստ շերտացրիչից դրանց հեռացված ության հզորությունների նվազման: Սխեմայի մասնատված մասերի հզորությունները կարելի է գնահատել դրանցում առկա տրամաբանական տարրերի հզորությունների գումարով: Եթե որպես տրամաբանական տարրային հիմք է ծառայում թվային ստանդարտ բջիջների գրադարանը, ապա, որպես կանոն, դրանցում տրվում են ինչպես տվյալ գրադարանի

*Նկ. 4.17. a28 թե ստային սխեման՝ մասնատված A և B խմբերի նշումով*

աշխատանքային հաճախականությունը, այնպես էլ յուրաքանչյուր տրամաբանական բջջի սպառող ստատիկ հզորությունն ու տեսակարար դինամիկ հզորությունը [170]: Այս դեպքում սխեմայի հզորությունը կարելի է գնահատել հետևյալ բանաձևով՝

$$P = \sum_{j=1}^n (P_{iNn} \cdot K_{iq} \omega + P_{inn}), \quad (4.26)$$

որտեղ  $P_{iNn}$ -ը՝ հրդ բջջի տեսակարար դինամիկ հզորությունն է,  $K_{iq}$ -ն՝ բջջի փոխանցատունների ակտիվությունը,  $\omega$ -ն՝ տվյալ գրադարանի աշխատանքային հաճախականությունը,  $P_{inn}$ -ը՝ հրդ բջջի ստատիկ հզորությունը:

Դիտարկվող օրինակում, որպես տարրային հենք, օգտագործվել է Սինոփսիս Արմենիա ՓԲԸ ուսումնական դեպարտամենտում մշակված SAED32/28nm թվային ստանդարտ բջիջների գրադարանը [171]:

Ամասի գոլմարային հզորությունն է 14,1 ՆՎտ, իսկ B մասինը՝ 6,1 ՆՎտ: Յետևաբար, համաձայն (4.23) պայմանի, A մասը կտեղաբաշխվի ջերմացրիչին ավելի մոտ:

Երրորդ խնդրի լուծման համար, ընդհանուր դեպքում, առաջակվում է տարրերի ներբյուրեղային բազմապարամետրական երկչափ տեղաբաշխում, ինչը կարելի է իրագործել (4.17) չափանիշի կիրառմամբ հաջորդական տեղաբաշխման ավգորիթմով: Դիտարկվող օրինակում կիրառվել է ջերմային դաշտի համահարթեցման (4.15) պայմանը, որը (4.17) չափանիշի մասնավոր դեպքն է, երբ  $a_2=1, a_1=a_2=0$ :

Չզորությունների տարբերությունների բացարձակ արժեքների մատրիցը նորմավորումից հետո և շարային տեղաբաշխման հաշվարկը A(0-2-4-1-5-9) խմբի համար բերված ինչև .4.18-ում:

-	0	1	2	4	5	9		2	5	1	0	9	4
0	0	0.817837	0.789	0.7931	0.65	1	4.046	2.467473	1.176	-0.46	x	x	x
1	0.81784	0	0.029	0.02474	0.17	0.1822	1.226	1.16823	0.824	x	x	x	x
2	0.78914	0.028696	0	0.00396	0.14	0.2109	1.176	x	x	x	x	x	x
4	0.7931	0.024735	0.004	0	0.15	0.2069	1.176	1.16823	0.873	0.824	-0.7623	-1.1762	x
5	0.64566	0.172176	0.143	0.14744	0	0.3544	1.463	1.176151	x	x	x	x	x
9	1.00001	0.182177	0.211	0.20691	0.35	0	1.954	1.532583	0.824	0.46	-1.5405	x	x

Նկ. 4.18. Չզորությունների մատրիցը նորմավորումից հետո և գծային տեղաբաշխումը A(0-2-4-1-5-9) խմբի համար

Այսպիսով, A մասի տարրերի տեղաբաշխման հաջորդականությունն է 2-5-1-0-9-4:

Չզորությունների մատրիցը նորմավորումից հետո և շարային տեղաբաշխումը B(10-6-7-3-8) խմբի համար բերված են ինչև .4.19-ում:


-	3	6	7	8	10		3	7	10	8	6
3	0	0.017104	0.025	0.07	0.496	0.606	x	x	x	x	x
6	0.02	0	0.042	0.05	0.513	0.623	0.588877	0.505	-0.522	-0.6231	x
7	0.03	0	0	0.09	0.471	0.589	0.538709	x	x	x	x
8	0.07	0.050295	0.092	0	0.564	0.774	0.639171	0.454	-0.673	x	x
10	0.5	0.513498	0.471	0.56	0	2.045	1.052208	0.11	x	x	x

Նկ. 4.19. Չզորությունների մատրիցը նորմավորումից հետո և գծային


Այս պիտուվ, B մասի տարրերի տեղաբաշխման հաշորդական ությունն է 3-7-10-8-6:

Ստացված շարային տեղաբաշխումների ցկատարված է անցում երկչափ տեղաբաշխման՝ համաձայն 3.2 բաժնում բերված մեթոդաբանության, որի արդյունքները՝ եռաչափ ԻՍ-ի սխեմատիկ պատկերի տեսքով, բերված են նկ. 4.20-ում:

Վերը շարադրված մոտեցման հիման վրա մշակվել է ԻՍ-երի տարրերի շերմային տեղաբաշխման համապատասխան ծրագրային միջոց, որը փորձարկվել է ISCAS 85 շարքի թեստային սխեմաների վրա՝ (4.17) չափանիշի  $a_1$  և  $a_2$  քաջային գործակիցների տարբերարժեքների դեպքում [156, 157]: Ծրագրի աշխատանքային պատուհանը բերված է նկ. 4.21-ում:



Նկ. 4.20.  $a_{28}$  թեստային սխեմայի եռաչափ տեղաբաշխման սխեմատիկական պատկերը



1. մուտքային Verilog\$-ը, 2. ելքային \$այլի հասցեն, 3. մակարդակների թիվը, 4. արտապատկերվող մակարդակի համարը, 5.

Նկ. 4.21. Տեղաբաշխման ծրագրի տվյալները



Այնուհանդերձ նախագծողին հարմարեցված ինտերֆեյս, որը հնարավորություն է տալիս ստանալ և արտապատկերել յուրաքանչյուր մակարդակի բյուրեղի վրա տարրերի տեղաբաշխումը: Ծրագրի համար որպես մուտք ծառայում է սխեմայի Verilog նկարագիրը և որպես տարրային հենք՝ օգտագործվող ստանդարտ գրադարանային բջիջների և հզորությունների արժեքները: ԻՍ-ի մակարդակների թիվը ներմուծվում է նախագծողի կողմից:

Որպես տարրային հենք օգտագործվել է Սինոփսիս Արմենիա ՓԲԸ ուսումնական դեպարտամենտում մշակված SAED32/28nm թվային ստանդարտ բջիջների գրադարանը [171]:

Որպես օրինակ, նկ. 4.21-ում ներկայացված է 98 տարր պարունակող C499 - ISCAS-85 թեստային սխեմայի եռամակարդակ տեղաբաշխման 2-րդ մակարդակի տեղաբաշխումը, որը պարունակում է 31 բջիջ:

Դիտարկված բոլոր սխեմաները մասնատվել են երեքական մասերի՝ բջիջների մոտավորապես հավասար գումարային մակերեսներով: Յուրաքանչյուր հարթակի համար իրագործվել է 4.3 ենթագլխում նկարագրված տեղաբաշխման հաջորդական ալգորիթմը, (4.17) ընդհանրացված չափանիշի օգտագործմամբ, ինչը թույլ է տալիս հաշվի առնել ինչպես տարրերի էլեկտրական կապվածությունը, այնպես էլ ԻՍ-ի շերմային ռեժիմը:

Հզորությունների տոպոլոգիական բաշխման որակի գնահատումը կատարվել է ԻՍ-ի բյուրեղի լոկալ շերմային տեղամասերի առավելագույն և նվազագույն հզորությունների տարբերությամբ: Ակնհայտ է, որ որքան փոքր է այդ տարբերությունը, այնքան ավելի մեծ է հզորությունների տեղաբաշխման համահարթեցումը: Լոկալ շերմային տեղամասերի չափսերի ընտրությունը կատարվել է՝

հիմնվելով ջերմափոխանակության տեղային ազդեցության սկզբունքի վրա: Յամաձայն դրա՝ ջերմային դաշտի ցանկացած տեղային գրգռումը ջերմափոխանակության տեսակետից հանդիսանում է տեղային և թույլ է ազդում դաշտի հեռավոր կետերի վրա:

Յետազոտության ներքին գույք են տվել, որ ստանդարտ բջիջների տեղաբաշխման դեպքում և կալ ջերմային տեղամասերի չափսերը կարելի է վերցնել 4-ական հարևան տարրերից կազմված տեղամասերի չափով [169]:

Եթե դիտարկվող տեղաբաշխումը կազմված է  $m$  հատկապես ջերմային տեղամասերից, ապա որևէ  $i$ -րդ տեղամասում ( $L_i$ ) տեղաբաշխված տարրերի տեսակարար հզորությանը գնահատվում է հետևյալ կերպ՝

$$K_{L_i} = \left( \frac{\sum_{i \in L_i} P_i}{\sum_{i \in L_i} S_i} \right); i = 1, 2, \dots, m: \quad (4.27)$$

Տեղաբաշխման ընդհանուր որակը հզորության ներքին համահարթեցման տեսանկյունից գնահատվի հետևյալ կերպ՝

$$K_L = \left( \frac{\max K_{L_i} - \min K_{L_i}}{\max K_{L_i}} \right) 100\%; i = 1, 2, \dots, m: \quad (4.28)$$

Տարբեր թեստային սխեմաների համար տեղաբաշխման որակի համեմատական արդյունքները ներկայացված են աղ. 4.2-ում:

Տեղաբաշխման ընդհանուր որակը հզորության ներքին համահարթեցման տեսանկյունից հաշվարկված է (4.29) բանաձևով տեղաբաշխման յուրաքանչյուր մակարդակի համար, այնուհետև միջինացված է տվյալ սխեմայի բոլոր 3 մակարդակների համար:

Թեստային սխեմաների տարրերի տեղաբաշխման

Սխեմայի նշանակումը		C499	C3540	C5315
Բջիջների քանակը		202	1669	2307
Նսնահանրացված որակը, ըստ հզորություն	$a_1 = 1;$ $a_2 = 0$	0.45	0.22	0.25
	$a_1 = 0;$ $a_2 = 1$	0.14	0.09	0.12
	$a_1 = 0.5;$ $a_2 = 0.5$	0.26	0.13	0.16
Միջմիջոցները գումարային երկարությունը, մկմ	$a_1 = 1;$ $a_2 = 0$	4731	52134	152429
	$a_1 = 0;$ $a_2 = 1$	2089	28475	74638
	$a_1 = 0.5;$ $a_2 = 0.5$	2488	31462	78428

համեմատական տվյալները

Լոկալ ջերմային տեղամասերի չափսերը վերցված են տեղաբաշխված 4 հարևան բջիջներին համապատասխան: Միջմիջոցների գումարային

Երկար ու թյունը գնահատված է կիսապարագծային մոդելով:

Ինչպես երևում է աղյուսակից, քաշի գործակիցներն  $a_1 = a_2 = 0.5$  արժեքներին դեպքում, համեմատած առանց հզոր ու թյուն ներքին հաշվի առնող ( $a_1 = 0; a_2 = 1$ ) տարբերակի հետ, հզոր ու թյուն ներքին համահարթեցման  $K_L$  գործակից արժեքը մեծանում է 33 – 85%-ով, իսկ միջմիացումներին գումարային երկար ու թյունը, համեմատած առանց միջմիացումները հաշվի առնող ( $a_1 = 0; a_2 = 1$ ) տարբերակի հետ, նվազում է 40 – 50%-ով:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրակացնել.

- Առաջարկվել են եռաչափ ԻՍ-երի տարրերի տեղաբաշխման բազմապարամետրական մեթոդ և ծրագրային միջոց, հիմնված երկչափ տեղաբաշխման հայտնի մեթոդների փոխակերպման վրա, որոնք իրագործվել և փորձակվել են թեստային սխեմաների օրինակով:
- Առաջարկված մեթոդի փորձարկումները ցույց են տվել դրա բարձր արդյունավետ ու թյունը ինչպես եռաչափ կառուցվածքի միջբյուրեղային էլեկտրական կապվածության նվազարկման, այնպես էլ ներբյուրեղային ջերմային դաշտի տոպոլոգիական համահարթեցման տեսանկյուններին:

### **Եզրակացում ու թյուններ**

1. Հիմնավորված է, որ ԻՍ-երի հոսալի ու թյան բարձրացման արդյունավետ ճանապարհ կարող է լինել, տարրերի տեղաբաշխման փոփոխում ջերմաստիճաններին տոպոլոգիական բաշխված ու թյան համահարթեցման ապահովումը, ինչը հանգեցնում է կիսահաղորդչային բյուրեղի

վրա ջերմային գրադիենտի փոքրացմանը, որը, իր հերթին, ապահովում է հոլսալիոլթյան տեսակետից առավել վտանգավոր և ոկալ բարձր ջերմային տեղամասերում ջերմաստիճանների իջեցումը և ջերմային հոլսալիոլթյան բարձրացումը:

2. Մշակված և տեսականորեն հիմնավորված է ԻՍ-երի տարրերի նախնական ջերմային տեղաբաշխման նոր չափանիշ, որի հիմքում ընկած է տարրերի միջոցով ցրվող հզորությունների հավասարաչափ տոպոլոգիական բաշխումը:

3. Հիմնվելով մշակված չափանիշի մաթեմատիկական հարմար տեսքի վրա՝ առաջարկվել են ԻՍ-երի տարրերի տեղաբաշխման ընդհանրացված չափանիշ և դրավրա հիմնված տեղաբաշխման մեթոդ, որոնք, ի տարբերություն ներկայումս գոյություն ունեցող ջերմային տեղաբաշխման մեթոդների, ջերմային ռեժիմի հետ միաժամանակ հաշվի են առնում նաև տարրերի էլեկտրական կապվածությունը:

4. Առաջարկվել են ԻՍ-երի տարրերի բազմապարամետրական նախնական տեղաբաշխման չափանիշ և դրա կիրառման վրա հիմնված տեղաբաշխման հաջորդական ալգորիթմ, որոնք թույլ են տալիս տարրերի էլեկտրական կապվածության հետ միաժամանակ հաշվի առնել սխեմայի արագագործությունը և ջերմային ռեժիմը, ապահովում է սխեմայի արագագործության և ջերմային ռեժիմի 20-ից 35 % բարելավում՝ միջմիացումների գումարային երկարության ոչավելի, քան 20% աճի պայմաններում:

5. Առաջարկված մեթոդի արդյունավետությունը ցույց է տրված թեստային սխեմայի տարրերի բազմապարամետրական տեղաբաշխման օրինակով, որի արդյունքում տեղաբաշխման  $f_{\text{տ}}$  պարամետրի որակական 21%-ով վատթարացումը հանգեցրել է

մնացած  $f_2$  և  $f_3$  պարամետրերի համապատասխանաբար 31% և 21% որակական բարելավմանը :

6. Առաջարկվել են եռաչափ ԻՍ-երի տարրերի տեղաբաշխման բազմապարամետրական մեթոդ և ծրագրային միջոց՝ հիմնված երկչափ տեղաբաշխման հայտնի մեթոդների փոխակերպման վրա, որոնք իրագործվել և փորձակվել են թեստային սխեմաների օրինակով : Առաջարկված մեթոդի փորձարկումները ցույց են տվել դրա բարձր արդյունավետությունը ինչպես եռաչափ կառուցվածքի միջբյուրեղային էլեկտրական կապվածության նվազարկման, այնպես էլ ներբյուրեղների ջերմային դաշտի տոպոլոգիական համահարթեցման տեսանկյուններից՝ 33 – 85% -ով և միջմիացումների գումարային երկարության նվազարկման տեսանկյուններից՝ 40 – 50% -ով :

**Գ Լ Ո Ւ Խ 5. Ի Ն Տ Ե Գ Ր Ա Լ Ս Խ Ե Մ Ա Ն Ե Ր Ի  
Է Ն Ե Ր Գ Ա Ս Պ Ա Ռ Մ Ա Ն Ե Վ Ջ Ե Ր Մ Ա Ս Տ Ի Ճ Ա Ն Ն Ե Ր Ի  
Տ Ո Պ Ո Լ Ո Գ Ի Ա Կ Ա Ն Բ Ա Շ Խ Մ Ա Ն Գ Ր Ա Ֆ Ի Կ Ա Կ Ա Ն  
Ի Ն Տ Ե Ր Ֆ Ե Յ Ս Ի Մ Շ Ա Կ Ո Ւ Մ Ը Ե Վ  
Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Ո Ւ Մ Ը Ն Ա Խ Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ա Բ Ա Շ Խ Մ Ա Ն  
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ**

**5.1. Տեղաբաշխման դաշտի ջերմային  
մոդելավորման մեթոդների ակնարկ**

Ջերմափոխանակության տեսությունը, ընդհանուր առմամբ, և նադիր էլեկտրոնային

սարքերի ջերմային մոդելավորման հարցերը, մասնավորապես, ներկայումս բավականին լավ ուսումնասիրված են: Վերջին տարիներին կատարվել են մեծ ծավալի գիտական հետազոտություններ ԻՍԵՐԻ ջերմային մոդելավորման բնագավառում [149, 172-178]: Ջերմափոխանակության տեսական հարցերի ներկայացումը դուրս է այս ատենախոսության սահմաններից: Ստորև ներկայացված է ջերմային մոդելավորման մեթոդների հակիրճ ակնարկ՝ առանց խորանալու դրանց տեսական հարցերի մեջ:

